

ԷՋՄՐԱԾԻՆ



1964

ՌՆԺԳ

Ի Ա Տ Ա Ր Ի


Յոնիս


ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Զ

1964





Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— «Էջմիածին» ամսագրի բաժնի առաջին	5
Հնգյակառանի վարչապետ Լուիս Վահագնյանի Ջավառապալ Լեռնի մանկան արքիվ փոխանակված հետազոտ	8
Երջանկաճիչատակ Տ. Տ. Գևորգ Ջ Կարաղիկոսի մանկան 10-րդ տարեկիցի հանդիսությունները Մայր Աթոռում	8
Մ Ա Յ Ր Ա Ք Ո Ռ Ո Ւ Մ	12
Մայրաքույր վարդապետության իշխանության ավարտություն	14
Զ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Պալես և իր գիրք	10
Խ. ԿԱՆԱԿԱՆ— Իմ հույսերը Գևորգյան հեմարանից	28
Փ. ՇԻՐՄԱԶԱՆՑԱՆ	
Տղամուտությունների երգու մտայան	37
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ	
Ա. ՔՈՂԱՆՋՅԱՆ— Պրոֆ.-գոպա. Վլադ Բրեքցեհանուն և նրա հայապիտանեան աշխատությունները	51
ՉԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՅՐԱԳՈՒՆՆ ԿԱՐԿԱՊԵՏ ՄՈՒՇՅԱՆ— Հայրապետի կառք	58
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԻՆԻՔԻՑ	81

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ, ԷՋՄԻԱԾԻՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Redaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1964 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ
ՎԵՂՈՒՄ ԵՒ ՍՐԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն Մ Ր Ա Գ Ր Ա Կ Ա Ն

«Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն» Ա Մ Ս Ա Գ Ր Ի Զ Ս Ա Ն Տ Ա Ր Ի Ն

Լրացավ Մայր Աթոռի պաշտոնաթերթը «Էջմիածին» ամսագրի հրատարակության 20 տարին:

1944 թվականի հունվարին, ազգընտիր տեղակալ ամենապատիվ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի նախաձեռնությամբ և հրամանով, սկսում է հրատարակվել Ամենայն Հայոց Հայրապետության նոր պաշտոնաթերթը:

«Էջմիածին» ամսագիրը հանդիսացավ նախկինում հրատարակվող Մայր Աթոռի առաջին պաշտոնաթերթը «Արարատ» ամսագրի շարունակությունը, նոր պայմաններում և նոր բովանդակությամբ:

Ազգընտիր տեղակալը, «Էջմիածին» ամսագրի 1944 թվականի առաջին համարում, Մայր Աթոռի պաշտոնաթերթի հրատարակության առթիվ, «Հայ Եկեղեցու պարտքը իր ժողովրդի հանդեպ» առաջնորդող հոդվածում գրում էր. «Հայրապետական ամսագիրը հանդիսանում է այն միջոցը, որը պետք է համախմբի Սփյուռքի բոլոր հայերին իրենց սրբազան հայրենիքի շուրջը, Մայր Աթոռի շուրջը: Հայությանն ուղղված մեր կոչի մեջ ասել ենք. «Հայը բացի Սովետական Հայաստանից, չունի այլ հայրենիք: Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կոման, բայց եթե Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով: Այս պատգամով հրապարակ է գալիս հայրապետական ամսագիրը, նույն այդ պատգամով նա կշարունակի իր գոյությունը և հետագայում»:

«Էջմիածին» ամսագրի հիմնական խնդիրն էր միաժամանակ Ամենայն Հայոց Հայրապետ

կենդանի, առաջնորդող խոսքը հանդիսանալ, հոգևոր սնունդ, քրիստոնեական հայեցի դաստիարակություն տալ հայ հավատացյալներին, կապ պահպանել Մայր Աթոռի և մեր նվիրապետական կենտրոնների, ազգային-եկեղեցական թեմերի միջև, արձագանքել հայ և միջազգային կյանքում մեր Եկեղեցու և մեր ժողովրդի համար կարևորություն ունեցող իրադարձություններին, վարձացնել և խորացնել հայ աստվածաբանական, եկեղեցապատմական գիտությունը, հրատարակել մեզ հին մատենագրության վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ, մատենագրական նորություններ:

«Էջմիածին» ամսագրի կարևոր խնդիրն էր նաև արձագանքել Մայր Աթոռի և մեր ներքին թեմերի հոգևոր-եկեղեցական կյանքին և գործունեության, և ի մասնավորի վերածնված հայ ժողովրդի հոգևոր, իմացական, բարոյական և գիտական նվաճումներին, հայրենի հողի վրա, արվեստի, գրականության բնագավառներում:

Ամսագիրը արձագանքելու էր նաև համաժողովային բնույթ կրող կարևորագույն հարցերի, ինչպիսիք են խաղաղության պաշտպանություն, եկեղեցիների միության, ազգերի և ժողովուրդների համագործակցության, զինաթափման և խաղաղ գոյակցության հարցերը, դիտված քրիստոնեական Եկեղեցու դիրքերից և սկզբունքներից:

«Էջմիածին» ամսագրի հրատարակությունը հրճվանքով և երախտագիտությամբ ողջունվեց հայ հավատացյալ ժողովրդի կողմից:

Ամսագիրը պատվով և սրբությամբ կատարեց իր առաջ դրված խնդիրները: Նրա էջերից միշտ հնչեցին քրիստոնեական վեճ իդեալների, հա-

վատի, սիրո և եղբայրության, եկեղեցասիրության, ճշմարիտ հայրենասիրության, ինչպես նաև համամարդկային գաղափարների, խաղաղության, ժողովուրդների համերաշխության, մարդասիրության սրբազան քարոզներն ու պատգամները:

Այս տեսակետից «Էջմիածին» ամսագիրը Գևորգ Ջ Կաթողիկոսի մտքերի, խոհերի, պաշտօնունքների, ծրագրերի և իղձերի ոսկյա ֆոնդն է հանդիսանում:

Ռժբախտաբար, այսօր աղքատ է մեր արդի եկեղեցական մատենագրությունը: Մեր այժմյան ազգային-եկեղեցական մատենագրության մեջ և հայ հոգևոր կյանքի շինության համար բավարուր չէ մեր կրոնական դպրության պարզացումն ու հրատարակությունը: Անցյալում կրոնական դպրության սեփական մատենագրության ամենատարածված և մշակված ժանրն է հանդիսացել:

Աղքատ են այսօր մեր կրոնական մամուլն ու դպրությունը:

«Էջմիածին», «Աիոն», «Հասկ», «Շողակաթ», «Հայաստանյայց Եկեղեցի», «Հայ կեդրոն» իրենց համեստ լույսն են մուծում հայ ժողովրդի կրոնական, ազգային-եկեղեցական դաստիարակության սրբազան գործում, բայց մեծ է կարիքը: Սակավ և անբավարար են նաև կրոնաբույր, լուրջ հրատարակություններ՝ քարոզգիրք, ճառ, կրոնական ուսումնասիրություններ, սուրբգրական մեկնություններ, ներբողներ: Հայ հավատացյալ ժողովուրդը հավատի, առաքինության, հայրենասիրության, մարդասիրության կենդանի խոսք է սպասում իր Եկեղեցուց և իր հոգևոր ղեկավարությունից:

Վաչագեն Ա Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին իսկ օրերից, Նրա ուշադրության կենտրոնում է եղել «Էջմիածին» ամսագրի էլ՝ ավելի կանոնավոր և բովանդակալից հրատարակության մտածումը:

Նորին Ս. Օծույան անմիջական հսկողության ներքո, վերակազմվեց «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը: Ավելացավ ամսագրի տպաքանակը: Եթե 1951 թվականին ամսագիրը լույս էր տեսնում 2 000 օրինակ տպաքանակով, ապա 1958 թվականից սկսած, այն հրատարակվում է 3 500 տպաքանակով:

Վեհափառ Հայրապետի հրահանգով, խմբագրությունը դարձավ մի տեսակ Մայր Աթոռի հրատարակչականը: Վերջին տարիներին, խմբագրությունը հրատարակեց Վեհափառ Հայրապետի 1956 թվականի ուղևորության նվիրված առաջին հատորը, ապա, 1958 թվականին, Նորին Ս. Օծույան հիսնամյա հոբելյանին ձոնված «Վաչագեն Ա Հայրապետ Հայոց» հատորը, 1962 թվականին՝ ուղևորության երկրորդ գիրքը և «Էջմիածին» այլոմը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, այնուհետև Թուրքիա, Ս. Երկիր,

Հնդկաստան կատարված հովվապետական այգելությունների հուշամատյանները:

Ամեն տարի խմբագրությունն է հրատարակում Մայր Աթոռի օրացույցը:

«Էջմիածին» ամսագրին իրենց օգտակար և ցանկալի աշխատակցությունն են բերել թե՛ Մայր Հայրենիքի և թե՛ Սփյուռքի ակնամարտ հոգևորականներն ու մտավորականները:

1962 թվականի հոկտեմբերի 1-ին Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովի ժամանակ, Իր 8-ամյա գործունեության նվիրված պեկուցագրում, Վեհափառ Հայրապետը գովում էր հետևյալը.

«Մեր ամսագրի խմբագրության առաջ Մենք խնդիր դրած ենք հոգևոր սնունդ և ազգային ճշմարիտ գիտակցություն տալ Ձայ ժողովուրդին, պատկերել Մայր Աթոռի և միաբանության ու Հոգևոր ճեմարանի կյանքը իր բոլոր երեսներով, լայն կերպով արձագանքել ներքին թեմերու և Սփյուռքի ազգային-եկեղեցական կյանքին, և միաժամանակ իր էջերը լայն բանալ մեր եկեղեցվո պատմության, եկեղեցական մատենագրության, աստվածաբանության և եկեղեցական արվեստի հետ աղերս ունեցող հողվածներու և ուսումնասիրություններու:»

Մեր իղձն է, որ Մայր Աթոռի պաշտոնաթերթը հետզհետե առավել չափով դառնա հայ աստվածաբանական մտքի պարզացման, եկեղեցագիտության և ավետարանական բարոյախոսության հանդեսը:

Խմբագրության համար հույժ ցանկալի և քաղցր է սպասել, որ մեր պարզացած հոգևորականությունը դրականորեն արձագանքի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այս հրատապ կոչին և իր ողջունելի մասնակցությունը բերի «Էջմիածին» ամսագրի աշխատանքներին՝ Հայ Եկեղեցու մատենագրության, աստվածաբանության, եկեղեցական արվեստի վերաբերյալ լուրջ և արժեքավոր ուսումնասիրություններով:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ընթացել է և ընթանում է Իր Վեհափառ խմբագրապետի գծած ճանապարհով:

Այս է պատճառը, որ ամսագիրը, մասնավոր վերջին տարիներին, իր կրոնական, եկեղեցագիտական, պատմական, հայագիտական, բանասիրական արժեքավոր հողվածների բովանդակությամբ առաջին տեղերից մեկն է գրավում այսօր մեր եկեղեցական մամուլի անդամաւանում, արժանանալով Նորին Ս. Օծույան օրինության, ինչպես նաև մեր բազմամսակար ընթերցաներ հասարակության գնահատության և անկեղծ քաջալերանքին:

«Էջմիածին» ամսագրի բավամասպար ընթերցողների մտածումների և պաշտօնունքների հարապատ թարգմանն է հանդիսանում Կալիֆոռնիայից հայտնի գրագետ Վահե Հայկը, երգրում է հետևյալը.

«Ամենայն Հայոց Հայրապետական դարավոր Աթոռի այս պաշտոնական ամսագիրը՝ «Էջմիածին», իր բարձր կոչումին և առաքելության համապատասխան բովանդակությամբ կիրատարակվի ամեն ամիս կանոնավորապես և խնամյալ ձրագրով:

Անիկա ունի գլխավորապես եկեղեցական, մշակութային, պատմական և բանասիրական ուղղություն և այլպան և հյութեղ պարունակություն: Կարձանագրե նաև իր լայն շրջապատի կրթական և իմացական շարժումներուն և գործունեությանց սյատկերները այնպիսի գեղեցիկ դասավորությամբ մը, որ ցույց կուտա, թե հանդեսին խմբագրությունը ունի և կտածե որոշ հոգածություն, արտաքին աշխարհի հայությունը տեղյակ և իրավեկ պահելու թե՛ մեր վերածնած հայրենիքի և թե՛ Հայրապետական Աթոռի հոգեկան և մտավորական գործունեության շուրջ:

Որևէ հայ տուն կամ հայ անհատ, որ մեր գեղեցիկ Հայաստանի և Առաքելական Եկեղեցվորթոսուները կզգա իր ներսիդին, այս մեծարժեք ամսագրին մեջ պիտի գտնե մեր նախախայրերու անայլայլ հոգին, անոնց տևականորեն ապրող սրտին բարախումները, որոնք անջիջանելի լուսավորի մը նման կբերեն տաքություն և ճառագայթ, կպայծառացնեն մեր պապենական երապը և այս հյուրընկալ երկիրներուն մեջ ցրիվ

եկած հայ տնակներուն կուտան ապրելու հավատք և կամք:

«Էջմիածին»-ը կհասնի մեզի շատ սիրելի այցելուի մը նման... կուզա պարզարեչու համար մեր մյտքն ու հոգին, մեր տունն ու գրադարանը և մեր մտածման օրերն ու ժամերը: Զիչ հետո կըլլա հաղորդություն և շունչ, կսնուցանե զմեզ և հայ լեզվին և հորենական զգացումներուն կարտոով լեցված մեր էությունը կառաջնորդե դեպի մեր հոգիներուն ճշմարիտ բնագավառը՝ Հայաստան:

«Էջմիածին»-ը նաև զանգակատունն է սիրո և խաղաղության:

Իրավամբ այս հանդեսն ամբողջ հմուտ և ճարտար ձեռքերու մեջ է» («Պայքար» օրաթերթ, 1960 թ., 4—5 մարտի):

Օգնականությամբն Աստուծո, օրհնությամբ և գլխավորությամբ ազգիս Վեհափառ Հայրապետի, մեր քապմաթիվ ընթերցողների սիրով և քաջալերանքով, այսուհետև ևս «Էջմիածին» ամսագիրը կկատարի իր նվիրական պարտականությունը, որպես Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնաթերթ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, մեր վերածնված Մայր Հայրենիքի՝ Մայր Հայաստանի և համայն հայ ժողովրդի առաջ ունեցած իր պարտքի խորին գիտակցությամբ և նվիրումով:





**ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹՅՈՒՆ
ՋԱՎԱՀԱՌԱԼ ԱԼ ՆԵՐՈՒԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹՎ
ՓՈՆԱՆԱԿՎԱԾ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ**

**ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ՌԱԴՀԱԿՐԻՇՆԱՆԻՆ**

ՌԵԼԷՒ

Խոր վշտով Ձերոջ Գերազանցության կներկայացնենք Մեր ցավակցությունը Հայ Եկեղեցիի անունով, Ձեր մեծ երկրի մեծանուն վարչապետ, խաղաղության և ժողովուրդներու բարեկամության պաշտպան Ջավահարլալ Ներուի մահվան առթիվ:

Թող Աստված անոր հոգին լուսավորե:

Թող Հնդկաստանը և հնդիկ ազնիվ ժողովուրդը ապրին ու պարգանան խաղաղության և բարօրության մեջ:

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԻԱՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29 մայիս 1964
Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

ԱԶՆՎԱՓՈՅԼ ՏԻԿԻՆ ԻՆ ԴԻՐԱ ԳԱՆԴԻԻՆ

ՌԵԼԷՒ

Ձեր մեծ սուգի այս օրը, հանուն Հայ Եկեղեցիի, կուզանք Ձեզ ներկայացնել համայն հայ հավատացյալ ժողովուրդի և անձամբ Մեր խոր վշտակցությունը: Ձեր հանգուցյալ հայրը ոչ միայն մեծագործ առաջնորդն էր հնդիկ ազնիվ ժողովուրդին, այլ նաև մեր օրերու մեծահոգի ու հեղինակավոր պետական գործիչներեն մին: Ներշնչված մարդասիրության, աշխարհի խաղաղության և ժողովուրդներու անկեղծ բարեկամության վեհ իդեալներով:

Հայ ժողովուրդի հոգևոր բազմադարյան կեդրոն Ս. Էջմիածնի Սեղանի առաջ Մենք կաղոթենք, որ Աստված խաղաղության և լուսի մեջ ընդունի Ջավահարլալ Ներուի արդար հոգին և Ձեզ պարգևե կենաց երկար տարիներ, որպեսզի շարունակեք վառ պահել այն լուսավոր ջանքը, որ այժմ Ձեզի և Ձեր ժողովուրդին կփոխանցվի, Ձեր անմոռանալի հոր վախճանումով:

Խաղաղություն և բարօրություն և աստվածային պորություն Ձեր մեծ հայրենիքին՝ Հնդկաստանին և հնդիկ բարեսիրտ և ազնիվ ժողովուրդին:

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԻԱՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29 մայիս 1964
Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

**ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊՐ. Գ ՈՒ Լ Զ Ա Ր Ի Լ Ա Լ Ն Ա Ն Գ Ա Յ Ի Ն**

Գ Ե Լ Ը Ի

Խոր վշտով Ձերդ Գերազանցության և Հնդկաստանի կառավարության կներկայացնենք Մեր անկեղծ ցավակցությունը Ձեր մեծանուն նախորդի, խաղաղության և ժողովուրդներու բարեկամության սխույանի, հանգուցյալ Ջավահարլալ Ներուի մահվան առթիվ:

Թող Աստված անոր հոգին լուսավորե:

Թող Ձեր երկիրը և հնդիկ մեծ ժողովուրդը ապրին ու վարճանան խաղաղության և բարօրության մեջ:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

**ԾԱՅՐԱԳՈՒԹՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

29 մայիս 1964
Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒԹՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Վ Ա Զ Գ Ե Ն Ա-Ի Ն**

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Խնդրում ենք ընդունել մեր խորին գնահատանքը մեր սիրեցյալ պրեմիեր մինիստր Ջավահարլալ Ներուի մահվան առթիվ համակրանքի և վշտի Ձեր բարի խոսքի համար:

Ձերդ Սրբության կողմից արված մխիթարությունը պիտի օգնի Հնդկաստանի կառավարության և ժողովրդին՝ արիությամբ կրելու իրենց անփոխարինելի կորուստը և շարունակելու այն ճանապարհը, որ ցույց է տվել մեր հանգուցյալ առաջնորդը:

ԼԱԼ ԲԱՀԱԳՈՒՐ ՇԱՍՏՐԻ

Պրեմիեր մինիստր

11 հունիսի 1964 թ.
Ն ՈՐ-Գ Ե Լ Ը Ի





**ԵՐՋԱՆԿԱԼԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԱՀՎԱՆ 10-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ**

Մայիսի 9-ին լրանում էր լուսահոգի Տ. Տ. Գևորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան 10 տարին:

Ազգիս Վեհափառ Հայրապետը, այս առթիվ դրած Իր մայիս 9 թվակիր սրբատառ կոնդակով, հրահանգում էր մայիսի 10-ին, կիրակի, սուրբ պատարագի մատուցմամբ և հոգեհանգստյան պաշտոնի կատարմամբ ողբերգի մեծ Հայրապետի հիշատակը:

Վեհափառ Հայրապետի հիվանդության պատճառով, երջանկահիշատակ Հայրապետի տարելիցին նվիրված հանդիսությունները Մայր Աթոռում կատարվեցին մայիսի 16-ին և 17-ին՝ շաբաթ և կիրակի օրերը:

ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԵՍ ԵՎ ՎԿԱՆՈՆ ՏԱՐԵԼԻՑԻ

Մայիսի 16-իԷ, շաբաթ, հետմիջօրեի ժամը 1.30-ին, Վեհափառ Հայրապետի քարձր հովանավորությամբ, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, տեղի է ունենում հիշատակի հանդես՝ նվիրված երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի մահվան 10-րդ տարելիցին:

Հանդիսության նախագահում է Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ և Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տ. Հովհաննիսյանը, ներկա են Մայր Աթոռի ողջ միաբանությունը,

Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, Մայր Աթոռի պաշտոնեությունը:

Հիշատակի հանդեսը նկատվում է Հայկական ՄՍՌ պետական հիմնի նվազով և շեշ Միածինն ի Հօրէն շարականով:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հոգևոր Ճեմարանի դասախոս գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը կատարում է հանդիսության բացումը:

Հոգևոր Ճեմարանի երգչախումբը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանի ղեկավարությամբ, կատարում է «Գթա», Տէր», «Որք զարդարեցին» և «Ուրախ լեր» շարականները:

Ա լսարանի ուսանող Գրիգոր Բունիաթյանի արտասանում է Հովհաննես Հովհաննիսյանի «Սուրբ էջմիածին»-ը: Բ լսարանի ուսանող ընթացող ժիրայր սարկավազ Գալփաթյանն ընթերցում է «Եհուհի Գևորգ Զ Կաթողիկոսից»՝ քաղված լուսահոգի Հայրապետի քարոզներից, ճառերից, կոնդակներից, որպես ընտիր փունջ նրա մտածումների և խոհների:

Օրվա գլխավոր քանախոսն էր շեշմիածին ամսագրի խմբագիր և Հոգևոր Ճեմարանի դասախոս Ա. Հատիտյանը, որը հանդես եկավ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի կյանքին և գոր-

ծունեութիւնը նվիրված բովանդակալից և հոգեշունչ զննուցումով:

Երջանկահիշատակ Ս. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի հիշատակին նվիրված հանդիսութիւնը վերջանում է նախագահող սրբազանի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով:

Շարաթ օր, երեկոյան ժամերգութիւնինց հետո, ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետի հանդիսադրութիւնը, լուսահոգի Հայրապետի շիրմի վրա կատարվում է սեանոն տարելիցի:

Նորին Ս. Օծութիւնը, եկեղեցական թափորով, «Գթա, Տէր» շարականի երգակցութիւնը, Մայր Տաճարից առաջնորդվում է դեպի երջանկահիշատակ Կաթողիկոսի շիրմը, որտեղ ընթերցում է հոգեհանգստյան մեծ աղոթքը՝ «Օրհնեալ ես բարեխնամողը:

Այնուհետև շիրմի վրա կատարվում է հոգեհանգստյան պաշտոն Մայր Աթոռի միաբանութիւնի և ուսանողութիւնի մասնակցութիւնը:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԱ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Մայիսի 17-ին, կիրակի, Հոգեգալուստ: Առավոտյան ժամը 11-ին, Մայր Տաճարում, սուրբ պատարագ է մատուցում Բարձր առաջնորդ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթրոյանը:

Տաճարի աշակողմյան և ձախակողմյան գասերում տեղ են դրավել Մայր Աթոռի միաբանութիւնը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, դասախոսական կազմը, վանքի պաշտոնեւթիւնը, ուխտավորներ Սփյուռքից, մտավորականութիւնի ներկայացուցիչներ, պաշտոնական անձինք և այլ հրավիրյալներ:

Ժամը 12.30-ին, Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես մուտք է գործում Մայր Տաճար, նախագահելու հոգեհանգստյան հանդիսավոր արարողութիւն:

Սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Հայր մեր»:

Մայր Տաճարի փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը, ավագ բեմի վրա, ի ձայն բարձր, ի լուր ժողովրդյան, ընթերցում է Վեհափառ Հայրա-

պետի մայիս 9 թվակիր սրբատառ կոնդակը, նվիրված երջանկահիշատակ Ս. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի մահվան 10-րդ տարելիցին, նրա կյանքին, գործունեութիւնի և հիշատակին:

Մայր Տաճարի երգեցիկ խմբի շնորհալի մենակատար Սվետլանա Զաքարյանը ապրումով կատարում է հոգեհանգստյան հոգեգմայլ տաղը՝ «Յորժամ»-ը:

Այնուհետև, երջանկահիշատակ Հայրապետի հիշատակի ոգեկոչմամբ խորապես հուզված, նորին Ս. Օծութիւն Ս. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը խոսում է հետևյալ սրտառուղ դամբանականը.

«Ուղիղ եղիցին աղօթք մեր, Որպէս խունկ առաջի քո, Տէր»:

Մեր աղբքները, որպես խունկ, ուղիղ բոզ բարձրանան այսօր դէպի երկինք, վասն խաղաղության հոգվույն հանգուցյալ Հայրապետին մերո Ս. Տ. Գևորգա Զ Կաթողիկոսին Ամենայն Հայոց:

Քանակալ և ժողովուրդի հավաքվել ենք աճա Մայր Տաճարի այս սուրբ կամարների տակ, ոգեկոչելու հիշատակը երանաշնորհ Հայրապետի, որ տասը տարիներ առաջ ի Տեր հանգյավ, բաժանվելով երկրային կյանքից և մեզանից:

Անցել են տասը տարիներ, սակայն միշտ կենդանի է մնացել նա այստեղ և մեր սրտերի մեջ:

Մենք հիշում ենք, կարծեմ երեկ լինեք, 1954 թվականի մայիսին, երբ աշխարհի շուր ծագերից հայ հոգևորականներ ու ժողովրդի ներկայացուցիչներ, եկել էինք Մայր Աթոռ, փառքով ու պատվով հոգին հանձնելու համար հոգնած մարմինը բազմերախա ծերունագարդ Հայրապետի:

Բոլորս հանաչել էինք նրան և խառապեա հարգել ու սիրել: Մեզանից ամեն մեկը բազում հիշատակներ ունենք նրանից, հիշատակներ, որոնք երբեք չեն թառամելու մեր հոգիներում: Այսօր հանգուցյալ Հայրապետի կերպարը առավել լուսավոր է ու պայծառ մեզ համար:

Անճնապես Մենք, շերտ սրտով սիրում էինք Գևորգ Զ Կաթողիկոսին, խոր հարգանքի ու ակնածանքի զգացումով համակված դեպի նրա հեղինակավոր անճնավորութիւնը և դեպի նրա կյանքն ու մեծ վաստակը:

Նրա բաղման, իբրև առաջնորդ Ռուսինիա- յի հայոց թեմի, խոսք առնելով, Մենք ուխտեցինք հավատարիմ մնալ հանգուցյալ Հայ- րապետի ոգուն, նրա իղծերին ու ծրագրերին, հավատալով, թե նա, բաժանվելով մեզանից, Մեզ չի թողնելու որք, այլ, կյանքի մյուս ակնթից, շարունակելու է առաջնորդել Մեր ֆայ- յերը, Մեր աշխատանքը, նկեղեցու և ժո- ղովորդի ու Մայր Հայրենիքի ծառայության սրբազան հանապարհի վրա: Եվ այդպես էլ եղավ: Մենք, իբրև հաջորդը հանգուցյալ մեծ Հայրապետի, Մեր համեստ ուժերով, աշխա- տեցինք ու կաշխատեցինք շարունակել նրա սկսած գործը: Աշխատեցինք ու կաշխատենք իրագործել բոլոր այն ծրագրերը, որոնք նրա հոգում առկայծում էին իբրև երազ, իբրև տե- սիլք, իբրև իղծ:

Հանգուցյալ Գևորգ Զ կաթողիկոսը երա- զում էր Մայր Տաճարը տեսնել լրիվ վերանո- ռոզված և մեր պատմական հին տաճարները՝ փլուզումից փրկված: Երազում էր նա Հոգևոր Ճեմարանի Իր սրբելի սաներին տեսնել վե- ղար ի գլուխ, որպեսզի նրանցով հոր կյանքի կոչվի մեր հիեմուրց Ս. նկեղեցին և հատ- կապես այս պատմական, նվիրական Ս. Տա- ճարը, հավերժական Մայր Աթոռ Ս. էջմիա- ծինը:

Հանգուցյալ Հայրապետը, խնայանք հայ ժողովորդի միասնության, երազում էր մե- նկեղեցին տեսնել մի և անբաժան, և համայն հայ ազգը բոլորված Հայաստանյայց նկեղե- ցու գերագույն կենտրոն Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի շուրջ, խաղաղ, ուն- խոով, սիրով միաբան: Եվ ավելին տակավին. Իր ժողովորդի բազում տառապանքները և դառնությունները ճաշակած ծերունի Հայրա- պետը երազում էր տեսնել ներգաղթի շարու- նակույթը մինչև այն օրը, երբ համայն մեր ժողովուրդը կհամախմբվի մայրենի հողի վրա:

Հիշում ենք լավ, երբ մի օր, 1948 թվակա- նին, հանգուցյալը, մտածկոտ ու մտահոգ, ա- սում էր. «Վազգեն Հայր Սուրբ, քիչ ենք տա- կավին մեր երկրում՝ հագրվ մեկ և կես մի- լիոն: Գոնե մի երեք միլիոն լինեինք»:

Այսօր, սրբելի Հայրապետ, մեր աղոթքների հետ միասին, երջանիկ ենք ավետելու Քեզ և վկայելու, թե Քո բոլոր նկեղեցաշեն իղծերն

ու ազգանվեր ծրագրերը կենսագործվել են արդեն: Շեհզացել ու պայծառացել է Ս. էջ- միածինը. անկ է թիվը նորապսակ երիտա- սարդ միաբանների, առավել ամրապնդվել է միասնության ոգին Հայ նկեղեցու և հայ ժո- ղովորդի կյանքում: Մեր պանդուխտ զավակ- ները հեռավոր ավերի վրա, ավելի քան եր- րեք իրենց հայացքը ուղղել են դեպի Մայր Աթոռ և Մայր Հայրենիք: Շարունակվում է և կաշխատանքը մեր հայրենիքի բարեխնամ կատարա- շարության ազգանավաճ ֆաղափականության: Եվ վաղուց արդեն մեր Մայր երկրի բնակչու- թյան թիվը անցել է երկու միլիոնից և մոտ 11 միլիոն օրը, երբ կդառնանք այստեղ երեք մի- լիոն և դեռ ավելի: Մեծ ավետիս Քեզ, հայ- բնաբեր Հայրապետ Հայոց:

Լուսաբնակ Հայր, այսօր ինչպես տարբա- տաճիներ առաջ, Քո բաղման պահին, անհա- մենք բոլորս, Քո զավակները, այստեղ ենք մե- Քո նվիրական հիշատակով ներշնչված: Այն- անգիսավոր սուրբ պահին, վերանորոգու- ենք մեր ուխտը՝ հավատարիմ մնալու նվիր- ական Քո սուրբ գաղափարներին, աստվա- ծակառույց Ս. էջմիածին, Հայաստանյայց, նկեղեցու և հայոց պատմության հերոսակա- ոգուն, մեր վերածնված ժողովորդի և Մայր Հայրենիքի տեական և կենսական շահերին:

Մենք և Մեր գործակիցները երբեք չենք տկարանալու կյանքի ու աշխատանքի այս հանապարհի վրա:

Եվ երբ մի օր Աստուծո կամքով, Մե- պարտքը կատարած, բաժանվենք Մենք և այս անցավոր կյանքից այնպես, ինչպես Գ- բաժանվեցիր, մեծագործ Հայրապետ, այսու կլինի Մեր մեծագույն հաղթանակի օրը:

Հավերժական լույս և փառք Քո սուրբ հիշատակին:

«Ձագաւոր երկնաւոր, Վեկեղեցի Քո սուրբ անշարժ պահեա, այժմ և յաւիտեան: Ամէն»:

Այնուհետև, Վեհափառ Հայրապետի համա- դիսադրությամբ, Մայր Տաճարում, ավագ բո- յի առաջ, կատարվում է հոգեհանգստյա- կարգ: Հանդիսությամբ շարունակվում սուրբ պատարագը:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը նկեղեցական թափորով առաջ- նորդվում է Վեհարան:

ՀՈԳՆՃԱՆ

Հետմիջոցին ժամը 3-ին, Վեհափառ սեղանատանը, տրվում է հոգեհաշիճության հարցազրույցի հարցազրույցի մասնակցին 10-րդ տարեկանի կապակցությամբ:

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը: Սեղանին մասնակցում են Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Զեմարանի դասախոսական կազմը և Մայր Աթոռի պաշտոնեությունը:

Հրավիրյալների թվում են Գերագույն Հոգևոր Խորհրդի նախկին անդամներ պրոֆ. Պ. Ա. Ղարիբյանը, դոցենտ Ա. Տիրացյանը, «էջմիածին» ամսագրի նախկին խմբագիր պրոֆ. Պ. Ա. Արրահամյանը, Հոգևոր Զեմարանի նախկին վերատեսուչ պր. Մ. Մինասյանը, մտավորականության ներկայացուցիչներ և այլ հրավիրյալներ:

Հոգեհաշիճին ներկա են նաև Հայկական ՍՍԽ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Գալյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Վեհափառ Հայրապետը, ըստ հայկական սովորության, «ոգորմածաթաս» է առաջարկում լուսահոգի Կաթողիկոսի հիշատակին, մի անգամ ևս ոգեկոչելով մեծագործ և հայ-

րենասեր հայրապետի եկեղեցաշեն և հայրենանվեր կյանքն ու գործունեությունը:

Ներկաներից շատերը, այդ թվում Ս. Սահակ արքեպիսկոպոսը, Ս. Ասողիկ եպիսկոպոսը, Ս. Վահան վարդապետը, Ս. Հովհաննիսյանը, պրոֆ. Ա. Արրահամյանը, պրոֆ. Ա. Ղարիբյանը, Ա. Տիրացյանը, ճարտարապետ Մ. Մազմանյանը, Մ. Մինասյանը, Ն. Միրայելյանը և Ա. Հատիտյանը, իրենց հուշերն ու տպավորություններն են պատմում լուսահոգի Կաթողիկոսի կյանքից:

Հոգեշնորհ Ս. Մեսրոպ վարդապետը երգում է «Յորժամ»-ը, իսկ հոգեշնորհ Ս. Արսեն վարդապետը՝ «Ի գերեզման յարուցելոյն»-ը: Մայր Աթոռում արջանկահիշատակ Ս. Ս. Գևորգ Զ Կաթողիկոսի մահվան 10-րդ տարեկիցին նվիրված հանդիսությունը վերջանում է Մայր Աթոռ Ս. էջմիածնի անսասանության և պայծառության մաղթանքներով և խմբովին երգված «էջ Միածինն ի Հորէ» շարականով:

Ոչ ևս է մեծագործ և հայրենասեր Կաթողիկոսը՝ հրանաշնորհ Ս. Ս. Գևորգ Զ-ը, բայց նրա գործը և հիշատակը կենդանի են Մայր Աթոռում և հայ ժողովրդի երախտագետ սրտում:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Խոնկ ու աղոթք Ս. Ս. Գևորգ Զ Կաթողիկոսի հավերժական հիշատակին:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Մայիսի 3-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը:

Մայիսի 7-ին, հինգշաբթի, «Համբարձումե Քրիստոսի»: Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը:

Հավարտ սուրբ պատարագի, Իջման Ս. Սեղանի առաջ, կատարվեց Մաղթանք՝ Հայրապետական Աթոռի Սոխց Ս. Էջմիածին փոխադրության տարեգարձի առթիվ:

Մայիսի 10-ին, կիրակի, Երկրորդ Մաղկազարդ: Օրվա տոնի առթիվ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը, ընթացքում նույնպես Վերջին Երկրից տնօրինական մեծ խորհրդոյն առեցելովն առ ի մէջը, փառք առ Հայր համբարձաւ:

Մայիսի 14-ին, հինգշաբթի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ոսկորի եկամ Տնօրէնարար Հայաստանում գտնվող Եթովպիայի հայտնի նկարիչ պր. Աֆնորգ Թեկլեն:

Հարգելի հյուրը այցելեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Նորին Ս. Օժուխյան հանձնեց Մոսկվայում Եթովպիայի կայսերական դեսպանի նամակը հանուն Հայր Սեղանի կայսեր՝ այս տարի աշնան Ադդիս-Աբեբայում գումարվելիք միաբնակ եկեղեցիների համագումարի կապակցութեամբ:

Այնուհետև բարձրաստիճան հյուրը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետի առաջնորդու-

թյամբ, այցելեց Մայր Տաճարի եկեղեցական արվեստի գանձարանը և Հոգևոր Ճեմարանը:

Մայիսի 18-ին, երկուշաբթի, Հոգևոր Ճեմարանում սկսվեցին 1963—1964 ուսումնական տարվա մամլերչի քննութիւնները: Քննութիւնների բացումը կատարվեց եկեղեցական արարողութեամբ, նախագահութեամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գեորշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի:

Ամամլերչի քննութիւնները կշարունակվեն մինչև հունիսի 4-ը:

Մայիսի 20-ին, չորեքշաբթի, Վեհարանում պաշտոնապես Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին հանձնվեց Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի պատվոգիրը՝ Խաղաղության համար մղվող պայքարին գործուն մասնակցութուն ունենալու, ժողովուրդների փոխըմբռնման հասնելուն աջակցելու համար:

Մայիսի 24-ին, կիրակի, Մայր Տաճարում իր անդրանիկ պատարագը մատուցեց հոգեշնորհ Տ. Գևորգ արքեպ Սերայզարյանը և քարոզեց «Ընդառաջեցիք առ Հայր և Նա մխիթարիչ տաքէ ձեզք ընթացնով»:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 25-ին, երկուշաբթի, «Սրբոց կուսանացն Հոգիօսմանց»:

Առավոտյան ժամերգութիւնը պաշտօնացի Մայր Տաճարում, ժամը 11-ին, միաբանութիւնը և Հոգևոր Յեմարանի ուսանողութիւնը ուխտի գնացին Ս. Հռիփսիմի վանքը, ուր Կույսի անվան վկայարան-տաճարում սուրբ պատարագ մատուցեց Հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը և քարոզեց «Ձեզ նմանել կարօտին ամենայն հոգիք» «Անձինք նվիրեալք» Շարականի բառերով:

Սուրբ պատարագին ներկա էր հավատացյալների բազմութիւն:

Հավարտ սուրբ պատարագի, տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն Կոմիտաս կաթողիկոսի և Ս. Հռիփսիմն տաճարի նորոգութեան բարերարներ շնորհակցանքի և Մանուկյան գերդաստանների ննջեցյալների հիշատակին:



Մայիսի 26-ին, երեքշաբթի, «Սրբոց կուսանացն Գայիանեանց»:

Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը:



Մայիսի 28-ին, երեքշաբթի, «Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանազիենայ եպիսկոպոսին»:

Ս. Շողակաթի վանքում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը:

Հավարտ սուրբ պատարագի, տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն՝ տաճարի նորոգութեան բարերար Գալինդերյան գերդաստանի հին և նոր ննջեցյալների հիշատակին:



Մայիսի 29-ին, շաբաթ, «Տօն Արրոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին ելիցն ի վիրապէն»:

Մայր Տաճարում, Իշման Ս. Սեդանի վրա, պատարագեց Հոգեշնորհ Տ. Գևորգ արեղա Սեբաստիայանը և քարոզեց «Արմատ ճշմարիտ աստուածային օրինաց» բնարանով:




Մայիսի 31-ին, կիրակի, «Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի»:

Մայր Տաճարում, Էջմիածնի հիմնադրութեան մեծ տօնի առթիվ, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Գերագոյն Հոգևոր հորհրդի անդամ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և քարոզեց «Տեղիդ այդ եղիցի տուն աղօթից ամենայն հաւատացելոց և Աթոռ քահանայապետութեան» բնարանով:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհփառ Հայրապետի հանդիսադրութեամբ, կատարվեց Հայրապետական մաղթանք:

Այնուհետև Վեհփառ Հայրապետը, Մայր Աթոռի տոնի առթիվ, Վեհարանում ընդունեց շնորհավորութիւններ:





ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 30-ին, շաբաթ օր, երեկոյան ժամերգութիւնից հետո, Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում ծայրագույն վարդապետական իշխանութիւն շնորհեց Մայր Աթոռի միաբան և Արարատյան թեմի Հայրապետական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանին:

Տ. Վահան վարդապետը նախապես Վեհափառ Հայրապետին էր ներկայացրել ծայրագույն վարդապետի աստիճան ստանալու համար համապատասխան ավարտաճառ, ըստ նորին Ս. Օծուխյան կազմած նոր կանոնադրութեան, որը հրատարակվել էր «Էջմիածին» ամսագրում:

Վեհափառ Հայրապետի առաջարկով և Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով կազմըվում է ծայրագույն վարդապետական աստիճանի համար ներկայացված ավարտաճառը քննող հանձնաժողով հետևյալ կազմով.

Գերաշնորհ Տ. Հայկազուն աբխալիսկապոս Աբրահամյան՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի:

Գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյան՝ անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի և դասախոս Հոգևոր Ճեմարանի:

Պրոֆ. Ա. Առաքելյան՝ անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի:

Գրիգոր Բեխմեզյան՝ անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի:

Արքուն Հատիտյան՝ «Էջմիածին» ամսագրի խմբագիր և դասախոս Հոգևոր Ճեմարանի:

Հանձնաժողովի անդամները նախապես առանձին-առանձին և հանգամանորեն ծանոթանում են հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանի ներկայացրած ավարտաճառին, որի նյութն էր «Պատմութիւն Ս. Էջմիածնի դպրոցի Գ—ն դարերից մինչև մեր օրերը»:

Այնուհետև, 1964 թվականի ապրիլի 17-ին, գումարվում է հանձնաժողովի ընդհանուր նիստը Մայր Աթոռում, զերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի նախագահութեամբ:

Նիստը բացում է նախագահ սրբազանը: Ապա տեղի է ունենում մտքերի փոխանակութիւն: Հանձնաժողովի անդամները արտահայտվում են հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանի ներկայացրած ավարտաճառի մասին:

Ավարտաճառը բաղկանում է շուրջ 200 մեքենագրված էջերից, բաժանված 7 գլուխների:

Հանձնաժողովը միաձայն ընդունում է որոշում, որ ավարտաճառի նյութը հետաքրքրական է, շահեկան, և իր ամբողջութեան մեջ առաջին անգամ է, որ ուսումնասիրվում է: Հեղինակն օգտագործել է համապատասխան բոլոր աղբյուրները, կատարել է բարեխիղճ, տրեսչան աշխատանք: Նյութը լրիվ պատկերն է տալիս Գ—ն դարերի Ս. Էջմիածնի դպրոցի կամ վարդապետարանի գործունեութեան:

Հանձնաժողովը միջնորդում է Վեհափառ Հայրապետին՝ թույլատրելու Տ. Վահան վարդապետին հանդես գալ ավարտաճառի րանավոր պաշտպանությունում, ըստ կանոնադրության:

Հանձնաժողովի նիստի արձանագրությունը գրավոր կերպով և անդամների ստորագրությամբ, 1964 թվականի ապրիլի 17-ին, ներկայացվում է Վեհափառ Հայրապետին, որը բարեհաճում է նշանակել ավարտաճառի րանավոր պաշտպանությունը 1964 թվականի մայիսի 28-ին:

Մայիսի 28-ին, հետմիջոցի ժամը 1-ին, Վեհաբանում, տեղի է ունենում հոգեշնորհ Տ. Վահան վարդապետի ավարտաճառի րանավոր պաշտպանությունը:

Նախագահում է Վեհափառ Հայրապետը, ներկա են Մայր Աթոռի միաբանությունը, Գեյսազույն Հոգևոր Խորհրդի անդամները, հանձնաժողովի անդամները, Հոգևոր Զեմարանի դասախոսներ:

Գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանը հրապարակում է ավարտաճառը բննող հանձնաժողովի րպրիլ 17-ի նիստի արձանագրությունն ու որոշումը և հրավիրում է հոգեշնորհ Տ. Վահան վարդապետին հանդես գալ իր աշխատության րանավոր պաշտպանությամբ:

Հոգեշնորհ Տ. Վահան վարդապետը, շուրջ կես ժամ տևող իր խոսքի մեջ, հանգամանորեն ներկայացնում է իր ավարտաճառի նյութը, նրա 7 գլուխները, օգտագործած աղբյուրները, և վերջում իր որդիական երախտագիտությունն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ իրեն շնորհված այս րարձր վստահության և երջանիկ առիթի համար:

Այնուհետև Տ. Վահան վարդապետը, շուրջ կես ժամ, հանգամանորեն պատասխանում

է Վեհափառ Հայրապետի, քննիչ հանձնաժողովի և ներկաներից ումանց հարցերին:

Տրվում է հինգ րոպե դադար, որի ընթացքում քննիչ հանձնաժողովը գումարվելով, Վեհափառ Հայրապետին է ներկայացնում ավարտաճառի րանավոր պաշտպանության իր գնահատականը, խնդրելով նորին Ս. Օծության՝ ներկայացված ավարտաճառի գրավոր և րանավոր պաշտպանության հիման վրա, Վահան վարդապետին շնորհել ծայրագույն վարդապետի աստիճան:

Հանդիսության վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և իր գոհունակությունն ու ուրախությունը հայտնում այս առթիվ, շնորհավորելով Տ. Վահան վարդապետ Տերյանին հաջող պաշտպանության համար: Նորին Ս. Օծությունը շեշտում է, որ 1958 թվականից հետո, առաջինը Մայր Աթոռի միաբան Տ. Վահան վարդապետ Տերյանն է, որ, ըստ կանոնադրության, ներկայացրել է ավարտաճառ, որը լավ է որպես սկիզբ և որը, որպես կանոն, պետք է շարունակվի ինչպես Մայր Աթոռում, այնպես էլ մեր նվիրատակախ մյուս Աթոռների մեջ, իր պատմական, գիտական և րարոյական րարձրության վրա դնելու համար ծայրագույն վարդապետական իշխանության տվչության կարգը մեր օրերում էլ, ինչպիսին էր հնում:

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի պատգամով, ուղղված Մայր Աթոռի միաբանության՝ վառ պահելու մեր եռամեծ վարդապետների նախանձախնդրությունը, հավատը, գիտության սերը, նվիրումը, հայրենասիրությունը Մայր Աթոռում, որովհետև թծածկնալ գիտութեան վարդապետին բերանք են աշակերտքը:



պետք էր, այլև կառուցանել հրոճարակ եղած եկեղեցիները: Ու հող կրկին էր դժվարությունը: Անհրաժեշտ կղատնար նախ նյութական միջոցներ ապահովել ժամ առաջ աղօթատեղիով օժտելու համար սզավոր թաղը: Բայց կար շատ ավելի ահավոր դժվարություն մը՝ պետությունն հրաման ստանալ, վերաշինելու համար այրած եկեղեցիները: Նյութական մեծ զոհողություններու հանձնառու ըլլալ անհրաժեշտ էր ու նաև բացառիկ ճարտարություն կորզելու համապատասխան ֆերմանը:

Պարագան ավելի կնճռոտ կղառնար, երբ հարցը կվերաբերեր հայաշատ թաղի մը մեջ եկեղեցի մը կառուցանելու: Քանի կրազմանային հայերը այս կամ այն թաղին մեջ, կարիք կզգացվեր նոր եկեղեցիի մը. իսկ նոր եկեղեցիի մը կառուցման հրաման ստանալ գրեթե անհնարին էր, որովհետև թուրք իշխանությունները տրամադիր չէին քրիստոնյա տաճարներու թիվը ավելցնել մայրաքաղաքին մեջ, ու բացառիկ շնորհք, զոր կընենին, այրած կամ փլած եկեղեցիներու փոխարեն ուրիշ մը շինելու թույլտվությունն էր, այն ալ հիշատակին տեղը, հինին դարձրույթամբն ու տաճարութեամբը:

Պոլիս Կոլոտին կպարտի իր եկեղեցիներն շատերը:

Կոլոտն էր, որ 1719-ին վերաշինեց, նրուսաղեմի Գրիգոր Շղթայակիր պատրիարքին հետ մեկտեղ, որ Պոլիս կգտնվեր այդ պահուն հանգանակության համար, Գումբափուսի Մայր Եկեղեցին, որ հրոճարակ եղած էր 1718 հուլիս 6-ի մեծ հրդեհին մեջ:

Կոլոտ 1722-ին նորոգեց Սամաթիո Ս. Գևորգ եկեղեցին, վերակացուցուցաւ կեսարացի Արարողու Մելտոնի, որ Սուլթան Ահմեդ Գ-ի ճարտարապետն էր:

1726-ին վերաշինեց Օրթագյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, զոր Կարապետ Ուլնեցի կաթողիկոսը օժեց, իր իսկ օժումեն քիչ հետո, որ Պոլսո մեջ տեղի ունեցեր էր:

1727-ին վերաշինեց Սկյուտարի Ս. Կարապետը Սարգիս Խալֆայի ճարտարապետութեամբ, և միևնույն ժամանակ նորոգել տվավ Սկյուտարի հոգեւորներ, ծանոթ նրուսաղեմի վանք անունով:

1729-ին կառուց և օժեց Խասաղյուղի Ս. Ստեփանոսը, որուն հրամանը հաջողք էր ստանալ մահտեսի Հարություն Քեփեբեյան հայ երեսկին:

1729-ին վերաշինեց նաև Պալաթի Ս. Հրեշտակապետը, զոր նույն տարվա հուլիս 16-ին հրդեհը լափեր էր հունական 13 եկեղեցիներու հետ մեկտեղ:

Կոլոտի շինութեանց գլուխգործոցն եղավ սակայն Ղալաթիո Ս. Լոսավորիչը, որ այրեց էր 1731-ի մեծ հրդեհին և որուն շինութեան

հրամանը կդժկամակեին տալ թուրքերը և, ինչպես կըսեն Հաննե, քնովհանելու վարդապետն հանգերձ ամենայն քահանայիք և բազում ժողովրդօք պէսպէս նեղութիւնս և շարձարանս կրեաց վասն հրամանի շինութեան, և ո՛չ եղև հնար յումեքէս⁵³⁸, Այնպես որ հազիվ 1732 հոկտեմբերին էր որ Արքունի գոա՛ւ քծայրագուլն վաճառապետք մահտեսի Սեզրեստրոս կրցավ շինութեան հրովարտակն ստանալ Մահմուդ Ա սուլթանեն, մեծ եպարքոս Ալի փաշայի ձեռքով, և Կոլոտ, Սարգիս Խալֆայի գլխավոր ճարտարապետութեամբ և մահտեսի Սեզրեստրոսի նյութական ձեռնուկութեամբ, հաջողեցավ զայն վերաշինել և օժել 1733 մարտ 10-ին, Կոլոտի վերաշինած այս գեղեցկաշէն եկեղեցին, որուն նմանը, ինչպես կըսեն Հաննե, առ ի Կոստանդնուպոլիս և ոչ յայլուր կարէ գտանելը, 1771-ին հրդեհի գոհ պիտի տար փայտաշէն իր զուլգ թեկերը:

Կոլոտ կարկառուն դարձավ իր խոսքին հմայքովն ալ, և իզուր չէ, որ իր կենսագիրը, շինարարն անմիջապես հետո, բնմրասացն ալ կպանծացնեն հանձին Կոլոտի⁵³⁹, ձիրք, զոր նույնպես ան կպարտի Ամրողի, ուր վանականներուն մեջ հոնտորը ևս կմարզվեր:

Աստվածաբանական հմտութեամբ օժտված ճարտասանը կփառարանեն իր մեջ իր գրեթե բոլոր ժամանակակիցները: Նայան քերականց աստուածաբանութեան վարդապետք կանվանեն դայն⁵⁴⁰, իսկ Հաննե մասնավորապես կշեշտեն, թե Կոլոտը կսիրվեր սվասա առաքինի բարուցն և ևս անհամեմատ քարոզութեան, որ գրեթէ է՛ր ազգիս մերոյ նոր Սուկերերան և կրկին աստուածաբանս⁵⁴¹:


Որքան ալ երկյուղածութեան տուրք մշ պահվորտի իր ժամանակակիցներու գնահատութեանց մեջ, սա ստույգ է, որ ան գերադանցապես հմուտ էր հոնտորական արվեստին, և ավելի խոսքով էր, որ կրնար ունկընդիրները հմայել, քան թե գրչով, ձիրք, որուն համար կակնածեին անկե բոլորը, հայերն ըլլան թե օտարները, որոնք, ըստ Հաննայի, երանի կուտային ժողովուրդի մը, աոր այնպիսի հրածորան վարդապետ ունէին, յայնպիսի յետենալ ժամանակիս և այնքան միևն զի նրբամիտ ազգն յատինացուց զարմացեալ հիանային հրարորրք և աստուածաբան

⁵³⁸ Յովհաննէս Հաննե, «Գիրք պատմութեան Արարի Քաղաքին Աստուծոյ Նրուսաղէմի», Կ. Պոլիս, 1767, էջ 147—148:

⁵³⁹ Քարգեցե ճարտգուլց վարդապետ Կյուլեմերյան, Հիշված աշխատութիւնը, էջ 84—81:

⁵⁴⁰ Եվէմ հաստոյս:

⁵⁴¹ Յովհաննէս Հաննե, Հիշված աշխատութիւնը, էջ 112—113:



քարոզութեան նորին, զի յոյժ կատարեալ ունէր զփիլիսոփայական և զաստուծարանական գիտութիւնս⁶²:

Բարգեն կեզրակացն, թե «հակառակ իր համեստութեան, զոր շափազանցորեն կմշակե իր հիշատակարաններուն մեջ դիտել տալու համար, թե ինքը զուրկ է աստվածարանական շնորհն և Ս. Գրքերը մեկնելու իմաստութեանն, Կոլոտը կենրկայանա պատմութեան ատըն իբր ժամանակակից ուսումներով զարգացած ուսում վարդապետ մը»⁶³:

Պոլոտ ոչ նվազ մեծ եղավ իբրև զբասեր: Ուժեղ էր իր մեջ կիրքը դեպի ամեն ինչ, որ կապված էր գրի և զրահանութեան: Եթե իր պաշտոնական գրադումները հնարավորութիւն յտվին իրեն, որպեսզի պարապի գրական ստեղծագործութիւններով ևս, փոխարեն ան ձգտեցավ պատրաստել սերունդ մը, որ նվիրվեր դպրութեան: Եվ այս տեսակետով մեծ եղավ իր երախտիքը, որովհետև հաջողեցավ այդ սերունդը պատրաստել: Այն օրվան պայմաններուն մեջ հրաշք էր այդ: Դավանական վեճերու այն քառսին մեջ, զոր իր նախորդն էր ժողանդի դարը և որ միշտ կշարունակեր մթաքնել Պոլոտ հայ կյանքը, սովորական մարդոց տրված շէր վեճերն վեր բարձրանալ, և մանավանդ վստահութիւններ շնչել զանգվածներուն: Կոլոտ արդարացուց վարկը, զոր հայ ժողովուրդը բացեր էր իրեն: Չայն արդարացուց ոչ թե միայն իր խոհականութեամբ և իր վարչական ձիրքերով, այլ նաև շնորհիվ այն բացառիկ նպաստին, զոր ան բերավ հայ դպրութեանց:

Պոլոտ Կոլոտի կպարտի իր առաջին մատենադարանը: Կոլոտն առաջ այլ անշուշտ տպված է ձեռագիր գրքերու դարակներ կային: Պոլոտ զանազան հայ եկեղեցիներու խուցերուն մեջ, Բայց Կոլոտ ուզեց իսկական մատենադարան մը հիմնել: Պատրիարքական իր Աթոռին առնթներ, այնպես ինչպես հայոց վանքերն ունեին, մատենադարան, որ կարենար սնունդ տալ իրեն դիմողին: Կոլոտ իր մատենադարանը սկսավ օժտել զգրքերով և ձեռագիրներով, ու քիչ ժամանակէն հաջողեցավ պատկառելի դարձնել զայն: Այն օրերու պայմաններուն մեջ դուրին չէր անշուշտ Կոլոտի փորձը, և եզական ալ մնաց, որովհետև շատ կարճ տեւեց ան: Հակօր նալլան, իշ ձեռնասունն ու հաջորդը, պահ մը զայն ճոխացուց ինքն ալ, որպեսզի իբժն ալ հետո, անկյուն մը մնալու դատապարտվին երկու պատրիարքներու հավաքած հարյուրավոր այդ հատորները: Մեկուկես դար հետո էր միայն,

որ Պոլոտը դժգոյն փորձ մը պիտի ընէր ազգային մատենադարան մը ունենալու, իսկ այդ մատենադարանին հիմնական կորիզը Կոլոտի ու նալլանի հավաքած ձեռագիրներն ու հազվագյուտ հրատարակութիւնները պիտի ըլլային: Երկու պատրիարքներն հետո Պոլոտ դարձաւ թաղերն էր քաշվեր, և եկեղեցական խուցն էր տարը մտավոր կյանքը, և այդ եկեղեցիներու խուցերուն մեջ էր, որ սկսեր էին հավաքվիլ դարձալ հայ ձեռագիրներն ու գրքերը, ամեն թաղ զատ-զատ...:

Պոլոտ Կոլոտի կպարտի նույնպես իր առաջին տըրօ ուսումնարանը: Պոլոտ մեջ նախապես ալ եղեր էին իր թաղի և ասոնցմե ոմանք նույնիսկ փայլեր էին երբեմն-երբեմն: Բայց Կոլոտն էր, որ փորձեց կրթութեան իսկական հարկ մը ստեղծել իր անմիջական հովանիին տակ, իրմե հետո սերունդ մը ձգելու տեսչով, այնպես ինչպես վանքերու մեջ մեկ սերունդը կհաջորդեր մյուսին, իրարու փոխանցելով իր ժառանգած օրագրը:

Ժամանակակից աղբյուրները ժլատ են մանրամասնութիւններ տալու մեզ այդ ուսումնարանին ստեղծման պարագաներուն մասին: Չամշյանն անգամ հետազային քանի մը տողով միայն զայն պիտի հիշեր, ըսելով, որ ստոյն այս Յովհաննէս վարդապետ երաց և զդպրատուն յիսկիտար և աշակերտեայ գրադումս⁶⁴:

Փոխարեն, հայտնի է սակայն մեզ դերը, զոր կատարեց այդ ուսումնարանը, որ Սկյուտարի բարձունքը թառած, Ս. Կարապետ եկեղեցիով հովանիին տակ, Ամրոտը կշարունակելու Աշակերտներու ստպար թիվ մը հավաքած պետք է ըլլա այնտեղ Կոլոտ ու զանոնք հանձնած ընտիր դաստիարակներու խնամքին, որոնց մեջ էր այն օրերու ամենէն հմուտ մարդը՝ Դովթաս վարդապետ Խարբերդցին: Կոլոտ ինքն ալ պետք է մտնէր զբաղած ըլլա իր հոգեւոր սաներով, և հետեւած ոչ միայն սանոց ուսման, այլև անոնց բերած երանդուն մասնակցութեան մտավոր զարթոնքին ու ճիգերուն մեջ, որոնք առավելապես թարգմանութիւններն էին այն օրերուն:

Սկյուտարը Պոլոտ վերածնութեան թաղը կդառնար այդ կերպով, եթե Գոմգափուն իր վարչական գործունեութեան խարխախն էր իր պատրիարքարանով և անոր կողքին ստեղծված Մատենադարանով, Պոլոտ հանդիպակայեց եզերքին՝ Սկյուտարի մեջ էր Կոլոտի զուգորանքին մյուս առարկան՝ իր դպրատունը: Սկյուտար ևս հոգեւոր կեդրոն մը կդառնար այսպես, ու դպրատան ճիշտ կողքին կստեղծեր նաև իր վանքը՝ Երուսաղեմինը, ուր հա-

⁶² Անդ. էջ 131:

⁶³ Բարգեն Եւրոպայի վարդապետ Կյուպտերյան, հիշում մատենութեան, էջ 61:

⁶⁴ Գամյուն, Գ, էջ 775:

վանաբար կուգային իշխանի Երուսաղեմի պատրիարքները, թեև Մայր Եկեղեցվու քովիկն ալ Երուսաղեմ իր հարկը ունեն, որ մինչև մեր օրերուն հասավ, մեր գիտցած Երուսաղեմատունը:

Կոլոտի րացած աւյդ դպրոցը Քուրբիո հայոց ԺԸ դարու կյանքին վրա հանգրվան մէջ⁶⁴, — կրսե Կոլոտի կենսագիրը, և իրավամբ: Բազմական է հիշել պատկառելի թիվը հոգեորականներուն, որոնք իրենց ուսումն ստացան Կոլոտի շունչին տակ, և որոնց ցանկը բարձրախառարար մեզ կհասցնեն զարուն ժամանակագիրներն մեկը՝ Մարգիս դպիր Հովհաննեսայան: Կոլոտե ձեռնադրված վարդապետները այդ ցանկին մեջ 23 են թվով, րացի չորս սարկավազներն, որոնցմե ոմանք իրենց վարդապետական կոչումը պիտի ստանային Կոլոտի մահէն հետո: Եվ ավելցնենք անմիջապէս, որ այդ ցանկին մեջ կպսպղանակ անունը Հակոբ Նալլանին, որ պիտի լրացներ Կոլոտի գործը, իր կարգին նոր թվական մը բանալով: Այդ ցանկին մեջ է նույնպէս Սահակ Ահագինը, որ հետագային պիտի դառնար պատրիարք և նույնիսկ կաթողիկոս պիտի ընտրվեր, թեև առանց հաշտողելու գահ բարձրանալ:

Իր ստեղծած սուլն դպրոցով Կոլոտ հաշտողեցավ սերունդ մը թողուլ, և հետևաբար հետք մը նաև իրմե ետք: Ժամանակակից մը, որ իր կարգին դեր ունեցած է դարուն ճիգերուն մեջ, Գրիգոր դպիր Մարզվանցի մեծ տպագրիչն ու փորագրիչը, իր 1730-ին տպահ համարավոր ԵՅԱՅՄԱՇՈՒՐԵՔ-ի հիշատակարանին մեջ կգրեն Կոլոտի թրծած սերունդին մասին: «Յովհաննէս վարդապետն ժողովեալ: զարակերտս րազումս ստացաւ ի պարծանս մերոյ ազգիս աստուածաբան վարդապետս և քարոզիչս, դի մի՛ յառաջին խղճութիւն անկցի ազգս մեր. այլ տեսեալ աշակերտք սոցա (Կոլոտի և Շղթայակրի) զվարս և զգնացս վարդապետացն այնոցիկ՝ նմանողք եղիցին գործոց հոգևոր հարցն իւրեանց, որ և կան այժմ և տածեն դազգս մեր ի խոր խաղաղութիւն, մին յերուսաղէմ և միւսն աստա»:

Հիմնական մտահոգութիւնը, զոր Կոլոտ հետք կրենք Ամրդուն, իր կողքին սերունդ մը ստեղծելու րացաոճի ճիգն էր արդարև, ճիգ, որ վերագույն պսակն է, զոր իր ճակտին կրնա հշուսել մարդ, եթե մանավանդ իր մեջ կիրքը կա տպրելու իրմե հետո ալ: Երկուքուկնս դարե ավելի էր, որ կտենք հայ գաղութը Պոլսո մեջ, պատրիարքներ Աթուին վրայն կանցնեին շարան-շարան, շնչերիններ կհաջորդեին խոջաներուն, այսինքն մեկ երեսնիւն:

հետո մյուսը կուգար, րայց սերունդներուն միջև կարծես կապ չկար, որովհետև սերունդները սեփական գիմագծութիւն չէին ունեցեր դեռ, իրենց հարագատ ավանդութիւններով: Կարկառուն դեմքեր Պոլիսն ալ ունեցեր էր, րայց ոչ մեկը չէր կրցեր սերունդ մը ստեղծել շուրջը, րան մը փոխանցել իր հաջորդներուն:

Կոլոտ այդ փորձն էր որ ըրավ: Անհնար էր սակայն սերունդ պատրաստել, առանց անոր հոգին գիտութիւն մը խմորելու: Գրքեր պետք էին անոր, որպէսզի այդ նոր սերունդը ընդլայնէր մտքի իր պաշարը: Եթե հայ վանքերն շատեր կրցեր էին մտավոր օջախներ դառնալ, առավելուպէս կպսպղանին իրենց ամրարած գրքերուն:

Կոլոտ այդ շատ լավ գիտեր և հետևաբար իր առաջին մտածումն եղավ գիրք տալ սերունդին ձեռքը, որ իր ձեռնասունները պիտի ըլլային, և դիրք տալ նաև զանգվածներուն, որպէսզի անոնց ևս րացվի լուսի նոր ճամբան:

Սերունդ հասցնելու իր այդ մտահոգութիւն մեջ, Կոլոտ նախանձախնդիր եղավ նախ թարգմանութիւններով օժտելու հայ գրականութիւնը, նախանձախնդրութիւն, որուն ձգտեր էր հայ միտքը առաջին օրն: Ամրող սերունդներ տընել էին երբեմն թարգմանութիւնց վրա, ու հայ մատենագրութիւնը պատկառելի էր դարձել շնորհիվ անոնց: Անոնք էին, որ պատվաստեր էին հայ միտքը շատ մը դարեր, և անհրաժեշտ էր, որ անոնք զայն պատվաստեին նոր օրերուն ալ: Շատ մը խորթ դարեր ընդմիջեր էին երբեմնի այդ ոգևորութիւնը, փակեր էին լուսամուտը հայ մտքին առջև:

Կոլոտի և իր դպրոցին հիմնական մտահոգութիւններն մեկը կազմեց այդ նոր լուսամուտը րանալ: Հայ գիտակցութիւնը շատ մը դարեր է վեր պատած էր խավարով: Երկար ժամանակ է վեր ան իր կապը խզած էր դուրսի աշխարհին հետ և անհաղորդ կմնար նոր օրերու մտածումներուն: Իր այս անգիտութիւնը կշահադործեին մանավանդ կաթողիկոսները, իր առջև փոնրով աստվածաբանական տեսութանց ամրող հեղեղը, զոր կրենքին Հոռմի իրենց կոչելն, միամիտները շլացնելու և շփոթեցնելու համար: Պետք էր անոնց ձեռքն խլել իրենց գեները:

Կոլոտ եթե չհաջողեցավ անոնց ձեռքն րոտորովին խլել իրենց գեները, րայց կրցավ զանոնք ըթացնել մեծապէս:

Երկու Կոլոտի դպրոցի գրական գործունեութիւն, — կրքն էնն, — մենք տեսնում ենք այստեղ ևս լրան և առողջ հիմքերի վրա հանգող ձգտումներ: Կոլոտը մտածում է թարգմանել և հարստացնել հայոց կրոնական գրականութիւնը Եվրոպայի համապատաս-

⁶⁴ Բարցին ձայնագրով վարդապետ Կոլովեսոյմե: Ինչպէս աշխատութիւնը, էջ 69:

խան գրականությունից վերցրած թարգմանություններով, այլ խոսքով՝ նա է, որ մտածում է Հայերի մեջ կազմակերպել լուսավորված վանականություն⁵⁴⁶, — լուսավորված վանականություն մը, որ ոչ թե երթար վանքերը քաշվեր, այլ զանգվածներուն մտանար, շեղօթացնելու համար կաթոլիկ քարոզությունը: Այդ նպատակին հասնելի կկարծեիր օտար աստվածաբանական գրականությունը մատչելի ընելով նախ հայ հոգևորականության:

Կոլոտի պաշտոնական հոգերը թույլ չէին տար իրեն թարգմանությանը նվիրվել անձամբ, թեև իր պատրաստությունն ալ ձեռնառու չէր հավանաբար այդ բանին: Բայց ինքն էր, որ անձամբ մղում տվավ թարգմանությանց, և այն բերքը, որ ստացվեցավ, րացառապես իր իսկ արգասիքն է:

Արդարև, Կոլոտ ինքն իսկ կզրե իր օրով կատարված թարգմանություններեն մեկուն՝ «Անտառ այլարանութեան Ս. Գրոց» զբեռն հիշատակարանին մեջ. «Բայց իմ նկատեալ ի փարթամութիւնս լատինացւոց և յաղքատութիւն ազգին իմոյ և իմ իսկ գլխովին (ի կողմանէ իմաստութեան և մեկնութեան Աստուածաշունչ գրոց) թախծէի և մորմոքէի ի սրտի իմում, թէ վասն ո՞ր զհեղզութիւն նախամեծար առնէ ազգն իմ և զանուսումնասիրութիւն բան զուսումնասիրութիւն ընտրելի համարի, և մանաւանդ վասն ո՞ր պատճառի քա՛ղազզն իմ այլ առաւել աղքատազոյն ազիւք պերճացեալք իցեն իմաստութեամբ, որպիսիք են Ասորիք և Վրացիք, յորոց զբազում բանս ի նոցունց թարգմանեալ ցուցանեն նախնիք մեր. վասն որոյ գոնէ զի թերևս այլոցն փարթամութեամբ զազգն իմ և զիս փարթամացուցից և բոլորի Աստուածաշունչ գրոց զհամոտական այլարանական մեկնութիւն ի յոյս ընծայեցից (ոչ իմովս ուշիմութեամբ, յորմէ շնորհէ մերկ էի և եմ), այլ թարգմանութեամբ և անսովորութեամբ զայլոցն յիմումս ազգի շտեմարանի»⁵⁴⁷:

Կոլոտի կողմն թարգմանությանց տրված այս զարկը ժամանակակից Հովհաննես Հաննան կնամանցնե ասն նախանձախնդրության, որով օգեորվեր էր Ոսկեդարու սերունդը⁵⁴⁸:

Հիմա ծանոթանանք նաև այն մարդուն, որուն հմտությանն ու ձեռնհասութեանը գիմում ըրալ Կոլոտ իր ծրագիրը իրականացնելու համար:

Որպեսզի հայ միտքը հասուննար Պոլսո մեջ, ու իր ծոցն զմեքեր հայտնվեին, պետք էր որ համեստ մարդիկ ևս տընեին ու ճամբարանային մեծ անուններուն: Շուքին մեջ մնացած մարդիկ են հաճախ, որոնք իրենց սկաշխատանքովը սերունդի մը թթխմորը կդառնան և կսատարեն իրենց օրերու մեծ ճիգերուն: Ամեն մեծ շարժում, մեծ դեմքերու կողքին, որ զայն առաջնորդած են, իր խոնարհաշխատավորն ալ ունեցած է, որ տընած է մութին մեջ, թեև պատմությունը հաճախ ժլատ եղած է անկյուն մը արձանադրելու անոր անունը:

Կոլոտ բարեբախտ եղալ, որ թանկազիւ աշակից մը հայտնվեցավ հանկարծ իր կողքին, որպեսզի զարհուրելի հոգ մը ստանձնե, հոգը թարգմանություններուն, որոնց կարիք ունեւր մեծ պատրիարքը սերունդ մը ստեղծելու իր ճիգերուն մեջ: Այդ մարդը Խարբերդի Ղուկաս վարդապետն էր, արդի Արարհամուհի տոհմէն Գասպարեանն, ինչպես ան ինքզինքը կկոչե 1730-ին թարգմանած «Խարէութիւն աշխարհի» զբեռն հառաջարանին մեջ:

Իտալիա կրթված էր ան և հոն հմտացած լատիններնի և իտալիներնի: Անոր ներկայությունը Պոլսո մեջ Կոլոտի պատրիարքության օրերուն՝ ավելի քան բախտավորություն մըն էր մեծ ծրագիրներու անձնատուր եղած պատրիարքի մը համար, որ առաջին օրեն հմտվեցավ Խարբերդի ձիգերեն և որ Սկոթի «Աստուածաբանութեան» թարգմանության հառաջարանին մեջ կըսե անոր թարգմանչին համար. «Խարբերդցի Ղուկաս յոզնահանձար վարդապետն, կարի քաջ տեղեակ լատինական լեզուի, որ գրեթէ միայն ի մակերևոյթ նախագաղափարին նշմարեալ, անգէն հայկական բառի իբր զհասարակ գրոց արտաբերէ»⁵⁴⁹:

Արդ, այս մարդն էր, որուն վստահեցավ Կոլոտ թարգմանությանց մեծ հոգը, և որ, պետք է ըսել, արգարացուց Կոլոտի հույսերը, ոչ միայն ինք անձամբ թարգմանելով, լատիններեն և իտալիներեն, այն օրերուն հեղինակություն համարվող օտար աստվածաբաններու երկերը, այլ և մարդելով, իր անմիջական շունչին տակ, աշակիցներ ալ, որոնցմ հայտնի պիտի դառնային հետագային երկու վարդապետներ Կոլոտի իսկ սաներեն՝ Հարություն և Հակոբ, այս վերջինը ապագա մեծ պատրիարքը:

Ձի կրնար խելքի պտույտ չտալ մարդու հսկա այն մատենագարսնը, զոր իր թարգմանություններով լեցուց, մոտ քառորդ դարու ընթացքին, Ղուկաս Խարբերդցին և որ

⁵⁴⁶ Առ, «Հայոց պատմություն», Գ, էջ 248:
⁵⁴⁷ Ուրգեմ արքայից կաթողիկոս, «Մուցակ անազրաց Ղայաթի ազգային մտանադարանին», Անթիլիաս, 1981, էջ 7:
⁵⁴⁸ Յովհաննէս Հունեա, «Հիշված աշխատությունը», էջ 171—173:

⁵⁴⁹ Ուրգեմ ծախարդայն վարդապետ Կյուլիսեւրյան, «Հիշված աշխատությունը», էջ 187:

անդրանիկ կորիզը պիտի կազմեր հետո Ղալաթիո երբեմնի ազգային մատենադարանը ձեռագիրներու ֆոնդին, Յանկը, զոր համբերությունն ունեցանք քաղելու նույն ձեռագիրներու ցուցակին⁵⁰, բավական է ինքը սարսափով համակելու քեզ.

1. «Համառոտութիւն օրինակաց և իրաց նմանութեանց», հորինված Հելիկոս Քեոզոնացիի և սրբազրված Հոհան Սանճիմիանեցիի. թարգմանված 1717-ին. 909 էրես:

2. «Պատմութիւն Արբոյ Երկրին», երկու հատոր, հեղինակություն հայր Մարիանոս Իմալեո, թարգմանված իտալերեն և Մաղաքիա դպիր Ճևահրճյանի գործակցությամբ 1725-ին. 550+536=1080 էրես:

3. «Բանք ասկիակաւք և գեղեցկագոյնք (կամ «Քարոզգիրք կիրակէից») և Արեւստնաբասանութեան», երկու հատոր, հեղինակություն Հակոբ Վոսաճիւն, Քարողոզաց կարդին. 584+68=652 էրես:

4. «Մեկնութիւն երկոտասան մարգարէից», թարգմանված 1746-ին, Նալյանի օժանդակությամբ. 1486 էրես:

5. «Անտառ ալլարանութեան բոլորի Սուրբ Կրօց», թարգմանված 1733-ին. 1826 էրես:

6. «Աստուածաբանութիւն Սկոթոսի», թարգմանված 1729-ին. 951 էրես: Ձեռագիրը կպարունակէ նաև Արիստոտելի «Բնաբանութիւն»-ը (114 էրես) և «Էմանասախրական վիճարանութիւն ֆիսիկային գիտութեան, որ բարգմանի բնաբանութիւն, շարակարգեալ ի կարգէրէլ տիտիտոսաց Կղեմէս աստուածաբան վարդապետէ» (23 էրես):

7. «Մեկնութիւն Երեմեայ», թարգմանված 1750-ին. 636 էրես:

8. «Մեկնութիւն Ագեկիլի, Կուռնելիոս Եւտիմիական վարդապետի ի կարգէն Յիսուսեանց», թարգմանված 1747-ին. 1296 էրես:

9. «Ջերմուտանդ մտածմունքն Արբոյն Օգոստինոսի ընդ միայնախօսութեան և հունապազոբույանի ձեռնարկութեան», թարգմանված 1747-ին. 429 էրես:

10. «Ետրէութիւն աշխարհի», երկու հատոր, հեղինակ Քեոզոզոս Ճեննարիոս, թարգմանված 1730-ին. 640+804=1440 էրես:

11. «Ներկրքումն ապաշխարողի», հեղինակ Պոզոս Սեներո ի կարգէն Հիսուսյան. թարգմանված 1732-ին. 182 էրես:

12. «Ընդամասութիւն խառնովանութեան», հեղինակ Գուլիելմոս Փեֆիերիան, թարգմանված 1725-ին. 1126 էրես:

13. «Պարալէգ հովուաց», հեղինակութիւն Հակոբ Մարկանտոսի, Ղուկաս վարդապետի

թարգմանութենէն 1825-ին Ջմրուտիո մեղրնգորինակված Հովհան քահանա Միրզավանանդեցիի ձեռքով. 552 էրես:

14. «Մեկնութիւն իմաստութեան», հեղինակություն Կուռնելիոսի Կուռնելիան, ի միարանութենէն Հիսուսյան, թարգմանված 1751-ին. 1448 էրես:

15. «Մեկնութիւն Եկլէսիասեայ (ժողովաղ)», հեղինակություն Նույն Կուռնելիոս Կուռնելիանի, թարգմանված 1752-ին. 1512 էրես:

16. «Մեկնութիւն Եկլէսիասակեայ (Սիրաբ)», լորս հատոր, թարգմանված միկնույն հեղինակեն 1753-ին. 1248+1008+1152+1080=4488 էրես:

17. «Մեկնութիւն քրքոցն Պոզոսի», լորս հատոր, թարգմանված 1749-ին. 792+972+912+1224=3900 էրես:

18. «Մեկնութիւն Կարողիկեայց», թարգմանված 1749-ին. 1704 էրես:

19. «Անտառ Ետրազոյն մտածմանց», հեղինակություն Աղեքսանդր Գալամաթոյի, թարգմանված իտալերեն 1741-ին. 806 էրես:

Նույն մատենադարանին մեջ կան վեցյակ մը ձեռագիրներ ալ, որոնց հիշատակարանը կպակսի, և որոնք անկասկած միկնույն Ղուկաս Խարբերդցիի թարգմանութիւններն են, դատելով թարգմանութիւնն ընդհանրապէս նաև գրեն, որ Խարբերդցիին է միշտ.

20. «Մեկնութիւն Ղևաթցոց, Քուսոց և ԲՕրիեաց», 823 էրես:

21. «Մեկնութիւն Գանիէլ մարգարէին», 480 էրես:

22. «Մեկնութիւն Առակացն Սողոմոնի», երկու հատոր, հեղինակություն Կուռնելիոսի Կուռնելիան, ի կարգէն Հիսուսյան. 1920+1686=3606 էրես:

23. «Մեկնութիւն կանոնական ընթերցուծոց», հեղինակություն Նույնին. 380 էրես:

24. «Արիստոտէլ, զպատմութեան կենդանաց», վեցերորդ մատյան. 439 էրես:

Թարգման վարդապետ Ղուկաս վարդապետի ձեռագիրը կկարծեն նաև Ղալաթիո ազգային մատենադարանի ձեռագիրներն են՝ երկուսը ալ՝

25. «Պատմութիւն ոռոսաց», Գևորգ Կոնստանտինոս Յաննացլո հունարեն երկեն հայ լեզվի թարգմանված 1769-ին:

Ասոնցմէ զատ Հաննա վարդապետ, որ Ղուկաս Խարբերդցիի կատարած թարգմանութիւնց ցանկը կուտա, Երուսաղեմի իր պատմութիւն մեջ կհիշէ անոր ուրիշ երկերն ալ, որոնք կպակսին սակայն Ղալաթիո մատենադարանի ձեռագիրներուն մեջ, ինչպէս են՝

26. «Գիրք եօթն խորհրդոց Եկեղեցոյ»:

⁵⁰ Թարգման արհուպակց կարողիկոս, «Ճուրղակ ձեռագրաց Ղալաթիո ազգային մատենադարանին», Անթիպիս. 1881.

27. «Գիրքն այն որ կոչի շեմեռանդ կեանք»:

23. Գիրք իմն փարգուրեանն ի վերայ ամենայն կիրակեցիք բոլոր տարւոյն»:

29. «Փոքր գիրք իմն ի վերայ Հայր մերին»:

30. «Գիրք վասն գրքման և ապաշխարութեան»:

31. «Փիլիսոփայական գրեանս Կովտարի կռեցելոյ, այսինքն զառաջին հատորն որ է լուսնայ, և երկրորդն որ է ֆիզիզայ, իսկ երրորդն և չորրորդն որ է մէթաֆիզիզայ և բարոյական, որք դեռ ևս ոչ են թարգմանեցան, այլ են կիսակատարք»⁵⁵¹։

Վերի ցուցակին պետք է կցել նաև Ղուկաս վարդապետի կողմն կատարված ուրիշ թարգմանություններն ալ, որոնք պահված են զանազան մատենադարաններու մեջ: Էջմիածնի նախկին մատենադարաններու ունեցած է, որին նաև, անոր քանի մը ձեռագիրները, որոնք հավանաբար Մեսրոպ Մաշտոցի անվան երևանի մատենադարանը կգտնվին ներկայիս: Քանի մը ձեռագիրներ՝ ալ Վիեննայի Մխիթարյանց մոտ կան, այնպես որ վերի ցանկին վրա կարելի ավելցնել՝

«Ոգոստինոսի աղօրք միայնախօսութիւն, գրեալ ի Կ. Պոլիս ի Ղուկաս վարդապետէ ի թուին Հայոց ՌՃՂԾ» (1747)⁵⁵²։

«Մեկնութիւն Ղեռացոց և Երկրորդ Սրինաց ի Յովհաննէս դպրէ, ի թուին Հայոց ՌՃՁԷ» (1749), թարգմանեալ ի Ղուկաս վարդապետէ հարբերոցոյ»⁵⁵³։

«Պատմութիւնք երկուց մասանց յաշխարհի Ամերիկայի և Աֆրիկայի, թարգմանեալ ի լատին լեզուէ ի հայ, ի Ղուկաս վարդապետէ հարբերոցոյ, ի Կ. Պոլիս, յամի ՌՃՂԶ» (1727)⁵⁵⁴։

«Մեկնութիւն Յայտնութեան Սրբոյն Յոնանու, հեղինակությամբ հօր Գոռնելիոսի Գոռնելեան ի կափիտայ, թարգմանեալ եղև ի լատինականէ լեզուէ ի հայկական բարբառ ի Ղուկասու վարդապետէ հարբերոցոյ, ի խնդրոյ Տեառն Յովհաննիսի Բաղիշեցոյ»⁵⁵⁵։

«Կոտնելիոսի մեկնութիւն թղթոյն Կորնթացոց», հավանական թարգմանիչ Ղուկաս վարդապետ հարբերոցի»⁵⁵⁶։

«Գրեով իմն վասն նախաստեմնութեան, Սրբոյն Թոմայի հրեշտակակրօն վարդապետի», զոր ըստ խնդրոյ Սարգիս վարդապետ Սարաֆյանի թարգմանած է Ղուկաս վարդա-

պետ, և զոր Սարգիս տպած է Վենետիկ 1748-ին, «էֆիմէրիտէ»-ի իբր հավելված:

Ղուկաս վարդապետի լատիններեն կամ իտալերեն թարգմանած այս զրթերեն առաջինն է միայն, որ լույս տեսած է Վենետիկ, Անտոն Պոռթուլիի տպարանեն 1750-ին, Սահակ Ահազիի պատրիարքի օանքերով, «Գիրք օրինակաց և նմանութեանց» տիտղոսով: Մնացյալները բոլորն ալ անտիպ կմնան և ամբողջ դարակ մը կլեցնեն Ղալաթիո երբեմնի մատենադարանին մեջ: Մեր պատանկության ժամանակ սարսափով և պակասուամով կդիտենք մենք զանոնք, երբ Կեղրնականի աշակերտներեն քանի մը բախտավորներու Բարզեն վարդապետի շնորհով ազտվելով, մատենադարանեն ներս կսպրկենք քանի մը վայրկյան:

Վիթխարի այս աշխատանքը, որուն լրջվեցավ Ղուկաս վարդապետ հարբերոցին հիացում միայն կրնա պատճառել մարդուն:

Կոլոտի հիմնած դասատունը հիշած մասմանակ պետք չէ մոռնանք հիշատակել նաև անունը անոր մեկ համեստ աշխատավորին, որ Կոլոտի և Ղուկաս հարբերոցի կողքին իր ուժերը ի սպաս է դրած սերունդի մը դաստիարակության:

Կոլոտ, Սկոթսի Աստվածարանության թարգմանության հիշատակարանին մեջ, ինք իսկ կհիշատակե զայն. «Եթեցեք նաև զհարազատն մեր ի Քրիստոսն զԳասպար դպիր Սեբաստացի, որ բազում երախտիս ունի վերայ մանկանց մերոց համբակաց»⁵⁵⁷։

Իսկ նալյան, որ սանն է եղած Գասպարի նարեկի Մեկնության հիշատակարանին մեջ սպասե կընորոշե զայն. «Սնան՝ զգաստիս րակն և դմանկամարզն լուսահողոյ հօր մեմբոյ դպրարան, նրբանկատ զհայրապետութի մեմբուրնի, զտիրացու Գասպար մահտեսի մեմբ Ամուռնայ կոչեցեալն Սեբաստացի, որ քաղուս երախտիս ունի ի վերայ մեր հայոց աշխակերտաց լուսահողոյն, յորոյ վտարանդութեանն ժամանակի՝ լեալ էր ասպնջական պատսպարան, և փոխարեարար կաթնաստիմաստից և մատակարար առ այլս»⁵⁵⁸։

Ուրիշ հիմնական մտահողություն մը, որ ոգևորեց Կոլոտի դպրոցը, հայ ժողովուրդը անցյալը վանքերու խուցեն լույս աշխարհ բերելու ցանկությունն եղավ: Հայոց պատմությունը կը պիտի չէր վանքերու նկուղներու մեջ, ուր հայ ժողովուրդը իր երեկը չէր ճանչնար: Գերության մեր դարերը ոչ միայն

551 Յովհաննէս Հաւեա. հիշված աշխատությունը, էջ 178.
 552 Կարինյան ցուցակ, էջ 2.
 553 Անդ, էջ 144.
 554 Անդ, էջ 220.
 555 Տոլյան, «Մալր ցուցակ», էջ 589.
 556 Անդ, էջ 589—570.

557 Բարզեն երոտակից կաթողիկոս, «Երեւակ Երեւոյցոց Ղալաթիո ազգային մատենադարան», էջ 17.
 558 Հովոթ Լալլե, «Գիրք մեկնութեան աղօրք Սրբոյն Գրիգորի նարեկացոյ հրեշտակական վարդապետին», Կ. Պոլիս, 1745, էջ 1186.

լայն խրամատով մը զատեր էին մեզ մեռնախնիքներու մեծ ճիգերեն, այլ նաև թանձր վարագույրի մը ետին կպահենին մեր անցյալը: Պետք էր այդ վարագույրը պատռել: Եվ այդ հնարավոր էր այն պարագային միայն, երբ վանքերու նկուղներեն դուրս կբերվեք մեր պատմութիւնը ու կսկսեին լույս տեսնել մեր պատմագիրները:

Նախաձեռնութեան պատիվը միմիայն վենետիկին շտանել Մխիթարյանները դեռ նոր սկսեր էին այդ մասին մտածել, երբ Պոլիս անաջին քայլերն առած էր: Կաթոլիկ արշավանքին գիմարելու համար, ան կարիք էր զգացեր սեփական ուղղափառութիւնն ապացուցանելու, և անհրաժեշտ էր գտեր դիմել հին աղբյուրներուն:

Լեոն կղզի, թե այդ քանը կրնար իրագործվիլ աճալոց գրականութեան հին հիշատակարանների հրատարակութեամբ: Եվ Կոստանդնուպոլիսն այս ապարեղում սկսում է կատարել շատ աչքի ընկնող, շատ հարգի գեր: Դեռ 1709 թվականին հրատարակվեց Ազաթանգեղոսի պատմութիւնը, և այս, ինչպես ասված է առաջաբանի մեջ, հատկապես այն նպատակով, որ հայերը կարգան և հասկանան, որ իրենք դավանում են Գրիգոր Լուսավորչի դրած հավատը և կարողանան պատասխաններ տալ հակառակորդներին: Նույն այդ նպատակն ունեն նկատի Կոլոտը, երբ 1719 թվականին հրատարակում էր Զենոք Գյակրի Հրատարակվեցին այնուհետև Փավստոս Բլուղանդացու (1730 թ.), Մեսրոպ երեցի (1737 թ.) պատմագրութիւնները: Դավանարանական հողի վրա աղգային գիտակցութիւնը զարգացնելու համար տպագրութեան էր տրվում հայկական միաբնակութեան այնպիսի անխոնջ և եռանդուն պաշտպանի մեծահատոր գրվածքները, ինչպիսին էր Գրիգոր Տաթևացին⁵⁰⁰:

Դավանական հարցերու առթիվ Կոլոտի մասին հայտնված թեր ու դեմ կարծիքներուն ակնարկելով, Օրմանյան կըսե, թե աճալոցովան ուղղափառութեան ներողամիտ սկզբունքին ուղղամիտ գործադիրն եղավ Կոլոտ: Հայը յուր դավանութեան ուղղութիւնը գիտնալով ու պաշտպանելով, և ուրիշ դավանութիւնները հերքելով հանդերձ, ընդհանուր քրիստոնեոսութեան սկզբունքը գերիվերո կդասե, և հավիտենական փրկութեան պայմաններու հետ յի խոսնէր և փրկութիւնը իրեն միայն սեփական իրավունք չի կարծէր, երբ ուրիշներու մոտ ալ տեսնէ քրիստոնեոսութեան սկզբնական և էական ճշմարտութեանց ներկայութիւնը: Եղան ժամանակներ՝ հորս նախանձահուգութիւնը մենամոլութեան և հա-

կառակութիւնները: Ընդդիմութեան առիթներ ընծայեցին, ինչպես ամեն արարք՝ հակարարք կղրղոնէ. սակայն այն ոչ օրենք էր և ոչ սկզբունք, և հանդարտ մըցում մը կրնար իրաց վիճակը ճշտել: Ահա այս դրութեան հավատարիմ հետևող մը եղավ Կոլոտը, հայադավանութեան պաշտպան, հոռմեադավանութեան ընդդիմաբան, բայց ոչ ամեն ինչ որ հայկական է, այդ պատճառով միայն՝ ընդունող և զովող, և ոչ ամեն ինչ որ հոռմեական է, այդ տեսութեամբ միայն՝ մերժող և անարգող⁵⁰¹:

Օրմանյան Կոլոտի լատինամտութեան իբր փաստ կհիշե Մխիթարի հրատարակութեանց հանդեպ իր քարյացակամ վերաբերութիւնը, անոնց պարունակութեանը համամիտ շքլատով հանդերձ, և իր տված զարկը լատիններեն գրքերու հայերենի վերածման, թեև անոնց բովանդակութեան լրիվ համաձայն չըլլա⁵⁰²: Հաննա վարդապետ, որ այնքան մտածել կճանչնար Կոլոտը և տեղյակ էր անոր բոլոր մտահոգութիւններուն, կըքմեղացնէր, ինչպես տեսանք, թարգմանութեանց առթիվ անոր ցույց տված լայնամտութիւնը⁵⁰³:

Եվ վերջապես Լեո, ինքն ալ, դրվատիքով կարծանագրե Կոլոտի լայնախոհ բայց անդիող ոգին դավանական վեճերու պահուն: Ընդհանարակ նա լայնախոհ և համբերող էր իբրև հողեւորական և իր նախորդների օրինակին չհետեւեց այն տիւրը և ցավալի հակառակութիւնների մեջ, որոնք բորբոքված էին լուսավորչական և կաթոլիկ հայերի միջա Կոլոտն այդ վեճերի մեջ մեղմ և հաշտեցնող ուղղութեան էր հետևում և դրանով քիչ չէր նպաստում որ խաղաղութիւն հաստատվի: Բայց այս քաղաքականութիւնը, իհարկե, չէր նշանակում բոլորովին լքել Հայ Եկեղեցու պաշտպանութեան գործը հանդեպ այն արշավողական ուժգին թափի, որով գործում էր կաթոլիկ պրոպագանդը: Կոլոտն այստեղ ոչ մի գիշում չէր անում, բայց վեճը նա վայրենի բռնութիւններ, ծեծի, աքսորի հողի վրա չէր դնում, այլ զուտ զազափարական մըցութեան հողի վրա: Հայ Եկեղեցու ինքնապաշտպանութիւնը հանձնվում էր բանաւոր և զրաւոր քարոզչութեան: Ընդունվում էր գրական պայքարի երկու ձև, մեկը՝ վիճարանութեան էր, որ վաղուց էր կիրառվում հայերի մեջ և արդեն մի խոշոր գրադարան էր մթերել դարերի ընթացքում, իսկ մյուսը՝ հայ ժողովրդի մեջ սեփական ուղղափառութեան գիտակցութիւնն ամրապնդելը⁵⁰⁴:

⁵⁰⁰ «Աղգոպատում», Բ, էջ 2227—2228.
⁵⁰¹ Անդ, Բ, էջ 2228.
⁵⁰² Անդ, Բ, էջ 2225.
⁵⁰³ Լեո, «Հայոց պատմութիւն», Գ, էջ 946.

⁵⁰⁴ Լեո, «Հայոց պատմութիւն», Գ, էջ 946—947.

Հայ եկեղեցւոյ կարկառուն դեմքերը գերեզման դեկլե առաջ Հոռմի դարբասեն անցնելու մոլորութիւնը, որ հիմնական մղձավանջներն մեկն է կաթոլիկ քարոզչութիւն, ցույց տրված է Կոլոտի պարագային ալ: Չամլյան, օրինակ, կ'փորձեց ցույց տալ, թե հայոց մեծ պատրիարքը իր աչքերը փակելէ առաջ, պահ մը Հոռմի ուղղեց դանոնքս⁶⁶⁴:

Գնք կրնար Կոլոտի շրջանը փակել, առանց քանի մը խոսք բսելու նաև այն մեծ հոգեւորականին մասին, որ Երուսաղեմի համար ալ միևնույն նախախնամութիւնն եղավ: Ինչ որ Կոլոտ եղավ Պոլսո Աթոռին համար: Կակնարկեմք Գրիգոր Շղթայակիր պատրիարքին, որ Ամրդուն եկեր էր ինչպես Կոլոտը, և հավատարիմ էր մնացեր, ինչպես Կոլոտը, այնտեղէն բերած իր ավանդութիւններուն: Սերտ կապը, որ միացուցեր էր գանոնք իրենց երիտասարդութիւն, շարունակեց պատրիարքական Աթոռներու վրա ալ, և առնք գործակցեցան իրարու, միակ ամբողջութիւն մը դարձած որքան իրենց հոգիներուն, նույնքան և ճիգերուն մեջ:

Գնահատութիւնը, զոր իր մասին կ'հշուսե շուհանեան Հաննան Երուսաղեմի նվիրած իր պատմութիւն մեջ, ձեռնաստուծի մը երախտագիտութիւն տուրքը չէ միայն, այլ խանդավառ մեկ ներքողը իսկական արժանիքի մը, որ իսկպպես հրաշք էր գործեր, իր իսկ աչքերուն տակ, փտութիւն այդ օջախին մեջ, զոր երբեմն-երբեմն եղած է Երուսաղեմը, ինչպես եղավ Շղթայակիրի Աթոռ գալեն առաջ:

Հայ կաթոլիկ պատմիչ Չամլյան, որ անկեղծութիւն պահեր շատ ունի անցյալ դեպքերը մեզ պատմած ժամանակ, նույնպէս անվերապահ է Շղթայակիրը տարփողած պահուն, ղնտեսալ նորա յԱթոռն Երուսաղեմի հետզհետէ վճարեաց զամենայն զպարտսն, և եհան զամենայն գրաւսն, և զարդարեար զվանսն և զեկեղեցիսն, և շքեղացոյց զնոսին ամենայն դարդու և փառօք, և նորոգեաց զայլ ևս եկեղեցիս հայոց և զվանօրայս: Բարձրացոյց զպարիսպ վանիցն, և շինեաց ի հիմանէ զսենեակս վասն ուխտատրաց, և ի մէջ Ս. Յակոբայ կառոյց խորան Ս. Նշանի, և մեծացոյց զաւանդատունն՝ յորում էր խորան Ս. Լուսաւորչին: Կառոյց և ի Ս. Բեթղեհէմ զվանք ծննդեան Քրիստոսի, և ժողովեաց անոր զմիանձունս: Եւ ի թուին Հայոց ՌՃՀԴ (1725) շինեաց զվանքն ի Յոպպէ, և ի նմա զեկեղեցի Սրբոյն Նիկողայոսի: Նորոգեաց և զՍուրբ Հրեշտակապետի վանքն. և կանգնեաց յեկեղեցւոյ նորա խորան Սրբոյն Հոփսիսմեայ: Եւ յետ երկուց ամաց հրաման

հանեալ արքունուտ ձեռամբ Յովհաննէ պատրիարքին՝ նորոգեաց և զեկեղեցի Սրբոյն Յակոբայ հրաշալի յօրինուածովք: շինեաց և զայն բազում ինչ գորոց կարես տեսանել ի գիրս Հաննէ վարդապետի: Եւ զայս ամենայն անէր յաջողութեամբ մեծաւս⁶⁶⁵:

Կոլոտի շրջանի կարգ մը դեպքերուն դեպիտի անդրադառնանք հետագա հատվածներու մեջ: Փակելու առթիվ իր կյանքին և իր գործունեութիւն նվիրված այս հատվածը պետք է ըսենք այժմէն իսկ, թե ինչպես Պոլսո Պատրիարքական Աթոռին, նույնպես Պոլսո հայ գաղութին կյանքը քացաւիկ դեմք մտ կարձանագրեն հանձին Կոլոտի:

Երբ Կոլոտ իր աչքերը կ'փակեր 1741-ին իր Աթոռը իր ձեռնաստուծ Հարկոբ Նալյանին հոգածութիւն հանձնելէ հետո, ան արդեն տեղ գրաված էր հայ ժողովուրդի սրտին մեջ 26 տարիներու իր գործունեութիւնամբ, որովհետեւ ան ոչ միայն մեծ պատրիարք մը հանդիսացած էր այդ գործունեութիւն բոլոր մարզերուն վրա անխտիր, այլ մեծ էր եղեր նաև իր նկարագրով, եղեր էր անբասիր հոգեւոր հայր իր հոտին:

Դարձ մը հետո, որ լեցուն էր եղեր իր տագնապներով և իր ալեկոծութիւնները փոխանցեր էր իր հաջորդին ալ, Կոլոտ կուգար խաղաղութիւն բերել հոգիներու մեջ, ճիգերու լծել շուրջի մարդիկը, և ճամբա բանալ նոր մարդոց, որոնք պիտի գային լծվիլ նոր ճիգերու:

Օրմանյան իրավունք ուներ հետևարար գրելու, թե ղշուհանեան պատրիարք Բաղիշեցի, մականվանյալ Կոլոտ, ոչ միայն յորդարուն, այլև շատ դարերու համար կարկառուն դեմք մըն է. կարողութիւն և արդյամբ մեծ, որ Սահակներու և Շնորհալիներու պես հոչակ և պաշտամունք իսկ ունեցած կըլլար. եթե ավելի հին դարերու մեջ ապրած ըլլարք⁶⁶⁶:

Նոր դարերու մեջ եթէ մարդիկ ավելի ժլատ են հոչակ ու պաշտամունք ընծայելու համար մեծ դեմքերու, Կոլոտի համար հայ ժողովուրդը երախտիք մը միշտ պարտական է մարդու մը, որուն նվիրված իրենց գնահատանքին մեջ անվերապահ եղան ինչպես իր ժամանակակիցները, նույնպես և նոր օրերու մարդիկը:

Նույնքան անվերապահ է կեոն իր գնահատութիւն մեջ, և Կոլոտին վիճակված էր այնպէս ժամանակների համար մի շտեմնվածութեալ, — կըսե ան, — նա պատրիարքութիւն արավ մինչև իր մահը, շուրջ 26 տարի, և այլքան ժամանակ նրան ոչինչ չխանգարեց:

⁶⁶⁴ Չամլյան, Գ. էջ 824.

⁶⁶⁵ Անդ, Գ, էջ 774—775.

⁶⁶⁶ Եկեղեցւոցաբան, Բ, էջ 2939.

իբր գործունեությունը ծավալելու: Այդպիսով նա դառնում էր մի դարազուլիս արևմտյան հայության մտավոր կյանքում: Բաղնջի դպրոցը Բոսֆորի ափերին ամենից առաջ նույն ներգործությունն էր անում, ինչ արել էր մի ժամանակ Սյունյաց դպրոցը: Նա դաստիարակեց զարգացած, բարեխիղճ հոգևորականներ, որոնք բարեգործության սերմերը մտցրին կյանքի մեջ, ուր մինչև այդ տիրում էր փողապաշտ և փառամոլ ու բարոյապես փշաքած եկեղեցականությունը⁵⁰⁷:

Կոլոտ բամնվեցավ աշխարհեն լուսավոր հետք մը ձգելի հետո ետևեն:

«Կոլոտը վախճանվեց 1741 թվականին, թողնելով մի բավական խոշոր և բարեկարգ ժողովուրդ, — կգրե գարձյալ լեռն: — Նրա ժամանակ Կոստանդնուպոլսում տպագրվեցին 80-ից ավելի գրքեր, մի հարստություն, որ դեռ չէր տեսել հայ իրականությունը: Նրա թողած դպրոցը հարուստ էր մտքի զարգացողությամբ և իր ձեռքին ունեւր այնքան կանոնավորված ու մշակված մի գրառար լեզու, որ համեմատել անդամ չէր կարելի նախընթաց ժամանակի աղքատ ու աղճատված լեզվի հետ: Կարելի էր ասել, թե Բաղնջի դպրոցը հայոց դասական լեզվի վերածնունդն էր սկսում Կոստանդնուպոլսում»⁵⁰⁸:

Անիրավություն պիտի բլլար մեր կողմն վերջին խոսքը շտալ Եկեղեցվո ուրիշ կարկառուն դեմքերեն մեկուն՝ Բարզենի, որ իբր աթոռակից պիտի բազմեր Կիլիկիո Աթոռին վրա և որ Կոլոտի կենսագիրն եղած էր իր վարդապետության ժամանակ, այնքան շերմ տողերով պատմելու համար մեծ պատրիարքի մը բեղմնավոր կյանքը: Տարփողելի հետո նկարագրի մարդը հանձին Կոլոտի, Բազենն կգրե. «Բարքերու ապականութենեն հառաջ եկած այն մեծ հրդեհը, որ էրած տոշորած էր եկեղեցական և կրոնական վերակենդանության վրա սավառնող ամենեն ազնիվ հույսերը և կսպառնար բուն գեղեցիկ շենքն ալ լափլիզել, Կոլոտն է, որ Բարելունի հնոցին մեջ զովություն սփռող հրեշտակի պես կմտնե բոցերուն մեջ անխուսիք և իր տեսական և տոկուն գործունեությամբ կկնքե իր կոչումն ու պաշտոնը»⁵⁰⁹:


Ուրիշ բան պիտի չուզենք ավելցնել, բայց եթե սա հակիրճ եզրակացությունը, թե Կոլոտի հետ Պոլիս նոր կյանք կսկսեր, իր դերին գիտակցիլ կսկսեր ան:

⁵⁰⁸ Բարզեն ծայրագույն վարդապետ Կյուլեսերյան, հիշված աշխատությունը, էջ 88:

⁵⁰⁹ «Ելքիածին» ամսագրում ընդհատում ենք բազմավաստակ և ծանոթ բանասեր Լ. Ե. Սիրունու «Պոլիս և իր դերը» արժեքավոր և ընդարձակ ուսումնասիրության մաս առ մաս հրատարակությունը, այն լրիվ ազգագրված և շուտով գրքի վերածված տեսնելու սրտագին ցանկությունով: — Եմրագրություն «Ելքիածին» ամսագրի:

⁵⁰⁷ Ան. Ղալոց պատմություն, Գ, էջ 945:
⁵⁰⁸ Ան. Գ, էջ 950:





Խ. ԿԱՆԱԳԱՆ

ԻՄ ՀՈՒՇԵՐԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ԾԵՄԱՐԱՆԻՑ

Ծ Ե Մ Ա Ր Ա Ն

Ուր ու երթա, ինչոր լինի կյանքի մեջ,
Սրտումդ անշիջ գու միջո պաներ գեթ մի բան,
Քի ցուրտ գիրի շեղմանցնոց բոց անշիջ,
Վե՞տա հոգույդ խախտույս ավոզ հնետուն՝
Մի մայր ունի, նորա՞ն հիշիր սիրտանիջ
Եվ միջո կրկնի՞ր՝ «Կեցցի՛» հավերժ ձե մ ա ր ա ն ց ։

Հ. Հովհաննիսյան

Ի՛մ սիրելի ուսուցիչ, հայ ժողովրդից սիրված բանաստե՛ղծ, ես երբե՛ք, երբե՛ք չեմ մոռացել ու չեմ մոռանում քո վերոհիշյալ պատվերը, որ դու կարդացիր 1899 թվականին, ձեմարանի 25-ամյա հորեւյանին՝ հանդիսասրահում։ Ոչ միայն ես, այլ նաև յուրաքանչյուր ձեմարանցի, ինչ հայացքների ու դավանանքի էլ լինի, ընավ չի մոռանա մեր Մայր ձեմարանը, մեր Ալմա Մառերը։

Ձեմարանը իր կարճատև գոյության ընթացքում (1874—1918) փայլեց մեր խավարույին երկնակամարի վրա և իր լուսավորչողերով լույս ու շերմություն տվեց հազարավոր հայ մանուկների հոգուն ու մտքին։ Այդ մանուկները, հասուն պատանիներ դարձած, ցրվեցին մեր գյուղերն ու քաղաքները, ուր շուրջ թաղումք էին և մշակք սակաւ։

Ինչպե՛ս կարող եմ մոռանալ ինձ շխարհույս ավոզ հենարանա-ս, ոգի և հույս ներ-

շնչող մեր լուսո տաճարը, քանի որ նրա տված սնունդն է, որ տակավին փնձ կանգուն է պահում, նրա հայրենաշունչ ոգին է, որ դեռևս կայտառ է իմ մեջ, և միշտ պատրաստ եմ վիրարիելու այն հայ ժողովրդին, նրա ուսումնատենչ դավաններին...

Արդ, այժմ, 80-ամյա այս հասակումս, մտքով թռչում եմ դեպի անցյալը, հիշողությամբս մեջ պայծառանում եմ անցած-գնացածս իմ քաղցրանուշ, և երբեմն էլ դառնագին դեպքերն ու դեմքերը։

Կրկին քո գիրկն եմ գալիս իմ գորովագույթ, սնող մայր, իմ հողևոր ծնող։ Համբույր քո շենքի քարերին, լայնաբաց դռներին։

Վաղո՛ւց, շա՛տ վաղուց արդեն հասունացել էր այն խնգիրը, որ անհրաժեշտ է Հայաստան-

նում, հայ ժողովրդի ժողով, ունենալ մի բարձրագույն դպրոց, մի ակադեմիա՝ ճեմարան, որտեղ աշխարհի զանազան վայրերում ցրված հայ մանուկները հավաքվին և մայրենի լեզվով բարձրագույն կրթություն ստանային, ունենալ մի ճեմարան, ուր հայագիտական առարկաները պետք է լինեին ուսուցման հիմքը, և այդ հիմնարկից պետք է դուրս գային անձնավեր գործիչներ մեր ուսումնածարավ ժողովրդի համար:

Հայաստանում ակադեմիա հիմնելու կարեւորություն մասին խոսել ու գրել են դեռևս մեր լուսավորիչները՝ Ս. Նազարյան, Մ. Նալբանդյան, Ս. Շահադիզ և ուրիշները: Այդպիսի լուսո մի ջահ հարկավ պետք է վառվեր ու բողկտար հայ ժողովրդի մեջ, հայ հողի վրա ապրող ժողովրդի մեջ և ոչ թե Հայաստանից դուրս՝ զաղթարկյալներում:

Հայկական բարձրագույն դպրոցի՝ ճեմարանի հիմնադրումը վերջապես տեղի ունեցավ այն ժամանակ, երբ լուսավորիչ Գահին բազմեց Գևորգ Գ Կաթողիկոսը, որին խոշորագույն հայագետ Մ. Արեղյանը «մեծագործ» տիտղոսով է հորջորջում:

Գևորգ Գ Կաթողիկոսը 1869 թվականի մայիսի 25-ին, իր օժման երկրորդ տարեդարձի յոթ, պատարագից հետո, եկեղեցական թափուրով դալիս է ճեմարանի շենքի հիմնարկությունն օրհնելու: Իր ձեռքով առաջին հիմնաքարը դնելիս, ասում է. «Զգործս ձեռաց մերոց ուղիդ արա ի մեզ, Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողած՝ մեզ»:

Իսկ երկրորդ հիմնաքարը դնելիս ասում է. «Տառ Մեքուպեան և ուսումն՝ տան կեանս հայուն հաստատուն»:

Մեծ դժվարություններից հետո, ճեմարանի շինությունն ավարտվում է 1874 թվականին: 1874 թվականի սեպտեմբերի 28-ին, կաթողիկոսի անվանակոչության տոնի օրը, Ս. Գևորգ զորավարի տոնին, կատարվում է դպրոցի բացման հանդեսը, ուխտավորների և ժողովված հանդիսականների բազմության ներկայությամբ: Երկուշաբթի առավոտյան, սեպտեմբերի 30-ին, սկսվում են դասերը: 1874 թվականի մայիսի 11-ին, կաթողիկոսը Կովկասի փոխարքային հայտնում է ճեմարանի բացման մասին: Կայսեր կողմից հաստատված նոր ծրագրով, ուսման տնդությունը լինելու էր 9 տարի, որից 8 տարին դպրոցական և 3 տարին յարանական բաժինների:

Ցարական Ռուսաստանի ձուլման քաղաքականության գաղտնի գործողությունները երբեմն-երբեմն դառնում էին բացահայտ:

Հերթական հայահայտ քաղաքականությունը բռնկվեց 1895 թվականին, Ցարական մի հրամանով փակվեցին հայկական ժողովրդական դպրոցները:

1895 թվականի գարնանային մի առավոտ մենք, Իգդիրի ծխական դպրոցի բազմահարյուր սանիկներս, ուրախ-ուրախ թռչկոտում էինք դպրոցի ընդարձակ բակում, խոսում, երգում, պարում էինք և արդեն հոգնած խաղերից, անհամբեր սպասում էինք դպրոցի զանգի հրավերին դեպի դասարանները: Սակայն զանգակի ձայնը ուշանում էր... Ներսում, ուսուցչանոցում, ինչ որ իրարանցում էր. դռան բացվածքից ուստիկաններ էին երևում՝ ուսադիրներով, սրերով...:

Հանկարծ հուժկու և զայրագին հնչեց դպրոցի զանգը... Ամբողջ աշակերտությունը հավաքվեց պատշգամբի առաջ: Պատշգամբում կանգնած են մեր ուսուցիչները տխուր, մթազնած դեմքերով: Նրանք գոժում են մեզ մեր սիրելի դպրոցի փակումը... Աշակերտները հուզվում են: Լացն ու կոծր պատում է ողջ բակը: Զենք բաժանվում դպրոցից: Սակայն անողոր իրականությունը կատակ չէր անում: Դպրոցի դռները փակվեցին մեր առաջ: Երկա՛ր, երկա՛ր ժամանակ չէինք հեռանում մեր հարազատ դպրոցից: Վերջապես ցրվեցինք: Գլխիկոթ, իբրև սզվորներ, կամաց-կամաց, երերուն քայլերով հեռացանք մեր տները, մեր վշտերին հաղորդակից դարձնելով նաև մեր ծնողներին:

1896 թվականի օգոստոսի վերջերին, ճեմարանի ընդարձակ բակում ետուզեո է: Հավաքված են հարյուրավոր մանուկներ և պատանիներ: Փակված դպրոցների ուսումնածարավ հայ պատանիները ցանկանում են իրենց ուսումը շարունակել ճեմարանում: Յուրաքանչյուրի համար մեծ բախտավորություն էր այդ հիմնարկությունն ընդունվելը: Այդ տարին ճեմարանն իր գիրկն ընդունեց սովորական քանակից շատ ավելի աշակերտներ, բայց և այնպես շատ-շատները դուրս մնացին:

Սո ընդունվեցի Ա դասարան: Սեպտեմբերի 1-ին սկսվեցին դասերը: Հետզհետե վարժվեցի ճեմարանի զիշերօթիկ կյանքին, նրա կարգ ու կանոնին, սովորություններին: Պարսկաստանից, Քուրդիստանից, Բուլղարիայից, Ռումինիայից և այլ տեղերից եկած հայ պատանիները ծանոթանում էին միմյանց հետ: Ճեմարանի սաները, հատկապես ավագ դասարանների աշակերտները և յարանական ուսանողները, ցույց էին տալիս նորեկներին սիրալիք, եղբայրական վերաբերմունք: Է՛յ շնմ խոսում մեր ուսուցիչների մասին, որոնք դասախոսությունները դարձնում էին հրապուրիչ, իրենց բարձր գիտելիքների և դասա-

1 Ճեմարանի հիմնադրման տեղեկությունները առկա են Մ. Արեղյանի «Գևորգ Գ Մեծագործ Կաթողիկոս» գրքից. ապ. Վաղարշապատ, 1898 թ.:

վանդան դաստիարակչական մեթոդների շնորհիվ:

Ճեմարանը միշտ էլ ունեցել է քարձր որակի ուսուցչական կազմ, Գեոևս Ճեմարանի հիմնադիրը՝ Գևորգ Գ Կաթողիկոսը մտաճողված էր Ճեմարան նրավիրելու հայ իրակաևնության մեջ հայտնի գիտնականներին, մանկավարժներին: Նա նյութական միջոցներ չէր խնայում հրավիրված ուսուցիչներին բարձր փիճակում պահելու Վաղարաշապատ գյուղաքաղաքում: Սկզբնական շրջանում, և այնուհետև Ճեմարանն իր հարկի տակ ունեցել է Գարբիել Եպիսկոպոս Ալվազյան, Արշակ Նահապետյան (հետագայում վարդապետ), Սահաբիա Եպիսկոպոս Օրմանյան, Ղազարոս Աղաթախ, Մկրտիչ Պալյան, Սեդրակ Մանդինյան, Մինաս Բերբերյան, Լեոն Մանվելյան, Փիլիպոս Վարդանյան, Ստեփան Պալասանյան, Ստեփան Մալխասյան, Լեո և այլ երևելի դասախոսներ:

Իմ ճեմարանական կյանքի ընթացքում, — 6 տարի դպրոցական բաժնում և 3 տարի յարարանական, — ես ունեցել եմ անվանի դիտնական-մանկավարժ դասախոսներ, ինչպիսիք էին Կարապետ Կոստանյանը (վերատեսուչ), Հովհաննես Հովհաննիսյանը, Ստեփան Կանայանը, Մանուկ Արեղյանը, Հրաչյա Անճադյանը, Հակոբ Մանանդյանը, Սիրական Տիգրանյանը, Սեթ Հարությունյանը, Գարեգին Լեոնյանը, Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, Գարեգին վարդապետ Հովսեփյանը (հետագայում Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո), Կոմիտասը և ուրիշներ:

Ճեմարանն ուներ նաև վերակացուներ, որոնք հսկում էին կարգ ու կանոնին և սերտողությունների ժամանակ աշակերտներին օգնում էին, երբ նրանք դաս պատրաստելիս որևէ զժվարություն էին հանդիպում:

Հարկավ ոչ բոլոր վերակացուներն էին կարողանում աշակերտներին հարցումներին պատասխանել:

Աշակերտները հեշտությունը կարողանում էին վերահասու լինել նրանցից յուրաքանչյուրի բնավորությունն ու գիտելիքներին:

ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՑՈՒՆԵՐԸ

Գևորգ Ղազարյան. — Մեր վերակացուներից մեկը Գևորգ Ղազարյանն էր: Նա շատ բարի մարդ էր, վերին աստիճանի աշխատասեր, իր գործին նվիրված մի անձնավորություն: Նա երբ Ճեմարան եկավ, համարյա թե հայերեն չգիտեր: Ճեմարանի մթնոլորտում Ղազարյանը այն աստիճան հմտացավ հայերենին, որ սկսեց գրքեր թարգմանել ուսերենից հայերեն: Սակայն նա մի թուլություն ուներ,

այդ այն էր, որ նա անպատճառ ուզում էր աշակերտներին հարցերին պատասխանած լինել, թեկուզ իրեն տրված զժվար հարցերին: Երբ արձանակ աշակերտները, օգտվելով նրա նոր թույլ կողմից, երբեմն դիտմամբ այնպիսի հարցեր էին տալիս, որ նա զժվարանար պատասխանելու: Ղազարյանը գրաբար չգիտեր, նոր էր սովորում: Մի անգամ մեր ընկերներին մեկը դիմեց նրան սերտողության կերտերից մեկը դիմեց նրան սերտողության ժամանակ, թե՞ «Պարոն Գևորգ, ի՞նչ կնշանա՞ծագցես»: Կմկմաց, կմկմաց և ասաց՝ «գոգնոց»: Ասաց և հետագայով Մենք փոթկացինք: Եվ այսպես, մեկ-մեկ կրկնվում էին մեր նման շարահանությունները:

Մկրտիչ Ղազարյան. — Վերակացուներից հատկապես հիշատակելու արժանի է Մկրտիչ Ղազարյանը: Սա բարձրահասակ, ազդեցիկ զեմրով, լուրջ, մտախոհ մի մարդ էր: Նա մեզ պանդուխտ էր Հայաստանի աշխարհագրություն, նրա դասերը հետաքրքրական էին, բայց գիտեր թե՞ պատմական՝ հին աշխարհագրությունը և թե՞ նորը: Ղազարյանը շրջել էր ամբողջ Հայաստանով մեկ և մեզ նյութեր հաղորդում էր իրեն կենդանի վկա, նա սիրում էր առարկան և նույնը պահանջում մեզնից: Մկրտիչ Ղազարյանն այնպես էր մեզ ուսուցանել մեր աշխարհը, որ առարկան ավարտելուց հետո, քննություն ժամանակ պահանջեց ոչ միայն բերանացի պատասխանել անցած նյութը, ամբողջ ծրագիրը, այլ նաև՝ գրավոր: Ի՞նչ էր այդ գրավորը: Մենք պետք է ամբողջ Հայաստանը գծագրեինք, քարտեզ կազմեինք: Քարտեզի մեջ գծագրելու էինք լեռները, գետերը, լճերը, նշելու էինք քաղաքների տեղերը՝ գրելով պատմական և ժամանակակից անունները: Մինչև հիմա ինձ մոտ մնացել են Հայաստանի աշխարհագրության թերթեր, որոնց վրա գծագրված են մեր գետերն ու լեռները՝ իրենց ջրաբաշխներով հանդերձ:

Մկրտիչ Ղազարյանը վերջում ձեռնագրվեց քահանա և մեկնեց Պետերբուրգ, այդտեղի հայ գաղութին սպասարկելու համար: Մեր ժողովրդի ծանր օրերի ժամանակ, 1919—1920 թվականներին, նա օգնում էր ժողովրդին, խրախուսում նրան, հույս ներշնչում լավ ապագայի համար: Վերջում Ղազարյանը զոհվում է իր հայրենասիրական պարտքը կատարելիս:

Մառտիրոս Հախնազարյան. — Սա հին ճեմարանավարտ էր, ինչպես նաև Մկրտիչ Ղազարյանը, սակայն Հախնազարյանն իր բնավորությամբ հակազդվում էր Մկրտիչ Ղազարյանին: Հախնազարյանը պուրջ կախ, ինքն իր մեջ ամփոփված մի մարդ էր, բոլոր աշակերտներին նկատմամբ չէր ցուցաբերում

հավասար, արդարամիտ վերաբերմունքը նա ունեւր իր հատուկ համակրանքին ենթակա աշակերտներ, ուշադրութեան կենտրոնում երանք էին, մյուսներով քիչ էր հետաքրքրուում, այդ պատճառով էլ նա առանձին հարգանք չէր պատելում աշակերտութեան կողմից: Սակայն պետք է ասեմ, որ նա գիտակ էր, դարգացած, մեր յուրաքանչյուր հարցին բազմակողմանիորեն բացատրութեան էր տալիս: նա ցածր դասարաններում պարապում էր հայոց լեզու:

Քերոք Միրաբյան.— Ճեմարանն ավարտելուց հետո զինվորական ծառայութեան կանչվեց և սպայի կոչում ստացավ: նա Ճեմարանի հրավիրվեց իրեն վերակացու և մարմնամարզութեան ուսուցիչ: նրա հերթապահութեան ժամանակ կարգ ու կանոնը աշակերտների մեջ ավելի բարձր մակարդակի վրա էր: Մեծ ոգևորութեամբ էին անցնում նրա մարմնամարզութեան դասերը: Աշակերտներին շարքերով կանգնեցնում և ուղղակի կրկնում էր սովորեցնում: Ճեմարանի բակից հաճախ դուրս էինք դալիս վաղարշապատի դաշտերը, երգերի թնդումների տակ քայլելով անցնում էինք դեպի Իգդիր տանող խճուղին:

Հաճախ Քերոք Միրաբյանին ուղղակի կոչում էինք սեղաբայր Քերոք և ոչ թե սպարոն Քերոք, որովհետև քիչ ժամանակ առաջ էր ավարտել Ճեմարանը:

Հովսեփ Գրիգորյան.— Սրան ևս աշակերտութեան մեծամասնութիւնը սեղաբայր Հովսեփն էր կոչում: Ահա մի անձնավորութիւն, որ իննհարյուրական թվականներից սկսած մինչև վերջ, մինչև Ճեմարանի փակվելը՝ 1918—1919 թվականները, անընդհատ մնաց Ճեմարանում և իր ամբողջ նվիրվածութեամբ ծառայեց նրան: նա ցածր դասարաններում աշխարհագրութիւն էր ավանդում: Թե՛ իրրև դասատու և թե՛ իրրև վերակացու նա սիրված էր Ճեմարանի ամբողջ ընտանիքի կողմից: Հովսեփը Ճեմարանի կենդանի պատմութիւնն էր: Ճեմարանի վերաբերյալ անցած, մոռացված դեպքերի ու դեմքերի մասին՝ ամեն մի տեղեկութիւն կարելի էր ստանալ սեղաբայր կամ պարոն Հովսեփից: Ճեմարանի փակվելուց հետո նա ապրում էր Երևանում, զբաղվում էր թարգմանական գործերով:

Հակոբ Արիստակեսյան.— Հիշենք նաև Հակոբին, Ճեմարանավարտ այդ վերակացուին: Բարձրասակ, հաղթանդամ, կարգ ու կանոն սիրող համակրելի մի երիտասարդ էր նա, նվիրված իր գործին: Հետագայում, սովետական շրջանում, նա հայտնվեց Երևանում և զբաղվում էր ուսուցչութեամբ: Լավ, սրտակից ընկեր էր, իր կողման բարձրութեան վրա կանգնած: Զերմորեն սիրում էր իր հայրենիքն ու նրա մշակույթը:

Ճեմարանի վերակացուները աշխատում էին հերթափոխութեամբ, ամեն մի հերթին երկու հոգով: նրանց պարտականութեան մեջ էր մտնում նաև աշակերտներին կենդանի սուսնորդելը, սեղանատուն տանելը, գրասանքի հանելը: նրանք միևնույն ժամանակ աշակերտների մեջ ծագած թյուրիմացութիւնների, ընդհարումների դատավորն էին:

Ճեմարանի պաշտոնյաների շարքում անհրաժեշտ է հիշել նաև Կարապետ Քոչարյանին, որ նույնպես Ճեմարանի նախկին սաներից մեկն էր: նա վարում էր Ճեմարանի վարչութեան դիվանի գործերը: նա մի հմուտ և դիտակ զիվանապետ-քարտուղար էր: Համեստ, աշխատասեր, պարտաճանաչ մի անձնավորութիւն էր Քոչարյանը: Ճեմարանի թե՛ ուսուցիչների և թե՛ աշակերտների կողմից հարգված մարդ էր նա, որը մնաց նույն պաշտոնում, կարծեմ, մինչև Ճեմարանի փակվելը:

Զի կարելի չհիշել Արովյան եղբայր Մեսրոպին: նա, ավարտելով դպրոցական բաժինը, մնաց Ճեմարանում, իրրև տնտեսական բաժնի վարիչ: Այս պաշտոնում նա մնաց երկար տարիներ: նա իր պաշտոնը կատարում էր ամենայն բարեխղճութեամբ: Մեծ հոգատարութիւն էր ցուցահանում աշակերտների նկատմամբ, ամեն կերպ աշխատում էր ըստ կարելիւնի աշակերտների սպասարկումը անթերի դարձնել: Աշակերտները շատ էին սիրում այդ աշխատասեր, անաչառ մարդուն:

ՃԵՄԱՐԱՆԻ ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

Կարապետ Կոստանյան.— Սա մեր հայ իրականութեան մեջ հայտնի հայագետ-գիտնականներից է: Ունի երկու տասնյակից ավելի բանասիրական արժեքավոր աշխատութիւններ: Առաջին անգամ նա՝ հայտնաբերեց մեր միջնադարյան տաղերգուներին և գրական-բանասիրական աշխարհում դրանց շուրջը առաջ բերեց հատուկ հետաքրքրութիւն: նրան այնուհետև հետևեցին շատերը:

Իմ նպատակը չէ Կ. Կոստանյանի զբաղանադիտական գործունեութեան մասին խոսել: Ես ուզում եմ միայն մի քանի խոսք ասել նրա Ճեմարանում ունեցած գործունեութեան մասին:

Կոստանյանը երկար տարիներ եղել է Ճեմարանի ուսուցիչ և վերատեսուչ: Ես, դժբախտաբար, նրան անմիջապես չեմ աշակերտել: նրա հոյակապ դասախոսութիւնների մասին խոսում էին մեր ավագ ընկերները առանձին սքանչացումով: Պատմում էին, որ նա իր արտահագուստի բաղում զրպաններում դրած ունեւր վենետիկյան հրատարակութեան մեր մատենագիրները, որոնք, ի պահանջել հար-

կին, հանձնում էին գրպաններից և ընթերցվում լսարանում:

Երբ ես ձեռնարան ընդունվեցի, տեսուչը կամ ավելի շուտ վերատեսուչը (ռեկտորը) կարապետ Կոստանյանն էր: Նա վերատեսուչության էր կոչվել 1893 թվականին, մնացել էր այդ պաշտոնում մինչև 1898 թականը: Որոշ ժամանակ անցնելուց հետո, նա նորից հրավիրվել է ձեռնարան:

Կոստանյանը միջազատակ, արդեն հասուն տարիքի մի անձնավորություն էր: Նա ազդեցիկ դեմք ուներ, քայլում էր դանդաղ ու վեհ: Նրանից պատկառում էին թե՛ ուսուցիչները և թե՛ մանավանդ աշակերտները: Վերջիններիս նույնիսկ քաշվում, երկյուղ էին զգում նրանից: Նրա կարգ ու կանոն սիրելը, խստապահանքությունը բոլորիս քաջ հայտնի էր: Նա երբեմն-երբեմն շրջում էր քակում: Հազվագյուտ դեպքերում էր խոսույժ որևէ աշակերտի հետ: Ընկարգություն և կատելիս, նա շտենեկում էր տալիս: Մեզ թվում էր, թե նա չի հետաքրքրվում մեր կյանքով, անտարբեր է, սրբուրողիբարտ: Սակայն նա հարկ եղած դեպքում կանչում էր իր մոտ որևէ աշակերտի կամ ուսանողի և նրա հետ զրուցում մեզմ, հայրական, խրատական եղանակով: Իրեն հեռու պահող այդ մարդը մեզ բոլորիս ճանաչում էր հականե-հանվանե: Զարմանում էինք, երբ նա հիշեցնում էր մեզ մեր արած սխալությունները, կամ լավ դաս չպատասխանելու դեպքերը:

Կոստանյանը համառ հայրենասեր գործիչ էր: Ամեն միջոց և իր հեղինակությունը գործ էր դնում ձեռնարանը իր կոչման բարձրության վրա պահելու համար:

Իր տեսչական շրջանում Կոստանյանը երբեմն-երբեմն դասեր էր լսում: Դասը սկսվելուց մի երկու րոպե անց ներս էր մտնում և նստում մինչև դասի վերջը:

Կոստանյանը ճարտասան չէր, սակայն խոսում էր գրավիչ, հեղիկ ու հանդարտ զարգացնում էր իր միտքը, հուզվում էր և հուզում: Հիշում եմ նրա ճառը, որ ասաց Գամառ-Փաթիպայի կիսարձանի բացման օրը, կարծեմ 1897 թվականի աշնանը: Նա արտասանեց, իբրև ընտանիքի ճառի, Գամառ-Փաթիպայի սիմ կտակը:

Եվ այնքիս մեջ մի հատ սին փառք ունեցա, Սուրբ էջմիածնում թաղվել ցանկացա, Սիրակյան իմ ազգ, թե Աստված սիրես, Այս իմ մի հատիկ իղձս կատարես:

Բանաստեղծի իղձը չկատարվեց. էջմիածնում լթաղվեց, սակայն նրա կիսանդրին դրվեց ձեռնարանի հյուսիսային բակում:

Կոստանյանը, ինչքան որ խիստ ու ասամարդամտա էր ձեռնարանում, նույնքան

մեղմ, սրտակից բարեկամ էր իր նախկին սաների հետ ձեռնարանի պարսպաններից դուրս: Պաշտոնից ազատված ժամանակ էլ հանդիպելիս սրտազին, բարեկամական վերաբերմունք էր ցուցահանում:

Կարապետ Կոստանյանը 1911 թվականից սկսած մինչև իր մահը կազարյան ձեռնարանի տեսուչն էր: Նա վախճանվեց Մոսկվայում 1920 թվականին:

Արժե հիշել նաև Կոստանյանի կնոջը՝ Տիրուհի Կոստանյանին, որն իր ամուսնու հավատարմի ընկերն էր, ինքն էլ էր գրականությունը գրող: Ունի շատ թարգմանություններ գերմաներենից հայերեն, մանավանդ մանկական-պատանեկան աշխարհին վերաբերող:

Կուրապետ Տերյան.— Մաթեմատիկայի և ֆիզիկայի լավագույն մի ուսուցիչ էր Տերյանը: Նա կատարելագույն տիրապետում էր իր առարկային, ավանդում էր գեղեցիկ հայերենով, քանզի նա ևս հին ձեռնարանավարաններից մեկն էր: Նա աշխատում էր ըստ հնարավորության բոլոր տերմինները կիրառել հայերեն լեզվով: Նրա լավագույն աշակերտներից էր Արշակ Տոնյանը՝ Երևանի պետական համալսարանի քաջամուտ դասախոսը, որ մաթեմատիկան ավանդում էր հետաքրքրական, գրավիչ, անուշ հայերենով: Նա ևս, հետևելով Տերյանին, մաթեմատիկայի տերմինները մեծ մասամբ հայերեն էր դարձնում և եղածը հարստացնում էր իր հմտությունը և նախանձախնդրությունը: Սակայն Տերյանի պակասությունն այն էր, որ նա խստապահանք չէր: Դաս լիմացող աշակերտը նրա դասին ներկայանում էր մի քանի րոպե ուշ, քանի որ Տերյանն ամբողջ դասի ընթացքում միայն մեկ հոգու էր հարցնում: Մյուսներին, երբեմն, տեղում հարցեր էր տալիս: Մի անգամ պատմում են, մանկավարժական խորհրդի նիստում քննվում է աշակերտության առաջադիմության հարցը: Տերյանը ֆիզիկայից 6-րդ դասարանում բոլորին նշանակել էր 4 և 5 թվանշան: Կոստանյանը զարմանքով հարցնում է. «Պարո՛ն Տերյան, մի՞թե դասարանում թույլ կամ միջակ աշակերտ լուռնե՞ք»: Տերյանը, որ ընդհանրապես լուսկյաց, շատ սակավախոս մարդ էր, կմկմում է և պատասխան տալ չի կարողանում: Հետևյալ եռամսյակին Տերյանը նույն դասարանի աշակերտներին ֆիզիկայից նշանակում է միայն 2 և 3 զնահատական:

Տերյանի հակատիպն էր ձեռնարանի մեկ ուրիշ մաթեմատիկոս՝ Պետրոս Տիգրանյանը: Նա մեզ ավանդում էր ցածր դասարաններում, խստապահանք մի անձնավորություն էր, գնահատականի մեջ ժլատ: Մեր ընկերներից մեկը՝ Հարությունյան Արմենակը, թվարա-

նությունից շատ թույլ էր, շարունակ 2 էր ստանում, սակայն շատ աշխատասեր էր: Մի անգամ Հարությունյանն ասաց. «Պարոն Տիգրանյան, ախր շատ եմ աշխատում...»: Պատասխանեց լուսամուտից դուրս նայելով. «Ահա տե՛ս, Զատիկ պապիկին էլ (Ճեմարանի տեխնիկական աշխատող, պարտիզպան) շատ է աշխատում, նրան էլ բավարար նշանակե՛մ: Շատ աշխատելը բավական չէ»:

Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյան.— Խրիմյան Հայրիկի կաթողիկոսության ժամանակաշրջանում էջմիածնում Կարապետ վարդապետի գլխավորությամբ գործում էին մի խումբ երիտասարդ վարդապետներ, որոնք Ճեմարանն ավարտելուց հետո իրենց գիտելիքները ձոխացրել էին Ռուսաստանում և արտասահմանում: Նրանք իրենց ձեռքն էին վերցրել էջմիածնի ուսումնական-գիտական գործը. նրանք ըստ մեծի մասին աշխատում էին Ճեմարանում:

Կարապետ վարդապետը մի քանի տարի Ճեմարանի վերատեսուչ ելավ և միևնույն ժամանակ ղեկավարում էր աստվածաբանության, հայոց եկեղեցական պատմության ամբիոնները: Նա երկար ժամանակ խմբագրում էր «Արարատ» ամսագիրը: Նրա խմբագրության ժամանակ «Արարատ»-ը վերին աստիճանի հետաքրքրական ամսագիր էր: Ամսագրին աշխատակցում էին Գարեգին վարդապետ Լովսեփյանը, Ստեփան Կանայանը, Մանուկ Արեղյանը, Հովհաննես Լովհաննիսյանը և ուրիշներ:

Կարապետ վարդապետը, իբրև դասախոս և իբրև հոգատար մարդ, շատ էր սիրված աշակերտության կողմից: Նրա դասերը հետաքրքրական էին: Նա մեր մեջ հարուցանում էր սեր դեպի մեր անցյալի մշակութի արժեքները: Նա հաճախ մեզ աշխատեցնում էր մատենադարան-ձեռագրատանը, որպեսզի մենք սովորենք ուսումնասիրել մեր պապերի թողած հարուստ ժառանգությունը:

Կարապետ վարդապետը, հետագայում եպիսկոպոս, եղել է Ատրպատականի առաջնորդ, ապա Բաքվի թեմի առաջնորդ: Բաքվում վիրահատության ենթարկվելով, վախճանվում է անժամանակ: Իր գիտական մտքի ծաղկման հասակում նա զարգանում է գործելուց ընդմիջու: Նրա մահը խոր վիշտ առաջացրեց հայ մտավորականների շրջանում, մանավանդ նրա բազմաթիվ աշակերտների մեջ:

Կարապետ եպիսկոպոսը, իր աշակերտների մեջ դեպի մեր հուշարձանները սեր զարթեցնելու նպատակով, հաճախ կազմակերպում էր էքսկուրսիաներ, իր սաներին շուրջն առած, ոտքով շրջում էր մեր հայրենիքի նվիրական վայրերը:

Կարապետ վարդապետը խոր հայրենասիրությամբ էր համակված: Հայ եկեղեցական կալվածների հափշտակությունը մեծ հուզում ու ցասում էր առաջ բերել հայության մեջ: Ցարական Ռուսաստանի հայահալած բաղաբախանությունը խաղաղություն սիրող և համբերատար հայ ժողովրդին ոտքի էր հանել: Նա իր իրավունքները պաշտպանելու համար պատրաստ էր անձնազոհություն: Տեր-Մկրտչյանը կազմակերպել էր, գաղտնի, ինքնապաշտպանության կոմիտե: Տպվում էին թուրքիկներ և տարածվում հայ ժողովրդի բոլոր խավերում: Այդ թուրքիկների մեջ դրված կոշիքը խրախույս էին կարգում հայրին, որ նրանք չընկճվեն, բողոքի հովիտ ալիք բարձրացնեն՝ շինայելով իրենց կյանքն անգամ իրենց սրբազան իրավունքների պաշտպանության համար: Ահա՛ Կարապետ եպիսկոպոսը, մեր ուսուցիչը, նաև այդպիսի գործիչ էր:

Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ (1905), Կարապետ եպիսկոպոսը, սպիտակ դրոշը ձեռքին, կառք նստած շրջում էր Սրեանի փողոցներով, անցնում էր թուրքական թաղամասերը և քարոզում հաշտություն ու խաղաղություն:

Վերջին անգամ Կարապետ եպիսկոպոսին հանդիպեցի Թիֆլիսում, Լովսեանյան դպրոցի ուսուցիչ Միսաք Խոստիկյանի տանը: Մեր ուսուցիչը գրույցի ընթացքում հայտնեց այլ միտքը, որ մտադիր է շուտով կազմակերպելու «Ճեմարանական ընկերություն», որին պետք է անդամակցեին բոլոր ճեմարանավարտները և առհասարակ բոլոր նրանք, որոնք սովորել էին Ճեմարանում: Սակայն դժբախտաբար մահը, անժամանակ մահը շուտ վրա հասավ և նա չհասավ իր նպատակին, ընկերությունը չկազմակերպվեց:

Գարեգին վարդապետ Լովսեփյան.— Փոքրահասակ, հիվանդագին կազմվածքով, սակայն ճկուն, արաքաջալ մի անձնավորություն էր Գարեգին հայր սուրբը: Նա երևելի պերճախոս, ոգևորությամբ լի մի դասախոս էր: Նա ավանդում էր ընդհանուր եկեղեցական պատմություն, ուսումն Ս. Գրոց: Գարեգին վարդապետը վերին աստիճանի բարեխիղճ, պարտաճանաչ, իր հայրենիքն ու նրա մշակույթը ցերմորեն սիրող մարդ էր: Նրա դասերին շէր կարելի չլինեարոնանալ:

Մի անգամ, դասի ժամանակ, երբ խոսում էր Պողոս առաքյալի մասին, ոգևորվեց. նկարագրում էր առաքյալի արտաքինը, ճիշտ այնպես, ինչպես ինքն էր. իսկ նրա չերմեռանդ, նվիրված գործունեությունը ճիշտ այնպես, ինչպես ինքն էր գործում: Խոսում էր Թառնաբաս առաքյալի մասին, նրան էլ նկարագրում էր իր ընկեր Կարապետ վարդապետ

տի նմանութեամբ: Մենք, լսարանցիներս, արդեն Գարեգին վարդապետին մեր շքանունով կոչում էինք Պողոս առաքյալ, իսկ Կարապետ վարդապետին՝ Բանանարա:

Գարեգին վարդապետը եղել է նաև ձեռնարանի վերատեսուչ:

Գարեգին վարդապետը, հետագայում եպիսկոպոս, ապա Կաթողիկոս Տանն Կիլիկիո, հայտնի է որպես մեծ գիտնական: Նա ունի բազմաթիվ տպված և անտիպ հոյակապ հայագիտական-բանասիրական աշխատություններ, նրան իրավամբ կոչում են մտքի տիտան, հայ մանրանկարչության ուսումնասիրության հիմնադիր:

1952 թվականի հունիսի 21-ին, 85 տարեկան հասակում, Անթիլիասում Գարեգին Կաթողիկոսը կնքեց իր մանկանացուն:

Նովեմբերնու Նովեմբերիսյան.— ձեռնարանի աշակերտության կողմից հարգված ու սիրված ուսուցիչ էր Հ. Նովհաննիսյանը: Միջհասակ, գրավիչ տեսքով, ժպիտը դեմքին մի մարդ էր նա: Հստ ամենայնի բարձր կուլտուրայի տեր էր, կիրթ էր և բազմակողմանի զարգացած: Նրա դասախոսությունները լսում էինք հափշտակությամբ, խոսում էր հեզկ ու հանդարտ, քաղցրահնչյուն, սահուն, նա ավանդում էր ընդհանուր գրականություն և ուսուցանեց գրականություն: Ռուսաց գրականությունն անցնում էր ուսուցանելով ձեռնարանում ուսուցանող գրականությունը, ուսուցանող պատմությունը, Ռուսաստանի աշխարհագրությունն անցնում էինք ուսուցանելով ինքուրով:

Այդ առարկաների ուսուցանելով ինքուրով ավանգելը նպաստում էր մեր ուսուցանողի կարողության ուժեղացմանը, ուսուցանելով ինքուրով մանր, Այս հանգամանքը բնավ երբեք քացասարար չէր անդրադառնում հայերեն լեզվի, առհասարակ հայրենագիտության գործի վրա, քանի որ այն գրված էր ամուր և անհողողող հիմքի վրա:

Ընդհանուր գրականության առարկան անցնելիս, Նովհաննիսյանը հատկապես կանգ էր առնում Շեքսպիրի վրա, իսկ ուսուցանող գրականությունից՝ Գոգոլի, նրանց ստեղծագործությունները վեր էր լուծում առանձին ոգևորությամբ: Գոգոլի «Ռևիզորը» (վերաքննիչը) այնքան մանրամասնությամբ էինք անցնում և թարգմանում հայերենի, որ համարյա շատ կտորներ անգիր գիտեինք երկու լեզուներով էլ: Նովհաննիսյանի ղեկավարությամբ «Ռևիզորը» ներկայացրինք էլ միաժամի բնի վրա, ուսուցանելով Նետադայում, մեր ընկերներից մեկը՝ օրդուցի կուղվիկ Տատյանը, ձեռնարանական դասերից օգտվելով, «Ռևիզորը» թարգմանեց հայերեն: Գրքի շապկի վրա գրվել էր թարգմանիչ Լ. Տ.: Այդ հանգամանքը շփոթության մեջ էր պցել ա-

կազմակերպ Լ. Նովհաննիսյանին և սա Լ. Տ. վերագրել էր Լևոն Տիգրանյանին:

Հատուկ ոգևորությամբ ու հաճությամբ նա դասախոսում էր Նովհաննիսյանի մասին, նրա «Նովհաննիսյանի», «Ռևիզորը»-ի մասին: Մենք իրականում էինք նրան, որ ձեռնարկի հաճախ դիմում էինք նրան, որ ձեռնարկի «Ռևիզորը»-ի և «Ռևիզորը»-ի աշխարհաբար թարգմանության, բանի որ նա միակնանն էր, որ կարողանար գլուխ բերել այդ դժվարին, սակայն շնորհակալ դորձը: Զի՛ որ նա և՛ բանաստեղծ էր, և՛ հունարենի մեջ քաշահուտ, և՛ միաժամանակ հայոց լեզվին քաջարար տիրապետող: Նա մեզ միշտ պատասխանում էր. «Թող ինձ ապահովեն տարեկան 2 000 ուրլով, որ կարողանամ մի-երկու տարվա ընթացքում այդ թարգմանական դժվարին, բայց ինձ համար քաղցր աշխատանքը գլուխ բերել»: Սակայն թե՛ մեր և թե՛ մանավանդ Նովհաննիսյանի այդ ցանկությունը մնաց լուկ ցանկություն:

Դասավանդման ժամանակ նա հաճախ կարդում էր կտորներ Նովհաննիսյանի գրականությունից արած իր թարգմանություններին:

Նովհաննիսյանը սրտանց կապվել էր ձեռնարանին, ապրում էր նրա կյանքով: Նա հաճախ էր շփվում աշակերտության հետ:

Նովհաննիսյանը, ինչպես ասացի վերևում, քաջ գիտեր հայերենը՝ գրաբարը և ժամանակակից հայոց լեզուն, տիրապետում էր բարբառներին, ուսուցանելիս, գիտեր մի քանի եվրոպական լեզուներ և հին հունարեն: Նա նախանձախնդիր էր ուղղախոսության նկատմամբ, հայերենի արտահայտությունների, հայի հոգուն հարազատ դարձվածքների նկատմամբ: Ռուսերենի որևէ ասացվածք, դարձվածք, առած թարգմանելիս, նա գտնում էր նրանց համապատասխան հայերեն ձևերը և արտահայտությունները: Շատ անգամ վիճասեր ձեռնարանցիներս որևէ լեզվական խնդրով նրան էինք դիմում: Մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, Նովհաննիսյանի մասին գրած իր հիշողությունների մեջ, հիշում է մի գեպը. թե ի՛նչպես աշակերտները դիմեին Նովհաննիսյանին, որ նա որոշի, թե ո՛ւմ ասածն է ճիշտ վիճելի դարձվածքի արտահայտության նկատմամբ: Նա երկար մտախառն հետո, դեռ լի պատասխանում: Երբ տեսնում է ձեռնարանի րակով անցնող մի պուղացու, կանչել է տալիս նրան և խոսեցնելու միջոցով գտնում է ճիշտ արտահայտությունը դուրացու բերանում:

Իսահակյանի այդ հաղորդումը միանգամայն համապատասխանում է իրականության, քանի որ այդ դեպքը պատահել է իմ աշակերտության օրը:

Հովհաննիսյանը մշտապես ոգնում էր կաթողիկոսի գիվանին, Մինոզին՝ պաշտոնական գրություններ կազմելու մեջ:

Վաղարշապատում ապրում էր հայրենական տանը: Բազմանդամ ընտանիքով ծանրաբեռնված էր նա: Նրա տան դռները միշտ բաց էին հյուրերի համար: Գծվար տարիներ եկան: Հովհաննիսյանը ստիպված եղավ փոխադրվել Բաբու և այնտեղ պաշտոնավարել իբրև ժողովրդական դպրոցների տեսուչ:

1913 թվականին կատարվեց Հ. Հովհաննիսյանի գործունեության 30-ամյակը, որին չեք մասնակցություն հանդես բերին նրա ընկերներն ու աշակերտները:

Տարիներ անցան: Հայաստանը դարձավ սովետական: Հովհաննիսյանն ամբողջովին նվիրվեց վերածնված հայրենիքի շինարարության գործին, նա իր գիտելիքները, իր բազմակողմանի հմտությունը ի սպաս դրեց մեր մշակույթի զարգացման գործին:

Այստեղ ուղում եմ հիշել մի դեպք: 1925—1926 թև 1926—1927 թվականին, գարնանը, երբ ես քանվորական ֆակուլտետից դուրս էի գալիս դասախոսություններս վերջացրած, հենց դրան մուտքի մոտ հանդիպեցի սիրելի ուսուցչիս, որ դանդաղ քայլերով իջնում էր Արդվյան փողոցն ի վայր:

«Բարև վարժապետ», — ասացի ես: Առավրարևս, թևս մտած շարունակեց իր ընթացքը: Սկսեցինք զրուցել: Ես հարցրի նրան. «Ահա՛, վարժապետ, դու ո՞ր դասակարգի ներկայացուցիչն ես, ո՞ր դասակարգի իդեներն ես արտահայտում: Ես հենց նոր դասախոսեցի հայոց գրականությունից, ղ. Հովհաննիսյանի ստեղծագործությունները՝ թեմայի շուրջը: Ես ընդ դուրս բերի որպես մանր բուրժուազիայի գրող: Արդյոք ճիշտ չե՞մ վարվել»:

Վարժապետ կանգ առավ, նայեց երեսիս և ասաց. «Աղա՛, ես գրել եմ, ինչ որ զգացել եմ, ես շատ գիտեմ, թե ո՞ր դասակարգի գրող եմ ես...»:

Այդ ժամանակներում դպրոցներում իշխում էր սոցիալիստիկ սոցիոլոգիկա: Ստեղծագործության զեղարկվեստական վերլուծությունը գտնվում էր երկրորդ դի վրա, կամ էլ բոլորովին մոռացվում էր:

Հ. Հովհաննիսյանը մեր նոր քանաստեղծության եռյակի—Հ. Հովհաննիսյան, Հ. Թումանյան, Ա. Իսահակյան—պարագլուխն էր: Նա խոշոր տաղանդ էր, խորիմաստ բանաստեղծ:

Ստեփան Կանայան.— Երկար տարիներ Ստեփան Կանայանը, իմ ավագ եղբայրը, եղել է Ճեմարանի ուսուցիչ: Նա Ճեմարանի (լսա-

քանական բաժնի) անդրանիկ շրջանավարտներից մեկն էր (1883): Գերմանիայում նա շարունակում է ուսանել: Վերադառնում է հայրենիք, սկզբում պաշտոնավարում է ներսիսյան դպրոցում, ապա Շուշիի թեմական դպրոցում՝ իբրև տեսչի պաշտոնակատար: Թիֆլիսում աշխատակցում է Վերնապանքին, իբրև խմբագրություն անդամ: Ապա գնում է Էջմիածին և մտնում Ճեմարան իբրև ուսուցիչ, մինչև 1914 թվականը: Այսուհետև կրկին գնում է Թիֆլիս և մտնում մինչև 1921 թվականը: 1921 թվականին ընտանիքով փոխադրվում է Երևան, Վախճանվում է 1937 թվականին սրտի կաթվածից:

Կանայանը բարձրասակ, հաղթանդամ, բարի դեմքով, գեղադեմ մի մարդ էր: Նա Ճեմարանի աշակերտների կողմից շատ սիրված և հարգված ուսուցիչներից էր. նրան շատ սիրում էին հատկապես իր բարի, չեքը, սրտակից վերաբերմունքի շնորհիվ: Կանայանն իր գործին նվիրված, շիտակ գործիչ էր: Ավանդում էր հայոց պատմություն, ընդհանուր պատմություն և գերմաներեն: Նրա աշակերտներն աղատ կարգում և թարգմանում էին գերմաներենից հայերեն: Օրինակ, Հարություն Պետրոսյանը (հետագայում համալսարանի գրաբարի դասախոս) գերմաներենից թարգմանել էր «Շերման և Գորթեա» պոեմը, լափածո, ընտիր հայերենով: Թարգմանությունը նվիրել էր իր ուսուցիչ Կանայանին:

Ստեփան Կանայանը տասնյակ տարիներ հայկական բարձրագույն դպրոցի՝ Ճեմարանի անխոնջ աշխատող, սերունդներ կրթող դասախոսներից է: Նա ծանոթ է իր քանասիրական-գիտական-ֆուլկլորային աշխատանքներով: Հայտնի են իր «Ջոզանց տուն», «Անհայտ գավառներ հին Հայաստանում», «Մերձավոր ամուսնությունը Հայաստանում», «Քաջանց տուն»² և այլ քանասիրական-գիտական աշխատանքները:

Մանուկ Արեղյուն.— Արեղյանը սովորել է Ճեմարանում, որն ավարտելուց հետո, անմիջապես նշանակվում է Ճեմարանի վեղակացու, ապա մի քանի տարիներ մի շարք տեղերում ուսուցչություն անելուց հետո, գնում է Գերմանիա իր ուսումը կատարելագործելու գրական-քանասիրական գիտության ասպարեզում:

Արտասահմանից վերադառնում է հայրենիք, հրավիրվում է Ճեմարան՝ ավանդելու հայոց լեզու և հայ գրականություն:

² Հովհաննիսյանը սիրում էր մեթոդների հետ խոսել երբեմն-երբեմն իրենց՝ վաղարշապատցիների բարբառով:

² «Քաջանց տուն» խորագրված երկար տարիների քրեական մեծածավալ աշխատությունը տակավին մնացել է անտիպ: Գտնվում է ակադեմիայի գրականության ինստիտուտի տրամադրության տակ և պահվում է գրական թանգարանում:

Արեղյանը ձեմարան գալով, մեծ հեղաշրջում առաջ բերեց հայ լեզվի ավանդման գործում. նա մեծ զարկ տվեց աշխարհարարի ուսուցման գործին. Աշխարհարարի դասավանդումը, որ տեղի էր ունենում միմիայն ստորին դասարաններում, նա հասցրեց մինչև դպրոցական բամբի վերջին դասարանը. Աշխարհարարը հայոց լեզուն սովորում էին դասական հեղինակների ստեղծագործությունների միջոցով. Օրինակ, Գ դասարանում մեր հայոց լեզվի դասագիրքը «Մամվել»-ն էր. Հայերենը դարձավ շատ սիրելի ու հետաքրքրական առարկա. Քերականությունը՝ շաղկապվում էր ընթերցանության նյութի հետ. Գրում էինք աշխարհարար շարագրություններ. Գրաբար գրելիս նեղվում էինք, մեր գրելու ընդունակությունների համար ազատ ապարքը ստեղծեց աշխարհարարը. Գրաբարի և աշխարհարարի քերականական, ոճային, բառակազմական նյութերը անցնում էինք միասնաբար, իրար հետ համեմատելու միջոցով:

Մանուկ Արեղյանը դասերի ընթացքում երբեմն մեզ հետ խոսում էր, հարցեր էր տալիս գրաբար, նույնիսկ այդ լեզվով կատակում էր:

Մեր դասարանցի վարդան Բաղդասարյանը շատ էր սիրում իր հոր մասին խոսել, նրա առականներից, ասույթներից պատմել. Արեղյանը այդ գիտեր. Մի օր, գրաբարի ժամին, դարձավ վարդանին և ասաց. «Վարդան, պատմե՛ս տեսքո՛ւք, զի՛նչ գիտե՛ս հայրն քո առականացա՛ս. վարդանը փորձեց գրաբարով մի րան հորինելով պատասխանել, սակայն ընդհանուր ծիծաղի տակ շփոթվեց ու լռեց՝»:

Արեղյանը մեր դաստիարակն էր 2—3 տարի շարունակ. Մի անգամ Գ դասարանում, ապրիլի 1-ին (խաբելու օր), որոշեցինք մտնել նստարանների տակ և լուծության մեջ սպասել Արեղյանի գալուն. Ջանգն արդեն տվել էին. Արեղյանն ըստ իր սովորության զուխը կախ, թմրթմրացնելով քայլեց դեպի բեմը և դարձավ դասարանին, սակայն դասարանը ռզատարկ տեսնելով, իսկույն իջավ պատվանդանից և քայլերն ուղղեց դեպի դուրս. Հենց այդ ժամանակ մեր ընկերներից՝ Արաբկիրցի Երվանդ Քյոսեյանը զուխը հանեց նստարանի տակից. Արեղյանը նկատեց, կանգ առավ և սկսեց գոռոցուլ. ամենքս էլ բարձրացանք նստարանների տակից և նստեցինք տեղներս, սակայն Արեղյանը բարկացել էր, շտապ դուրս գնաց, հանդիմանական ու խրատական խոսքերի տարափ թափելով մեր դիմին:

Երվանդ Քյոսեյանը մի խորիմաստ, լուրջ, լավ պարապող պատանի էր. նա երազում էր, որ հայրենագիտությունը զինված, ձեմարանն ավարտելուց հետո կվերագանա իր ծննդավայրը և կնվիրվի հայ մանուկների կրթական-դաստիարակչական մեծ գործին:

Քյոսեյանն իբրև արևմտահայ կանոնավորապես հաճախում էր օսմաներենի դասերին, նա օսմաներենի դասախոս Հրայր Աճառյանի լավագույն աշակերտն էր. Օսմաներենից միշտ բարձր գնահատական էր ստանում. Մենք նրա մասին ոտանավոր էինք հորինել. Այդ ոտանավորից երկու տող էմ հիշում միայն.

«Օսմաներեն քերական,
Գրեց Երվանդ Քյոսեյան...»
Ձեմարանի Գ դասարանում, իմ խմբագրությունում, ինքնուրույն կերպով, առանց դաստիարակ Մ. Արեղյանի գիտություն, հրատարակում էինք «Արշալույս» ամսագիրը. իմ ճեղքայր Արզվարդ Կանայանը սովորում էր. Լազարյան ճեմարանում, այդտեղից ինձ շալոնակ նամակներ էր գրում, նամակներից մեկում նա գրել էր, թե Մոսկվայում սկսվել են հեղափոխական, ուսանողական շարժումներ. Այդ հաղորդումը գրի առանք մեր թերթում. Արեղյանն իմացավ, հավաքեց բոլոր ճեմարանները, վարդաց հաղորդումը և սաստիկ բարկացավ, հատկապես ինձ վրա. «Ի՛նչ է, ու՛զում ես բոլորիս վտանգի՛ ենթարկել, ձեմարանը փակել տալ...»:

Մեր թերթը դադարեց լույս տեսնելուց. Հետևյալ դասարաններում արդեն նույնպես թերթեր ունեինք, սակայն այս անգամ արդեն դաստիարակի հսկողությունում. Արեղյանը, հարկավ, այլ կերպ չէր կարող վարվել, քանի որ ցարական կառավարության հայահալած քաղաքականությունը — մեր մշակութային հիմնարկների փակումը, ձեմարանը վերացնելու պատրվակներ զտնելը — ստիպում էին նրան զուլուրդություն բանեցնել:

Մի անգամ, Գ դասարանում, գրաբարի դասին, կարդում և թարգմանում էինք Խորենացուց մի հատված. Թարգմանող աշակերտը դժվարացավ ճիշտ թարգմանել, դասընկերների օգնությունը զուր անցավ. Արեղյանն ինքն ևս տատանվեց և անմիջապես վրա բերեց.

— Տղաներ, հիմա պանգը կտան, դասամիջոցին կդիմեմ Սեթին. նա մեզ կօգնի.

Արեղյանի այդ խոսքը շարժացրեց մեզ, ընդհակառակը, նրա վարկը մեր աչքում ավելի բարձրացավ:

Արեղյանը համոզված հայրենասեր էր, ուներ սղղային հպարտություն. Մեր յուրաքանչյուր հաջողությունները նրան հրճվանք էին պատճառում, անհաջողությունները՝ թախիծ:

4 Այդ վարդան Բաղդասարյանը, որ ընկերասեր մի պատանի էր, սովետական շրջանում դարձավ գերագույն դասարանի նախագահ և մի քանի տարի մնաց այդ պաշտոնում:

Արեղյանն իր քերականութիւնի ձեւնարկները, հատկապէս գլուխ-գործոց «Շարահչու-տութիւն»-ը, պատրաստում էր իր դասավանդութեան աշխատանքների ընթացքում:

Շատ հետաքրքրական էին անցնում հայ գրականութեան սեմինարները լսարաններում: Ուսանողները նշույթներ էին ունենում, ունեւորները գրում, ընդդիմախոսում էին բանավոր և գրավոր: Վերջում ամփոփում էր կարգում դասախոսը:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու ժամանակաշրջանում, Արեղյանը շատ խոր աշխատանքներ կատարեց մեր մշակութիւթի զարգացման համար, թե՛ իրրև համալսարանի դասախոս և թե՛ իրրև ակադեմիկոս-հայագետ գիտնական: Նրա կատարած գործը վիթխարի է: Իզուր չէ, որ նրա անուանով է կոչվում Հայկական ՍՍՒ գիտութիւնների ակադեմիայի գրականութեան ինստիտուտը:

Ո՛վ էր Անր Հարութիւնյանը.— Սա նույնպէս ձեւարանի գրարարի դասախոս էր: Նա շատ հմուտ էր գրարարի գիտութեան մէջ: Ձեւարանի հին շրջանավարտներից էր: Նա ամբողջովին նվիրված էր իր առարկային, խիստ պահանջկոտ էր: Նրա դասերից շէր կարելի խուսափել: Ս. Հարութիւնյանը Մ. Արեղյանի հետ կազմել է Մովսէս Խորենացու հայոց պատմութեան գրքի տեքստը բազում ձեւագրերի համեմատութեամբ: Դա մի խոշոր բանասիրական հայագիտական գործ է, շնորհակալութեան արժանի: Անթ Հարութիւնյանը բոտ արտաքինի լուրջ էր, խստադէմ, սակայն օժտված էր երգիծական շնորհով: Նա երգիծական հոդվածներ, ֆելիետոններ էր գրում «Նոր դար»-ում «Բյւսավոր» կեղծանունով:

Անթ Հարութիւնյանը, ձեւարանն ավարտելուց անմիջապէս հետո, հրավիրվում է Իզդիբի հայոց ծխական դպրոց որպէս ավագ ուսուցիչ: Նա հետաքրքրական դէպքեր էր պատմում իր այդ ժամանակաշրջանի ուսուցչական կյանքից: «Մի անգամ,— ասում էր նա,— ուզեցի լսել կենդանաբանութեան ուսուցչի դասը: Դեռ դասարան չմտած, դռան ետեից լսեցի ուսուցչի ձայնը: «Տղանե՛ր, կատուն ունի շորս ոտք. կրկնեցե՛ք»: Ամբողջ դասարանը միարբերան բղավում էր: «Կատունն ունի շորս ոտք»: «Տղանե՛ր, կատուն ունի մի պոչ»: Խումբը՝ «Կատուն ունի մի՛ պոչ»: Եվ այս և այլ դասալսումներից, մեր սիրելի գրարարագետ ուսուցիչը պատմում էր հատուկ հումորով զանազան դէպքեր: Նրա սաները միշտ երախտագիտութեամբ էին հիշում նրա հմտորեն վարած դասերը:

Սևդակ Մանգիլյան.— Ահա՛ մի պատկանելի անձնավորութիւն, որ օժտված էր մարդասիրութեամբ, դեպի իր սաներն ունեցած

սիրալիր ու բարյացակամ վերաբերմունքով: Մեր իրականութեան մեջ հայտնի գիտնական մանկավարժն էր նա, որ շարունակ գրավոր և բանավոր քարոզում էր այն գաղափարը, թե գիտութիւնը լավ յուրացնել կարելի է միայն մայրենի լեզվի միջոցով: Դաստիարակութեան հիմքում պետք է դնել մայրենի լեզուն:

Մանգիլյանը ձեւարանում պաշտոնավարել է երկու նվագով, նախ 1880—1890-ական թվականներին, ապա ընդմիջում, հետո նորից հրավիրվում է 1896 թվականին: Երկու նվագումն էլ բախտ հմ ունեցել նրան աշակերտելու: Նրա պաշտոնավարութեան առաջին շրջանում սովորում էր ձեւարանի վարժոցում, որտեղ դասավանդում էին ձեւարանի լսարանցիները Մանգիլյանի ղեկավարութեամբ: Ես ապրում էի ձեւարանի դասախոս եղբորս՝ Ստեփանի մոտ:

Մանգիլյանի երկրորդ պաշտոնավարութեան ժամանակաշրջանում, 1896—1897 թվականներին, ես արդեն ձեւարանի աշակերտ էի: Նա դարձյալ մանկավարժական գիտութիւնների դասախոս էր և ղեկավարում էր մանկավարժական պրակտիկան: Ձեւարանի լսարանցիները՝ Ասլան Շահնազարյան, Եսայի սարկավագ (հետագայում Զավեն եպիսկոպոս), Պողոս սարկավագ Զուբարյան, Կոստանդին սարկավագ և ուրիշներ, մեզ հետ պարապում էին Մանգիլյանի գլխավորութեամբ: Շատ հետաքրքրական էին անցնում դասերը:

Ուսանողները պատմում էին Մանգիլյանը դասին տեղի ունեցած մի դիպվածի մասին:

Դաս է պատասխանում ուսանող Զուրիկյանը: Մանգիլյանը լուռ, համբերութեամբ լսում է նրան մինչև վերջ, ապա ասում.

— Լա՛վ, Զուրիկյան, ասածներդ ապացուցելու, հաստատելու համար մի օրինակ բե՛ր:

— Հազար ու մի օրինակ կարելի է բերել, պր. Մանգիլյան:

— Հազարը քեզ մնա, Զուրիկյան, մի՛ օրինակ:

— Հազար օրինակ կարելի է բերել,— կրկնում է Զուրիկյանը և երեքվնում:

Եվ այսպիսով Զուրիկյանը ո՛չ մի օրինակ չի կարողանում բերել:

Հետագայում, վիճարանութիւնների ընթացքում, երբ մեկը դժգոհարանում էր իր առաջագրած խնդիրը պարզարանել, ապացուցանել, հակառակորդ ընկեր ուսանողը ասում էր նրան. «Զուրիկյան՛, մի՛ օրինակ»:

Այդ արտահայտութիւնը երկա՛ր, երկա՛ր տարիներ կիրառվում էր ձեւարանական ուսանողութեան շրջանում:

Մանգիլյանը տառապում էր դեմքի մաշկի հիվանդութեամբ: Նա ձեւարանից զնաց արտասահման՝ բուժման: Սակայն նա վերջնա-

կանապիս շառոջացալ. երկար տարիներ մնաց նա հիվանդ վիճակում և այլևս տանիչ դուրս չէր գալիս:

1910 թվականից ես ապրում էի թիֆլիսում, հասարկ լինում էի Մանդիկյանի մոտ և օգտվում նրա բարի խորհուրդներին: Նա շարունակ հետևում էր մեր կուլտուրական կյանքին, մամուլին, հասարակական գործերին:

Մանդիկյանն ունի բազում գիտա-մանկավարժական աշխատություններ, դասագրքեր, հոդվածներ, որոնց թիվը շուրջ 300 է: Ուշագրավ են նրա կազմած դասագրքերը.

ա. «Ընտանեկան աշխարհ» (1-ին տարի):

բ. «Ազգային դուրսագնական աշխարհ» (2-րդ տարի, որի նյութը Սասունցի Գալիթն է կամ Մհերի դուռը):

գ. «Նահապետական և հայրենի աշխարհ» (3րդ տարի):

Մանդիկյանը այն կարծիքի էր, որ հայ գյուրդների համար պետք է կազմել ուսանող լեզուն սովորեցնելու համար առանձնահատուկ դասագիրք՝ համապատասխան հայ մանկան, պատանու մտածողության, հոգեբանության և նա կազմեց «Начальная русская хрестоматия для армян—1-я и 2-я кн.» դասագիրքը:

Մանդիկյանն իր մանկավարժական հայացքները պաշտպանում էր կրթությունում: Նա երկար ժամանակ բանակովի մեջ էր. Աղայանի հետ: Աղայանը կողմնակից էր հնչական մեթոդին, իսկ Մանդիկյանը՝ օրգանական: Բացի այդ մեթոդական բանավեճերից, նրանք պայքարում էին միմյանց դեմ միևնույն կրթությունում և ուղղագրության հարցերում: Աղայանն, օրինակ, կրավորական վ-ի փոխարեն առաջարկում էր յ, իսկ Մանդիկյանը պաշտպանում էր վ-ն. իսկ ու իբրև կրավորականի նշան՝ համարյա դուրս էր ընկել: ասպարեպից: Ասպարեպի վրա վեճի առարկա մնում էր վ-ի և յ-ի խնդիրը: Մանդիկյանը բանակովի ընթացքում գրում էր մի հոդվածում՝ «հաղթանդամ վե՛վը, թե փոքրահասակ հյո՛ւներ (չլուներ)»: Վերջնական հաղթանակը տարավ «հաղթանդամ» վ-ն, որը հետագայում պաշտպանեցին թե՛ Ս. Մալխասյանը և թե՛ Մ. Արեղյանը:

1910 թվականին լույս տեսավ «Մի էջ հայկական ուսուցման պատմությունից» ժողովածուն Ս. Մանդիկյանի խմբագրությամբ:

Մանդիկյանը խիստ պայքար էր մղում, որ իր օրգանական մեթոդը կիրառվի և տարածվի մեր գյուրդներում, մի մեթոդ, որը համար աշխատանք էր պահանջում ուսուցչից, բայց լինում էր շատ արդյունավետ:

Սեդրակ Մանդիկյանը հաճախ խորհուրդ էր տալիս ուսուցիչներին. «Մի՛ լսիր քուրմե-

րին: Ծա էլ քուրմերից մեկն եմ, ինձ էլ մի լսիր, այլ սովորիր քննել գիրք և անձնական փորձով ստուգել ուրիշի քարոզները: Ինքք քո ճանապարհը բաց արա, ուրիշ հիք չունես»:

Հրաշյա Աճառյան.— Իմ ձեռնարանական շրջանում էլ միաձնում էր ապրում նաև հայտնի հայագետ-գիտնական-լեզվաբան Հրաշյա Աճառյանը: Նա էլ միաձնում վարում էր ձեռնարանի գրադարանական պաշտոնը և օսմաներին լեզվի դասեր էր տալիս Տաճկաստանից եկած աշակերտներին:

Ձեռնարանի աշակերտների մեջ խոսում էին, որ Աճառյանը շատ աշխատասեր մարդ է, օրնիրուն պարապում է: Ձեռնարանը, ձեռնարանի գիտական մթնոլորտը հարկադրում էր մարդկանց պարապել, գրքերի աշխատում լինել: Ձեռնարան եկած շատ դասախոսներ հենց ձեռնարանում էին սկսում իրենց գիտությունը զարգացնել, գիտահետազոտական աշխատանքներով զբաղվել: Շատերն էլ, որոնք հայերենին լավ չէին տիրապետում, ձեռնարանում դառնում էին հայագետ և սկսում զբաղվել գիտական աշխատանքներով: Օրինակ, Հակոբ Մանանդյանը, Սիրական Տիգրանյանը և ուրիշները ձեռնարանի մթնոլորտում աճել և զարգանալ սկսեցին և մեր մշակույթի արժանավոր գործիչներ դարձան:


Վառդան Արովյան.— Ձեռնարանի ուսուցիչ էր նաև Խաչատուր Արովյանի որդի Վարդան Արովյանը, նա մի բարձրահասակ, հաղթանդամ մարմնով մարդ էր, համակրելի, բարի ղեկավար, մաղբեր արդեն ճերմակել էին և շատ ծխելուց բեղերը դեղնել:

Նա մեզ ավանդում էր ուսաց լեզու: 1896—1897 ուսումնական տարում, Գեո ուսումնական տարին չավարտված, վախճանվեց Վարդան Արովյանը: Աճառյանն ամփոփվեց Գայանեի վանքի բակում:


Վարդան Արովյանի երկու արու զավակները սովորում էին ձեռնարանում. ավագը՝ Կոստանդինը 6-րդ դասարանումն էր այդ ժամանակ, իսկ Լևոնը՝ կրտսերը 1-ին դասարանում, Լևոնն իմ դասընկերն էր:

Լևոնը լավ ընկեր էր, կենսուրախ, կատակասեր: Նա շատ մոտ էր մեր ընկերներից վաղարշապատցի Սիրոն Ասլանյանի հետ, նստում էին միևնույն նստարանին, դասերը միասին սովորում: Լևոնը ուսերեն լեզվին լավ էր տիրապետում, ուսերեն լեզվով ժողովում էր ստանում: Մի անգամ այդ ժողովի խմբագրությունն ուղարկում է մի նամակ և տակն ստորագրում՝ Ямацирова (=իմացիր, ո՞վ ա): Այդպիսի կատակներ նա հաճախ էր կատարում:

(Շառունգիկի)



Անիի Կաթողիկոս Մարտի Տաճարը, կառուցված Տրդատ ճարտարապետի կողմից 989—1001 թ. թ.:





Գ. ՇԻՐՄԱԶԱՆՅԱՆ

Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՈՒ ՄԱՏՅԱՆ

Հայկական ՍՍՏ պետական կենտրոնական պատմության արխիվում հայ ժողովրդի հերոսական, բազմաբովանդակ ու հարուստ պատմությունն ամփոփող հազարավոր կարևոր փաստաթղթերի հետ պահվում են երկու արժեքավոր գործեր՝ Անի քաղաքի ավերակների այցելուների տպավորությունների երկու մատյան, Բաղրատունիների հռչակավոր մայրաքաղաք Անիի ընթացքում գրավել են ճանապարհորդների և առանձին մասնագետ-ուսումնասիրողների ուշադրությունը:

Մինչև 1918—1920 թվականների ժանր ղեկավար, ինչպես հայտնի է, Անին իր շրջակայքով մտնում էր մեր Մայր Հայրենիքի սահմանների մեջ: Գեպի պատմական ավերակ մայրաքաղաքը հնարավոր էր անցնել երեք ուղղությամբ՝ Ալեքսանդրոպոլից (Լենինականից) կառքով 35—40 կիլոմետր բնահողային քարքարոտ վատ ճանապարհով, կամ Աղիևի երկաթուղային կայարանից, որը գտնվում էր ավերակներից մոտ 12 կիլոմետր հեռավորության վրա, և վերջապես Անի կայարանից 6—8 կիլոմետր հեռավորությամբ, հետիտն կամ սայլով:

Շիրակում Անիի թագավորության բարգավաճման ու շին տարիներին, այն կապված է եղել, Ախուրյան գետի ձախ ափով, մի քանի հույակապ կամուրջներով:

Գարբի արհավիրքներից քանդված մեծ կամուրջի մնացորդներ են մնում Անիի մտակայքում:


Աշոտ Ողորմածի (963—977) թագավորության տարիներին, 964 թվականին, կառուցվեցին քաղաքի առաջին, այսպես կոչված Աշոտյան պարիսպները: Այս պարիսպների մեծագույն մասը պեղվել են 1893 և 1904 թվականներին, Աշոտյան պարիսպների կառուցմամբ Անիի սկզբնական մասը, որի մեջ մտնում էր և Անիի պատմական միջնաքերը, ստանում էր քաղաքի տեսք:

1963 թվականին լրացավ Անի ֆաղափի ճիմնադրման հազարավայակը:


Աշոտ թագավորի հաջորդ Սմբատի (977—990) ժամանակ էլ՝ ավելի է զարգանում քաղաքի շինարարությունը, նրա սահմանները մեծանում են պարիսպներով, աշտարակներով, հրակնատներով և այլ ամրություններով:

Անին մի մեծ, անդնահատելի քացոյյս թանգարան էր, որի գոհարներն էին Կաթողիկեն, Գազկաշեն Ս. Գրիգոր եկեղեցին, Հովվի եկեղեցին և այլն: Հստ պատմական տեղեկությունների, հրաշակերտ Մայր Տաճարի հիմքը գրվել է Սմբատ թագավորի կողմից 989 թվականին: Կառույցի շինարարությունը շարունակեց Գաղիկ թագավորի կինը՝ Կատրամիզե թագուհին:

Թե՛ իր շափերով, թե՛ իր վեհությամբ ու սրանչելի քանդակներով ու փորագրություններով, առանձին տպավորություն է թողնում Կաթողիկեն: Նրա մեծ գմբեթը զարդարված էր մի մեծ արծաթյա խալով, որն ըստ ավանդողության բերված է եղել Հնդկաստանից:



Ֆիլիսի գոտիում Սեդա վեդանեցու կենտրոնի ջրը կան ՄԻ ՎԻՄ



Անիի պարիսպները Ռյուսիս-արևելյան կողմից: Հեռավում՝ Կաթողիկեն և միջնաբերդը:

Գմբեթը, ըստ եղած տեղեկությունների, վնասվել և խորտակվել է 1319 թվականի մեծ երկրաշարժից: Բարեբախտաբար մեզ հասել է շինարարության ժամանակակից Ասողիկ պատմագրի կարևոր վկայությունը, որ Կաթողիկեն կառուցվել է աժ ձեռն ճարտարապետի Տրդատայ, որ զԿաթողիկոսարանին եկեղեցին շինեաց յԱրգինայի¹:

Կաթողիկենի աշխատանքները վերջացնելուց հետո, Տրդատը անցնում է մի այլ կարևոր աշխատանքի՝ Գաղկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու շինարարությանը: Ըստ պատմագիրներից հասած վկայությունների (Ասողիկ, Սամվել Անեցի), Գաղիկ Ա թագավորը իր Ս. Գրիգոր եկեղեցին պատվիրել է վառուցել ներսեւ Տայեցու կողմից կառուցված Զվարթնոցի եկեղեցու օրինակին համապատասխան²:

1036 թվականին կառուցվել է Ս. Փրկիչ եկեղեցին:

Միայն 1905—1906 թվականներին կատարված պեղումների շնորհիվ հայտնաբերվեցին Գաղիկ Ա թագավորի կողմից 1001—1015 թվականներին կառուցված կլորակ հուշակալ տաճարի փլատակները: Այդ եկեղե-


ցին, ինչպես նշեցինք, Զվարթնոցի՝ է դարի հայ ճարտարապետության հուշակալ կոթողի ընդօրինակությունն է:

Այդ կարևոր հուշարձանը կառուցողը նույն ժ—ԺԱ դարի հուշակավոր Տրդատ ճարտարապետն էր: Գաղկաշենի ավերակների պեղման ընթացքում հայտնաբերվեց Գաղիկ թագավորի մոտ 2,3 մետր քարձրությամբ արձանը: Արձանում Գաղիկը քանդակված է իր ամբողջ հասակով, թագավորական արևելյան վերնազգեստ-խալաթով և խալիֆի կողմից նվիրված փակեղ-շալմայով:

Դարեր շարունակ ճարտարապետական և պատմական արժեք ներկայացնող Անիի անգուցական գոհարների պահպանման խնդիրը եղել և մնում է կարևոր հարց: Այն, ինչ պահպանվել է դարերի ահավոր արհավիրքներից, միշտ ենթակա է եղել ավերակ քաղաքի շրջակայքի բնակչության ավերմանը: Դրությունը շփոթվեց նաև 1877—1878 թվականների ռուս-տաճկական պատերազմից հետո, երբ Կարսը և նրա մարզը, որի մեջ էր մտնում Անին, միացվեցին Ռուսաստանին: Անին ու նրա շրջակայքը մնում էին անուշադրության մասնված և շրջակա քուրդ բնակչության համար ծառայում էին որպես արտատեղ, պետության կողմից օգտագործվելով ինչպես բահրատու հողված (օբրոչնայա ստախ): Միայն անցյալ դարի ութսունական թվա-

¹ Ստեփանոսի Առաջիկա Տարեկան, «Պատմություն Հայաստանի», Պետերբուրգ, 1885 թ., գլուխ Ա, էջ 185—187:

² Սամուելի Բանեցույի Անեցույ, «Հայաստանի պատմագրություն», Վաղարշապատ, 1893 թ., էջ 104:



Անիի Գազկաշեն Ա. Գրիգոր եկեղեցու ավերակներն արևելյան կողմից:

կաններին, երբ Անիի ավերակների հսկողութիւնը հանձնվեց էջմիածնի հոգևոր իշխանութիւնը և Գևորգ Դ Կաթողիկոսի կարգադրութեամբ այնտեղ կազմակերպվեց վանահայրութիւն, սկիզբ դրվեց հուշարձանների, շինած անբավարար, հսկողութիւնը և պահպանմանը: Նոր կազմակերպված Ալեքսանդրոպոլի (Լենինականի) հոգաբարձութեան ջանքերով կառուցվեց մի քանի սենյակից բաղկացած շէնք (սմիարանութիւնը)³՝ այցելուների և ուխտավորների համար: Հետագայում այդ և նման համեստ իրազորութիւններ մեծ նշանակութիւն ունեցան Անիի ավերակների պահպանման և նրանց դիտական ուսումնասիրման համար:

Ինչպես տարբեր տարիներին քաղաք այցելուները իրենց բազմաթիվ գրառումների մեջ, այնպես էլ Լենին իր «Անի» աշխատութեան մեջ ավերակների պահպանման գործում հատկապես նշում են մի երախտավոր մարդու՝ Անիի վանահայր Միքայել վարդապետ Տեր-Միլասյանի անունը:

Մեր պատմական անցյալին դիտակ, պատմական հուշարձանների պահպանման գործին նվիրված այդ համեստ վանականը, սկսած

ԺՅ դարի վերջերից մինչև 1920 թվականը, չորս կողմ տիրող ամայութեան մեջ, ամառ ու ձմեռ, հաճախ օրվա հացի կարոտ, եղել է ավերակների անընդմեջ պահպանքը, խնամողը, այցելուների ուղեկիցն ու բացատրութիւններ տվողը:

Միայն 1891—1893 թվականներից սկսած և հատկապես 1904—1917 թվականներին, ավերակների ուսումնասիրման գործը դրվեց գիտական հիմքերի վրա, երբ ակադեմիկոս Ն. Յա. Մառի⁴ նախաձեռնութեամբ սկսվեցին պեղումները, որոնց տարբեր ժամանակներում մասնակցել են նաև Ք. Քորամանյանը, Հ. Օրբելին, Ամբատ Տեր-Ավետիսյանը, Տարագրոսը, Աշխարբեկ Քալանթարը, Տոկարսկին և ուրիշներ:

Պատմական ողբերգական դեպքերն արգելք հանդիսացան Մառի և նրա աշակերտների երազանքի՝ «Անիի հնագիտական ինստիտուտ»-ի կազմակերպման իրականացմանը:

³ Ականավոր դիտական, լիզվարան ու հայտնու Նեկույի Ցակովսկի Մառը (1884—1937 թ. թ.) մեծ վատակ ունի Անիի հնութիւնների ուսումնասիրման գործում:



Անիի վանահայր Սիքայեյ վարդապետ Տեր-Մինասյանը (վերևում, ճախից 2-րդը) մի խումբ այցելուների հետ:

Ըստ ակադեմիկոս Ն. Յա. Մառի, Կովկասը կարող է պարծենալ ոչ միայն այն զարդերով ու գանձերով, որոնցով օժտել է նրան բնությունը, այլև սերանցից լավագույններին հավասար, Կովկասը կարող է պարծենալ Երկնքի մի կույտուրական պարզեով՝ Անիի ավերակներով, հնագիտական պատկերի յուր այդ խոշոր մարզարիտով՝:

Այդ տարիներին Անիում կառուցված մի քանի շենքերից հատկապես պետք է նշել Ն. Յա. Մառի անմիջական նախաձեռնությամբ կառուցված թանգարանի շենքը, որտեղ, հնարավորության սահմաններում, տեղադրվեցին շատ կարևոր մասունքներ, դրանով իսկ փրկվելով անիուսափելի կորստից:

Անիի ավերակները տեղավորված են մի հռանկյան վրա, որտեղ հատվում են Ախուրյանի և Անիի (Ալաշայի) խոր կիրճերը և զրադեցնում են մոտ 160 հեկտար տարածություն: Այդպիսով, քաղաքը երեք կողմից խոր ձորերով է շրջապատված, որով և ժամանակին անմատչելի էր թշնամիների համար: Հյուսիսից քաղաքը եզրափակում են հույ-

կապ Սմրատյան պարիսպները, որոնց բեկորները դեռ այսօր էլ առանձին մասերում կանգուն են և թողնում են զարմացնող տպավորություն: Պարզ է, որ այդպիսի մեծ քաղաքը պետք է ունենար և՛ խմելու, և՛ ոռոգման ջուր: Հիմնական ջրատարները գալիս էին Ալաշայի և Սուզուլույի ստորոտներում երեւոտարելիս, հայտնաբերվեցին հնագույն փողոցների հետքեր և շրմուղի խողովակներ, ըստ որում վերջիններս մի շարք վայրերում:

Բացի րացոդյա Անիից, գոյություն ունի նաև արեղգետնյա Անի, որի շուրջը հյուսվել են մի շարք ասուլթներ, ավանդություններ: Քաղաքի տակ գտնվող անցքերը ժողովրդի մեջ ստացել են «Գեղան գելմազ» («Գնացողը հետ յի գա») անունը: 1901 թվականի հուլիսի 29-ին Անի են այցելում երկաթուղու մի շարք ինժեներներ, Ալեքսանդրոպոլի գծի տեղամասի պետի տեղակալ Իվան Պանովի գլխավորությամբ: Նրանք հատուկ պատրաստությամբ, զինվելով ացետիլենի լապտերով և այլ հարմարություններով, մեծ դժվարությամբ անցնում են մինչև վերջին մեծ ստորասրահը, որտեղից անցնում են տարբեր ուղղությամբ ճյուղավորված ստորանցքերը, որոնց երկարությունը հասնում է մինչև 960

Ն. Ուրբի. «Անվա ավերակներ», թրգմնթ, աստերակից Հուսիկ արքեպիսկոպոսի, Վաղարշապատ, 1911 թ., էջ 56:



Անիի այրերի ընդմանուր տեսքը Եղեղեղի մոտ

մետրի, իր գրառման մեջ (գիրք 1, թերթ 3) Պանոփը նշում է, որ ըստ իրենց կարծիքի, նրանք առաջինն են, որ տալիս են հիշյալ գետնանցքերի իրական նկարագիրը և նշում են, որ բարանձավները ներկայացնում են պատմական մեծ հետաքրքրություն:

Տարեցտարի ավելի էր մեծանում հետաքրքրությունը դեպի Անին, դրան զուգահեռ ավելանում էր նաև ավերակները այցելողների թիվը: Այցելում և վերահիշյալ մատյաններում իրենց տպավորություններն էին գրի առնում ոչ միայն մոտակա Երրակի, Զավախքի, Լոռու հայ շինականներն ու մտավորականության մեծաթիվ ներկայացուցիչները, այլև Անիի ավերակներից ստացած իրենց ցնցող տպավորություններն էին թողնում այնտեղ ուսանի, վրացիներ, ազգբնակիցներ, ուկրաինացիներ և մեծ թվով օտարերկրացիներ:

Մատյաններում քանաստեղծությամբ, արձակ ձևով, երփնանկարներով և այլ կերպ, անկախ ազգությունից, գրադմունքից ու դիրքից, իրենց հույզերն են թողել հայ գաղթականն ու եվրոպացի մեծահուշակ գիտնականը, ոուս գինվորականն ու մտավորականը: Մատ-

յաններում կարելի է փոնել Իսահակյանի, Թումանյանի հուզախառն խոսքերը, Պ. Պոռյանի հակիրճ, բայց բովանդակալից երկտողը և ուրիշ շատ անվանի մարդկանց ստորագրությունները: Նրանք բոլորն էլ հիացմունքով ու ափսոսանքով են խոսում հայ ժողովրդի հիասքանչ քաղաքամոր փառավոր անցյալի ու անփառունակ ներկայի մասին:

Անիի ավերակների այցելուների տպավորությունների առաջին մատյանը (Հայկական ՄՍՌ պետական կենտրոնական պատմության արխիվ, ֆոնդ 57, գործ 704) բաղկացած է 123 թերթից, Մատյանում առաջին գրառումը կատարվել է 1901 թվականի հունիսի 15-ին, վերջինը՝ 1906 թվականի սեպտեմբերի 16-ին: Երկրորդ մատյանում (նույն արխիվում՝ ֆոնդ 57, գործ 705) գրառումները կատարվել են 1908 թվականից մինչև 1913 թվականը: Ցավոք, մնացյալ ժամանակաշրջանի գրառումները մեզ չեն հասել: Գրառումների որոշ մասը գունաթափվել է և դժվարընթեռնելի է:

Գրառումներից տեղեկանում ենք, որ 1901 թվականի հուլիսի 20-ին էջմիածնի Գևորգյան ճեմարանի սաների հետ Անի է այ-

ցելի Գ յարանի ուսանող, հետագայում ականավոր երաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանը:

14 հոգուց բաղկացած մի խմբով 1902 թվականի հուլիսի 19-ին, ավերակները այցելության են եկել Արամայիս նրզնկյանը (1879—1938), որ հետագայում եղել է Խորհրդային Հայաստանի հողժողովում ու ժողկոմխորհի նախագահի տեղակալ, Դանուշ (1882—1938) և Ալեքսանդր (1879—1938) Շահվերդյանները, Ռուբեն Դաշտոյանը (1879—1938),— հետագայում ականավոր սովետական և պարտիական գործիչներ,— նիկողայոս⁵, Հայկանուշ և նատալիա Շահումյանները և ուրիշներ (նույն արխիվում, նույն ֆոնդում, գործ 704, թ. 29):

1903 թվականի մայիսի 26-ին Անի է այցելել հայ դերասանների մի խումբ՝ անմահ Սիրանուշի գլխավորությամբ, որոնք, ի դեպ, իրենց միջոցներով, տեղում պատրաստել են տվել Անիի Մայր Տաճարի համար մի փայտյա դուռ, որի կարիքը խիստ զգացվել է: Նույն թվականի հունիսի 27-ին Անի է այցելում սմշակյաններ-ի մի խումբ, որոնց թվում Մոսկվայի կազարյան ճեմարանի պրոֆեսոր, ականավոր հայագետ Գրիգոր Խալաթյանը, բազմավաստակ պատմաբան Առաքել Բաբախանյանը (Լեո)⁶, սՄշակ-ի խմբագիր Ալեքսանդր Քալանթարը և ուրիշներ:

1903 թվականի օգոստոսի 22-ին Անի են այցելում Պարսկաստանում ֆրանսիական զիտական պատգամավորության կցորդը⁷ և ուրիշներ:

1909 թվականի հունիսի 25-ին Անի են այցելում Մատթեոս Բ Իլմիրյան կաթողիկոսը (1845—1910), ականավոր հրապարակախոս և բանասեր Մինաս Զերազը (1852—1929) և կաթողիկոսին ուղեկցող այլ անձինք: Կաթողիկոսը նկարվում է Բազրատունյան Գազիկ թազավորի պեղումներից հայտնաբերված արձանի մոտ:

⁵ Նիկողայոս (Նիկո) Շահումյան (1880—1908), Ստեփան Շահումյանի ավագ եղբայրը, հասարակական գործիչ:

⁶ Ինչպես հայտնի է, այդ այցելությունը առիթ դարձավ Լեոյին զրելու իր հանրահայտ «Անի» աշխատությունը:

⁷ Ստորագրությունն անընթեռնելի է:



Մատթեոս Բ Իլմիրյան կաթողիկոսը Անիում, Գազիկ Բազրատունի թազավորի արձանի մոտ:

1911 թվականի հունիսին Անի են այցելում Մոսկվայի կազարյան ճեմարանի սաները, այնուհետև նոր-նախիչևանի թեմական դպրոցի ուսուցիչների և աշակերտների 20 հոգուց բաղկացած մի խումբ, այդ թվում Խաչատուր և Նզիա Զուրարյանները:

1912 թվականի օգոստոսի 23-ին տպավորությունների մատյանում իր ինքնագիրն է թողել մեր մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանը:

1913 թվականի սեպտեմբերի 29—30 Անի է ժամանում և մանրամասն ուսումնասիրություններ կատարում ավստրիական ականավոր զիտական, պրոֆեսոր Ստրժիգովսկին (1862—1941), որը զերմաներեն թողել է իր գրառումը, որի տակ Ստրժիգովսկու հիտատրագրել են Ք. Քորամանյանը և Լեոն Լիսիցյանը⁸. Ստրժիգովսկին, հիմնվելով Քորոս Թորամանյանի հին հայկական ճարտարա-

⁸ Լեոն Լիսիցյան (1892—1921), բանասեր Ստեփան Լիսիցյանի որդին, որը զործուն մասնակցություն է ունեցել Ստրժիգովսկու աշխատանքներին: Չնչվել է վաղարշապատում, 1921 թվականի քաղաքացիական կռիւների ժամանակ:

պետությունն ուսումնասիրությունների վրա, 1918 թվականին հայ ճարտարապետության ու նրա փոխազդեցությունների մասին վիճակնայում հրատարակել է հրկհատոր արժեքավոր ուսումնասիրություն⁹:

Անի այցելողների տպավորությունների մատյաններում թողած հարյուրավոր դրառումներից այստեղ ժամանակադրական կարգով ուշադրության ենք ներկայացնում մի փոքր մասը: Օտար այցելուների ֆրանսերեն և իտալերեն տեքստերը թարգմանել է Վ. Դարբասյանը:

1 23 հուլիսի 1801 թ.

ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ԱՌԱՋ

Օ՞ փրատակներ, սև ավերակներ,
Երազ օրերի տխուր վկաներ,
Ասացե՛ք, ո՞ւր է մեր փառքը նախկին,
Ո՞ւր է Շիրակի մեր ճին թագուհին:

Ո՞վ գրկեց ետեւն գանդից հարագառ,
Տապալեց մանվան մաշիլ խորխորառ:
Ո՞ր անգութ ձեռքը խորտակեց իսպառ
Հայի օրորման այս հրաշավառ:

Ո՞ւր են վաղեմի շքեզ պալատներ,
Մե՛ք Բանդակագորդ անքիվ տանաբներ:
Մի՞թե միշտ նոգա կմնան կործան,
Կմնան, իբրև փառքի մանաբան:

Թայց, ավերակներ, է՞ր շեք բարբառում,
Սգավոր պահտին է՞ր շեք սփոփում:
Մի՞թե միշտ ձեռ տեղ, փրատակների մեղ,
Բուներ պիտի ձայնեն միշտ անվերջ...:

Հարութիւն Թումանյան¹⁰

(Գիրք 1, թ. 2)

2 3 օգոստոսի 1801 թ
ԱՆՅՈՐԳԻՆ, ՊԱՐԻԱՊՆԵՐԻ ԻՓՑ

Մինչ ե՞րբ այդպես լալաճառաչ,
Ո՞վ դու անցորդ պատանի,
Հուզես, հեծես ու լալականչ
Ձայնես, ա՛խ Անի, ջա՛ն Անի...:
Հովհաննես Շիրակունի (Շիրակեցի)

Աշակերտ Քվիթիթի դպրանոցի

(Գիրք 1, թ. 5)

3 3 օգոստոսի 1801 թ

Փա՛ռք ու պատի՛վ հայրենիքի քաջակորովների, որոնք ստեղծագործեցին Անու անխորտակելի ամրոցը:

Ուսուցիչ Կ. Զինեիս
(Թարգմանություն Լուսերենից)

(Գիրք 1, թ. 5)

⁹ Josef Sirzygowski, „Die Baukunst der Armenter und Europe“, Wien 1918.

¹⁰ Հարություն Թումանյան (1869—1948), — ցարկոսեցի, բանաստեղծ:

4

20 օգոստոսի 1801 թ.

Օգոստոսի 20-ին, երեք ընկերներով այցելեցինք հեռության նշանավոր հուշարձան հիասքանչ Անի քաղաքը և հիացանք նրա զեղատեսիլ և հույակապ ավերակներով: Ինչպիսի՞ տեսարաններ, ինչպիսի՞ բանաստեղծություն, Մեզ շատ դուր եկան հյուրանոցի մոտի հույակապ և վեհաշուք Մայր Եկեղեցին և լարոխտ աշտարակը՝ իր մավրիտանական սյունաշարով, որտեղ գիշերեցինք:

Ա. Ատաղիճի

(Թարգմանություն իտալերենից)

(Գիրք 1, թ. 8)

5

31 մայիսի 1802 թ.

Անցած դարերի վեհությունը և հայերի հպարտությունը դժբախտաբար այսօր ներկայացնում են միայն ավերակներ:

Իշխան Ն. Ա. Զիկովանի

(Թարգմանություն վրացերենից)

(Գիրք 1, թ. 22)

6

3 հուլիսի 1802 թ.

Ի ԴԻՄԱՑ ԱՆՎՈ ԱՎԵՐԱԿՆԵՐԻ

Օ՞, դու Անի, հայոց փառաց կենդանի վկա:
Տեսեր ես դու շատ ու շատ հայ արհա,
Այժմ թափուր է արհայիցդ հզոր գան,
Կարոտ հայ սիրտը շտապով՝ հեզ կգա:

Համբարելով ամեն մի սուրբ քար,
Հիշատակդ սրտումը կպահես դարհ դար,
Արտավելով պատելով սարհ սար,
Թայց իրեն մեջը գանում է անհնար:

Եկող այցելողին կարոտն կհագնեմ,
Տխուր տպավորության տակ կհեռանա,
Քո հիշատակն միշտ սրտում կունենեմ,
Հավիտյան ցավելով, հավիտյան սգալով:

Նույն բանը պատանեց և իճն այցելուիս,
Բագրատունյաց նվիրական բեկորները
տեսնելիս,
Այժմ հագուդդ իմ ցանկացած սրտիս,
Հեռանում եմ, լալով ու տղբալով:

Մինրան Մկրտիչան (Պայաուրտեցի)
(Գիրք 1, թ. 26բ)

7

4 հուլիսի, 1902 թ.

« Անի, — սանսկրիտ, — մայր լեզվից է բխել, և կրակ, հո՛ւր կնշանակել: Պրակի գիցուհի, և թող նա, պանծալի Անին, լինի անշեշ հուր հայության սրտում վառելու և բորբոքելու աղատության սերը և լինի մեր վերածնության ֆենիքը, թո՛ղ այրվի, վառվի հայության սիրտը, իսկ ի՛նչ որ այրվում է՝ նաև լույս ունի: — Հավատա՛նք, որ լուսավոր են լինելու մեր դալիք օրերը, մեր նոր կյանքը... »

Ավետիք Խաճակյան

(Գիրք 1, ք. 28թ)

8

7 հուլիսի 1902 թ.

Հուսնյակ հիանալի մի գիշեր հասնելով Անի, առավոտյան կարծեցի, թե գտնվում եմ հրավառության մի աշխարհում: Ողողված արևի ճառագայթներով, Անին ինձ վրա թողեց այնպիսի խոր ու ողբերգական տպավորություն, որ ես վերապրեցա հայ ժողովրդի անցյալը, ես թափեցի կարեկցության և զմայլանքի արտասուքներ այն մարդկանց համար, որոնք իրենց անկախության և Քրիստոսի կրոնի սիրույն, կանգնեցրին այս տաճարների՝ այդքան խստաբարո, շինչ և իղբալական դժբերով, այն հոյակապ պարիսպները, որոնք կարծես արհամարհում են ամեն տեսակ հարձակումներ:

Անիից հեռանում եմ սրտումս մի աղոթք պահելով այս հին հայերի սերունդների համար, որպեսզի Աստված նրանց պարգևի արժանի մնալ իրենց նախնիքներին՝ իրենց քրիստոնեական և քրտանեկան առաքինություններով:

(Առաքարությունը անընթեռնելի է)

(Քարգմանությունը ֆրանսերենից)

(Գիրք 1, ք. 27)

9

26 հուլիսի 1902 թ

Ես շատ եմ լսել այս հինավուրց քաղաքի մասին, շատ բանի չէի հավատում: Գիտելով այն, ես հավատացի այն հիասքանչ և դարձանալի քաղաքի հարուստ և մեծահուշակ ինարարների անցյալին: Իրոք կարելի է ողբալ նրա ավերակները: Ամեն մի քարը խոսում է և նրան հարկավոր է հասկանալ:

Ք. Ե. Զեղզիենիճե՛

(Քարգմանությունը ուսերենից)

(Գիրք 1, ք. 32)

10

19 օգոստոսի 1902 թ.

Երբ այրում միայնակ նստած, Անցնում էին ժամերը ծանծաղացած, Տեսնում էի կործանված վաճփի պատերը, Եվ նորա շուրջը կանգնած իմ բնկերները:

Տխուր ու տրտում սև օր է պատել, Մեր սրտի վերա վերեբ եմ դիզվել, Անի, ե՛րբ պետք է լինի քո վերածնորդումը, Ու մեզանից հեռանան այս սև օրերը:

Թող շտխրեն հայերը վնասությամբ, Թե կկոչենք մենք հավիտյան, Կգան օրեր ուրախության Ու մենք էլ կցնծանք հավիտյան:

Այսուհետև ամեն մի հայ պարտականությամբ, Թող աշխատի միշտ անդգնությամբ, Թող շարե իր կրճիք բեղր ծաղկության, Փորձն սուրբ գործը միշտ միությամբ:

Անա մոտենում եմ ուրախության օրերը, Մեր աշխատանքի գուտ արդյունքը, Այն սուրբ նախատակների արյունը Կրողոքե առ Աստված հայ անունը:

2. Խրխրանաց

(Գիրք 1, ք. 34)

11

16 մայիսի 1903 թ.

Անկասկած Պարսկաստանի հետ հարևանության պատճառով նախկին Հայաստանի սուրբ մայրաքաղաքը արժանացել է հազար ու մեկ եկեղեցիների քաղաքի մականվան. այդ թիվը նեհհրազաղեի իշխանուհու բերանով նշանակում է անհամար: Տասնչորսերորդ դարից սկսյալ, թուրքական և մոնղոլական ավերածությունները, ինչպես նաև երկրաշարժերը շատ բան ոչնչացրին, բայց և այնպես տաճարների և շենքերի այնքան շատ ավերակներ են մնացել, որ ոչ տարերքը և ոչ էլ մարդիկ երբեք չեն կարողանա կործանել այդքան հոյակապ, պատկանելի, հայերի հավատքի վկա այս սրբարանը:

Լուիզա Մոնջուտի

(Քարգմանությունը ֆրանսերենից)

(Գիրք 1, ք. 50)

12

28 մայիսի 1903 թ

Եկանք ուխտ Անի և գիտենալով եկեղեցիների սրբազան անոթներից բոլորովին զուրկ

11 Ք. Ե. Զեղզիենիճե, էլմիածնի գովառային բժիշկ:

լինելը, ընծայարեքցինք Մայր նկեղեցուն մի արծաթյա սկիհ, հույս ունենալով, որ ամեն մի այցելու իրան պարտք կհամարե անշքացած Անիի տաճարները ամեն կերպ զարդարելու:

Սիրառույշ¹¹, Մ. Ավետյան¹², Ազնիվ¹³, Փռառեմեմ¹⁴, Ա. Վրույր¹⁵, Մ. Աղայանց¹⁷, Գր. Ավետյան¹⁸, Անդրանիկ¹⁹, Ա. Գուլյանց, Ա. Բերոյան²⁰, Բ. Հառաբյուրյան:

(Գիրք 1, ք. 51բ)

13

7 հուլիսի 1803 թ.

Ահա գեթ ավերակներ, որոնք միայն բեկորներ և ավերակներ են, որտեղ մնացորդները ցույց են տալիս, թե նախկինում ինչ են եղել: Գուցե Անին իր բարգավաճման ժամանակ երբեք այսքան գեղեցիկ, տպավորիչ չի եղել, քան այժմ և ժամանակը՝ այդ մեծ քանդակագործը, իր գործը կատարել է այնտեղ: Այստեղ պետք է շրջագայել առանձնապես պայծառ լուսնով. պայծառ լուսնի ժամանակ, տեսարանը անմոռանալի է:

Մաղթենք, որ հնագետները քարուքանդ շանն այդ ավերակները:

Ֆրանսիական բանակի ինժեներ, կապիտան

(Ստորագրությունը անընթեռնելի)

(Քաղաքանութուն Ֆրանսերենից)

(Գիրք 1, ք. 53)

14

27 հունիսի 1803 թ.

Մեծ ցավերն անխոս են...

Տիգրան Զավեն²¹

Քարերն անգամ խոսում են:

Գր. Խալաբյանց²²

Այո, բայց խոսքից ավելի գործ է հարկավոր մեզ պես ժողովրդին:

Ա. Բարախանյան²³

Անին մի մեծ գիրք է, դեռ լավ չի կարդացված և ուսումնասիրված, մի գիրք, որ պարունակում է հարուստ նյութ հայոց անցյալ կյանքի թե՛ քաղաքական և թե՛ կենցաղավարական, տնտեսական և առհասարակ երկրի կուսուրդական և աշխարհայինական ընդունակություններին: Անիի ուսումնասիրությունը ընդարձակ ծրագրով առաջիկա ապագայի գործն է: Ահա այն տպավորությունը, որ ինչ վրա թողեց Անին երեք անգամ այցելություններին միջոցին:

Ալեխանդր Քալանթար²⁴

(Գիրք 1, ք. 52)

15

22 սեպտեմբեր 1803 թ.

Հրաշալի ավերակներ, Կմաղթեմ, որ խիստ շատ շտապող գիտնականները չկործանեն նրանք և նվիրագործներն իրենց քանաստեղծությունը:

Բոնդուր, արտիստ, նկարիչ, Փարիզ²⁵

(Քաղաքանութուն Ֆրանսերենից)

Կցված լինելով ֆրանսիական գիտական պատգամավորությունը Պարսկաստանում,

¹¹ Սիրառույշ (Գանթարճյան Աերովդե) 1857/1868—1931), հայ մեծատաղանդ դերասանուհի:

¹² Մարիամ Ավետյան (1881—1963), դերասանուհի:

¹³ Ազնիվ Անդրանիկ (1877—1960), ակադեմիկոս դերասանուհի:

¹⁴ Փռառեմեմ (1864—1915), դերասանուհի:

¹⁵ Արամ Վրույր (Արամ Մինասի Մաքսոճյան) (1883—1924), հայ ակադեմիկոս կատակերգու, խմբագրիչ և հրատարակիչ է շուշարաթ թատերական, գրական-գեղարվեստական հանդեսը: Նա միաժամանակ նվիրվել է Անիի ավերակների ուսումնասիրման և հատկապես նկարահանման գործին:

¹⁷ Մատթեոս Աղայան (1861—1932), դերասան, բեմ է բարձրացել 1926 թվականին:

¹⁸ Գրիգոր Ավետյան (Գյուղյա Գրիշա) (1870—1926), ակադեմիկոս դերասան և թատերական գործիչ, Հայկական ՍՍԻՐ յոթովյական դերասան:

¹⁹ Անդրանիկ (1873—1949), դերասան, ծնվել է Ազուխում, բեմ է բարձրացել 1890 թվականին, վախճանվել է Լոս-Անժելեսում:

²⁰ Արտեմ Բերոյան (1878—1963), ակադեմիկոս դերասան: Հիմնականում գործել է Քրիլիսիում:

²¹ Տիգրան Զավեն (Գուլազյան) (1874—1919), հասարակական գործիչ, բանասեր:

²² Գրիգոր Խալաբյանց (1858—1912), Մոսկվայի լազարյան ճեմարանի բազմամյա պրոֆեսոր: Ծնվել է Ալեքսանդրոպոլում (Լենինականում), բարձրագույն կրթություն ստացել է Մոսկվայի համալսարանում: Ակադեմիկոս հայացել:

²³ Առաքել Բարախանյան (Լեռ) (1860—1932), հայ ակադեմիկոս հրապարակախոս, բաղամահմուտ պատմաբան և բանասեր:

²⁴ Ալեքսանդր Քալանթար (1856—1913), ակադեմիկոս հասարակական գործիչ, «Մշակ» թերթի երկարամյա խմբագիր:

²⁵ Հիացած լինելով Անիի Մայր նկեղեցու տեսքով, նա մատչելի է գրելով նկարիչ և այդ անդադական հուշարձանը:

երկրորդ անգամ լինելով այցելեցի Անիի հրաշակերտ ավերակները:

(Ստորագրութիւնը անընթեռնելի)

Փարիզ

(Քարգմանութիւն ֆրանսերէնից)

(Գիրք 1, ք. 74)

16

5 սեպտեմբերի 1803 թ.

Անիի ավերակների այցելութունից հետո ես ինձ հետ տանում եմ իմ կլանցի լավագույն հիշատակներից մեկը: Ծավում եմ, որ բացակայում են անհրաժեշտ վերաբերմունք և խնամք՝ լավագույն ձևով պահպանելու հայկական անտիկ և հզոր քաղաքակրթության մնացորդները:

Վիտտուրիո դի Մատտեո

Նեապոլից (Իտալիա)

(Քարգմանութիւն իտալերէնից)

(Գիրք 1, ք. 38)

17

22 հոկտեմբերի 1803 թ.

Գնում էի էջմիածին նոր վեհարանի շինութեան հատակագիծը կազմած լինելով, այցելեցի Անի՝ ուսումնասիրելու հայկական ճարտարապետութիւնը, որ պետք է ասած բավականին հետաքրքիր եղավ և նպաստեց իմ կազմած հատակագծին:

Ճարտարապետ Միսակ Տեր-Գրիգորյան

(Գիրք 1, ք. 38)

18

12/25 մայիսի 1804 թ.

Գտնվելով Անիում և հիանալով նրա վեհությունները, նրբություններ ու իր հիասքանչ ճարտարապետության ինքնուրույնությունները, ակամալից ես սլացա դեպի մի ուրիշ, իտալական քաղաք, նույնպես կործանված՝ քսան դար առաջ: Ես մտքով տեսա Պոմպեյը՝ վեզուվի զոհը և հրաբխի կործանարար գործը համեմատեցի մարդու կործանարար կատաղության հետ, որի զոհը դարձավ հիասքանչ Անին: Սակայն ոչ մեկը և ոչ մյուսը չկարողացան ոչնչացնել նուրբ մշակույթի տեր ժողովուրդներին: Իտալիան արդեն վերակենդանացավ: Կամպեյն, որպեսզի շուտով գա այն օրը, երբ Հայաստանը կվերածնվի: Այդ ժամանակ նրա ժողովուրդը կհանդիսանա նոր և շքեղ մշակույթի ջահակիրը Ասիայի բոլոր ժողովուրդների համար, որոնք այլևս ոտնձգություն չեն անի իրենց ազատարարին, զգալով և հասկանալով այլևս ոչ թե ազգա-

լին, այլ համամարդկային մշակույթի օգուտները:

Մասիմո Յոչի դե Մանեֆֆելի

(Քարգմանութիւն իտալերէնից)

(Գիրք 1, ք. 77)

19

24 հունիսի, 1804 թ.

Ես էլ եկա, տեսի ու ողբացի այս դավթարի վրա:

Հ. Քումանյան

Մե՛նք փառքեր ունենք թողված հողի տակ, Մե՛նք հույսեր ունենք պահած մեր սրտում. Մի՛թե հավիտյան կողքանք ավերակ, Մի՛թե հավիտյան կմե՛նք տրտում:

Հ. Քումանյան²⁰

(Գիրք 1, ք. 83)

20

Քարերը խոսում են... Մի՛թե մենք խուլ կմնանք:

Պ. Պոռշյան

Ռուբեն Մանվելյան

(Գիրք 1, ք. 84)

21

5 օգոստոսի, 1804 թ.

Առաջին գալս էր 1868-ին երիտասարդության հասակում, իսկ երկրորդը՝ ծերության օրերում, 1904 թ. օգոստոսին:

Պե՛հն Պոռշյան

Աննա Պոռշյան²¹

(Գիրք 1, ք. 80ք)

22

Առաջին անգամ գալիս եմ Անի, և խորհուրդ եմ տալիս ամեն մի հային տեսնել Անին, որպեսզի տեսնելով առաջվա հպարտ Հայաստանի ավերակները՝ կորչի Հայաստանում ստրկության հողին և որ այս քանդված պալատները կենդանանան իրենց նախկին վեհոգիությամբ:

Պապակ²²

(Գիրք 1, ք. 80ք)

23

Անհուն խնդրություն եմ վերապրում, որ ինձ էլ, մի անազատ կիսաստրկին, ճակատագիրը պարզե՛նվ և մի ազատ գեղեցիկ օր և ցույց է տվել Քաղրատունիների հոշակավոր

²⁰ Բանաստեղծությանից հետո, Հովհաննես Քումանյանի ստորագրության կողքին կա նաև ականազոր պատմաբան Հակոբ Մանանդյանի ինքնագիրը:

²¹ Աննա Պոռշյան, Պեհն Պոռշյանի կինը:

²² Պապակ, Պեհն Պոռշյանի որդին:

մայրաքաղաքը, Դժվար է արտահայտել այն բարդ զգացմունքները, որոնք տիրապետեցին իմ հոգիս, երբեմն հզոր և փառավոր ժողովրդի կործանված կյանքի մնացորդները դիտելիս:

Այդ և՛ թախիծ և՛ հիացմունք ու ուրախություն, որ ինձ վիճակվեց գիտելու այս փառավոր փլատակները:

Դիտելով դարձրել շնթացքում այդպես զարմանալի կերպով պահպանված ամբուսությունների հզոր պատերը, ինձ թվում էր, որ անցյալ կյանքի հոգին դեռ մնում է այս ալեհերթեղանքների մեջ, որը ապրում, գուցե և ողբում է կործանված թաղավորությունը և ժողովրդի կորցրած ազատությունն ու ինքնուրույնությունը:

Մի՞թե այս ժողովուրդը չի վերածնվի, մի՞թե նա չի ունենալու իր նոր Անին:

Զեմ կարող չհայտնել իմ խորին զգացմունքներս Միքայել վարդապետ Տեր-Միխայելյանին, իր սրտաբաց ընդունելության հասնայանին, իր սրտաբաց ընդունելության համար, նույնիսկ այնպիսի աննշան այցելողների հանդեպ, ինչպես տողերս գրողի՝ սովորական զինվոր-սովորատին: Երբ ես զալիս էի այստեղ, մտածում էի, որ ես հարկադրված կլինեմ ավերակները դիտելու անտարբեր, նույնիսկ թշնամական հայացքների տակ (չէ՞ որ ես զինվոր եմ և այն էլ ոռա): Սակայն ես հանդիպեցի ամենասիրալիր, սրտանց, իսկական արևելյան հյուրասիրություն:

Ռուսական բանակի զինվոր
Միխայիլ Ռոմանով, Ալեքսանդրուպոլից
(Քարգամանություն ուսերենից)

(Գիրք 1, ք. 92)

24

23 մարտի 1905 թ

Մանեղակաճ 1921 Բվակեճե (1905 թ. 23/3)

Ես, կարսի էվլիայամիի իմամ Օմար-Ֆայիդ էֆենդի Մուստաֆա էֆենդի Զադե Անի քաղաքն այցելեցի, աշխարհում շաքատառ զարմանալի բաներն նայեցի և շափազանց վշտացա այն ազգի մասին, որ նորա թագավորների և ժողովրդի օգնությունք խելք չհասնելու բաների վրա գործ (են դրել), գրա՛ն աշխատություններ (աշխատանք և) մի այսպիսի ամենահին քաղաք են շինել. ես աղաչում եմ Աստուծո, որ նորանց հիմնարկության ժամանակին գործ դրած աշխատություններ (աշխատանքները) զուր չանցնեն աշխարհից:

(Հեռու և ստորագրությունը)

(Գիրք 1, ք. 107)

Չրված է պարսկերեն, ապա հեղինակի կողմից արված է հայերեն թարգմանությունը:

12 մայիսի. 1905 թ

Քաղ-կաղիկյարի³⁰ գյուղական դպրոցի ուսուցիչ-աշակերտների մի խումբ այցելեցինք և ուսումնասիրեցինք Անի քաղաքի ավերակները: Այցելությունը շատ օգտակար և բավարար էր, ինչին օժանդակել է Միքայել վարդապետ Տեր-Միխայելյանի սիրալիրությունը և հյուրասիրությունը: Սրտանց բոլորի կողմից նրան հայտնում ենք գրավոր շնորհակալություն: Աշակերտներին և մեր կողմից Հայաստանի հին մայրաքաղաքի ավերակների դիտումը, իմ և թե շատ այլ այցելողների մեջ առաջ բերեց խոր մտորումներ թե՛ հայ ժողովրդի և թե՛ ամբողջ մարդկության ճակատագրի մասին:

Այցելողներից շատերը արտահայտում են (մատչանում) նեղ ազգայնական գաղափարներ:

Իմ կողմից ցանկանում եմ, որ բոլոր ժողովուրդները համակվեն ինտերնացիոնալ, հավասարություն և եղբայրական գաղափարներով:

Դպրոցի վարիչ, կոսմոպոլիտ,
Էսպերանտիստ Յան Ռաուֆման
(Քարգամանություն ուսերենից)

(Գիրք 2, ք. 110)


26

1909 թվականին քախտ ունեցա երրորդ անգամ տեսնել Անի քաղաքի ավերակներն և ստանալ ներհակ տպավորություն. այն է առաջին և երկրորդ տեսությունս ժամանակ տեսա շատ կանգուն մնացորդներ, բայց սակավ արժեք: Երրորդ անգամին տեսա սակավ հետ շինությունք՝ այլ հայություն բախտի համար շատ և շատ տխուր, վերակենցողություն նախնական արվեստի և արհեստի շնորհիվ խոզարկությանց գերազնիվ ուսուցչապետ Նիկողայոս Մոզի և շանքով ճարտարապետ Քորոս: Քորամանյանի նշանավորությունց գաղտնյաց և ծածկունի բացատրությունն: Ուստի գոհությունք սրտի այցելելով ամեն թանգարաններն ուխտավոր հոգով, հարգեցի հայտնված հնությունք և երկրպագեցի հայոց Գաղիկ առաջին արքային ևս: Վերադարձա հավատարմությամբ թե ոչ միշտ ասպետայի առարկայք կորչում են ավերակներում, այլ հրաշապես վերակենդանացնելով:

Յ Մեծ հայաբնակ գյուղ կարսի մարզում, Ալեքսանդրուպոլի (Հեղինակների) երկաթգծի Քաղ-կաղիկյար կայարանի մոտ:



Անիի Ա. Փրկի, եկեղեցին, կառուցված 1036 թվականին:



հարուցանում են միակողմությունից (անընթեհոնելի բառ) իրենց բնիկ տերերին:

Սուփրաս արքեպիսկոպոս Պարզյանց²¹

27

28 հուլիսի 1809 թ.

Անվո ավերակներն ասում են հայերին՝ ձեր պապերը հետեւել են իրանց դարու իշխող քաղաքակրթական բարոյական գաղափարին և այս են արտադրել, որով զուք կարող եք պարծենալ. դուք էլ հետեւեցեք ձեր դարու բարձրագույն գաղափարին, որ ձեր սերունդն էլ ձեր արտադրություններով կարողանա պարծենալ:

Ստեփանոս Տեր-Սարգսյանց²²

(Գիրք 2, Թ. 3)

28

3 հունիսի, 1912 թ.

Ձեմ ասում՝ եկա, տեսա, ողբացի: Ու հայրենի ժողովրդի անցյալը յուր փառահեղությամբ վանգնած է ոչ միայն հայի, այլև օտարի առաջ: Անցյալ կյանքը մեզ հաճախ տխրությամբ է զալիս ասելու՝ «Մեր պապերը Հոռոմն են փրկել: Իսկ մենք, մեր այսօրվա ապրողներս, ի՞նչ ենք արել և ի՞նչ ենք անում: Մենք մեր պապերից միայն մի քան ենք վաստակել՝ դարերով կործանել հայրենի փառքը: Իսկ ստեղծել փառք, եղածին ավելացնել նորը, այդ հոռու է դժբախտաբար մեզնից: Հրճվանքով դիտեցի մի քանի անգամ դիտածս ու նոր հրապարակ եկած հնությունները, մտքով սլացա անցյալ դարերը ու առանց ողբալու, առանց հայի պատմության լավականության համոզվեցի, որ անցյալում ստեղծագործող հայ ժողովուրդը, եթե այսօր դատապարտված է անգործության, անշուշտ, վաղը պիտի վերականգնի յուր անցյալ կուլտուրան կատարելու գործվող եվրոպական քաղաքակրթության պահանջներով: Թող հայ ինտելիգենցիան դավերով ապրի և (ոխակալությամբ) վարակվի, այնուամենայնիվ արվեստ, կուլտուրա և քաղաքակրթություն ստեղծող ժողովուրդը, աշխատանքը յուր ճակատին դրոշմած հայ ժողովրդի տքնող մասը միշտ էլ առաջ կերթա առանց լքելու պատմական այլ բոլոր արհամարհան-

րից, որոնց նմանները եկել անցել են, բայց չեն ծածկել հայ աշխատանքի արդյունքը՝ հայ արվեստը, որի փառավոր ներկայացուցիչն է ավերված Անին: Ձեմ հուսահատվում, հայ աշխատանքը գնահատվում է արդեն. դրան ապացույց ահա ձեզ գիտնական պ. Մառի անդուլ աշխատանքը: Պ. Մառի նման աշխատանքի մարդը մի ազգի որդի չէ, նա համայն մարդկությանն է և հայ ժողովրդի հարազատ սերն էլ է վաստակում: Թող երկար ապրի մարդկության այդ որդին...»

«Ղարաբաղ»-ի խմբագրող՝ Սիմեոն Տեր-Մինասյան Օր. Մառիամ Գալստյան

(Գիրք 2, Թ. 22)

29

28 հուլիսի 1909 թ.

Երբ (հուլիսի 26-ին), հեռվում առաջին անգամ հորիզոնի վրայ երևացին Անվո ավերակները՝ ինձ տիրապետեց մի հուզմունք, որը ես ոչ մի կերպ չէի կարողանում քացատրել: Երբ, ավելի ուշ, ես բախտ ունեցա գիտելու, ավելի մանրամասն, մեր նախնիքներից մեզ թողած ժառանգությունը և լսել հարգելի պրոֆեսոր Մառի բացատրությունները, միայն մի միտք, մի զգացմունք բեկովել էր իմ ուղեղիս և սրտիս մեջը:

Եթե, շնայած ամենաձախող անգամանքներին, մեր նախնիքը դեռ այդ խավար ժամանակներում ստեղծեցին Անին, մենք նրանց ժառանգները, այս լուսավոր ժամանակներում ընդունակ կլինե՞նք ստեղծելու նրա (անընթեհոնելի բառ):

Գրիգոր Գուրգենյանց²³

(Գիրք 2, Թ. 3)

30

12 սոստոսի 1910 թ.

Տյառն ողորմությամբ բախտ ունեցա տեսնել Անին՝ Բազրատունյաց փառաց ոստանը, որու ավերակները և անոնց յուրաքանչյուր քարը կխոսեն ամեն ճշմարիտ հայու սրտին և կզարթուցանեն հույժ վշտոտ հիշատակներ: Այս առթիվ ինձ համար պատիվ և ուրախություն եղավ տեսնել հայագետ և քնախույզ մեծ պրոֆեսոր պ. Մառ և ժիր ու պատվական ճարտարապետն պ. Թորոս Թորամանյանը, որոնց հաճելի տեսակցություն վայելեցի ու իրենց բացատրությունն լսեցի նվիրակա՛մ:

²³ Գրիգոր Զհանգիրի Գուրգենյան (1865—1937). ականավոր ինժեներ, մեծ ավանդ ունի դրած Սովետական Հայաստանի քիմիական արդյունաբերության գործում: Տիրապետում էր մի քանի եվրոպական լեզուներ:

²¹ Սուփրաս արքեպիսկոպոս Պարզյանց (1837—1914), ականավոր եկեղեցական և հասարակական գործիչ: Նրա միջոցներով և օժանդակությամբ է հրատարակվել Մաղաքիա արքեպիսկոպոս Սրբանյանի հանրահայտ «Ազգապատմության աշխատության Ա հատորը»:

²² Ստեփանոս Տեր-Սարգսյանց, Մոսկվայի Լազարյան ճեմարանի ներկարայա դաստիարակ և դասառու:

Անիի նկատմամբ: Մասնավոր բախտավորութիւն մէր նաև ինձ մոտ Ս. Էջմիածնի միաբաններն բազմաճումու պատմագետ, հնարաններն բազմաճումու պատմագետ, հնարանայ գիտնական Տ. Փարեգին վարդապետ Հովսեփյանի ընկերակցութիւնն էջմիածնէն մինչև Անի, որով ավերակները միասին այցելելի և անոնց պատմութիւնն ու բացատրութիւնը լսեցի նորին պատվական հայրութենէն: Այս այցելութիւնն առթիւ ճանցա Անիի վանահայր Տ. Միքայել վարդապետ Տ. Մինասյանը, որ բարի և հյուրասեր եկեղեցականի մը տպավորութիւն թողուց:

Պատրիարքական տեղապահ՝
Ս. Երուսաղեմի՝

Դանիել ծայրագոյն վարդապետ
Հակոբյան

(Գիրք 2, ք. 7)

31

24 Յունիսի 1811 ք.

22—24 Հունիսի 1911 թվի Անի ավերակներ օդապարիկ արեոստատով Կարսից պրակտիկայի՝ փորձնական աշխատանքի է եկել Կովկասի առաջին օդադնացների վաշտը: Վաշտը բաղկացած էր՝ հրամանատար փոխ-գնդապետ Իլլին, վաշտի ավագ սպանակապետան Խանան, վաշտի համհարզ, աշուտանտ պորուչիկ Սկրաբին, կրտսեր սպա պորուչիկ Փրիզորով, մեխանիկ Գուն, բժիշկ Յիցիկով և 106 զինվորներ: Պրոֆեսոր Մառը, նրա օգնականները և վանահայր Միքայելը սիրալիր ընդունեցին մեզ և թե՛ սպաներին, թե՛ զինվորներին տալիս էին մանրամասն բացատրութիւններ: Ամբողջ վաշտը հայտնում է նրանց փորին շնորհակալութիւն սիրալիր ընդունելութիւն համար:

Հունիսի 23-ին սպաները բարձրացան օդապարիկի վրա մինչև 400 մետր և լուսանկտրեցին Հայաստանի երբեմնի սքանչելի մայրաքաղաք Անիի ավերակները:

(Ստորագրութիւններ)

(Թարգմանութիւն ուստերենից)

(Գիրք 2, ք. 88)

32

18 Յունվորի 1918 ք.

1913 թ. Հունվարի 13-ին, երբ ես այցելեցի այս երբեմնի հայկական մեծ մայրաքաղաքը և այն, ինչ որ ես այստեղ տեսա, ինձ վրա, որպես զգալուն մարդու վրա, թողեցին ճշող և շմեցնող տպավորութիւն: Ես հիացած էի այն արվեստով, որին տիրապետել են մեր հայերը այն ժամանակ, երբ մեզ մոտ մշակութիւնը կանգնած էր ամենացածր մակարդակի վրա և այդ բոլորը խորտակված,

կործանված պատերազմների ու երկրաշարժների հետևանքներով: Ինչքան դժվար է ու ծանր է այդ բոլորը դիտել: Ցավում եմ, որ ես ընտրեցի անհաշող ժամանակ (ձմեռը), որպեսզի մանրազնին ուսումնասիրեի հարգելի պրոֆեսոր Մառի կատարած պեղումները, որին ի սրտե ցանկանում եմ մեծ հաշտութիւններ պեղելու նոր նյութեր, որոնք լինելու են մեզ և մեր ժառանգների համար թանկագին և սրբազան հուշարձաններ: Հուսով եմ, որ մի անգամ ես, բայց արդեն ամառը, իմ կրնեմատոգրաֆը հետս վերցրած կայցելեմ ավերակները, որպեսզի նկարահանեմ այն բոլորը, ինչ որ ձյան տակ էր և հնարավոր շեղով ոչ միայն նկարահանելու, այլ նույնիսկ դիտելու նորհուրդ եմ տալիս հնութիւն սիրահարներին այցելել այս ավերակները, իսկ մանավանդ մեզ՝ ուսններին: Զէ՛ որ այս պեղումները քիչ են դիտում հուշակավոր Պոմպեի պեղումներին: Ընդունելութիւնը այստեղ սիրալիր և հյուրասեր Տեր-Մինասյանց վարդապետի կողմից շատ սլով էր, որին ես շատ եմ պարտական և շնորհակալու ի սրտե ցանկանում եմ, որ տարվող պեղումները պսակվեն հաջողութեամբ և այստեղ գտնվող փոքր թանգարանը վերածվի փլվածքներից մաքրված քաղաք-թանգարանի:

Տրիգորիս Կոնստանտինովիչ
Վերիգո Դարովսկի
Մոսկվա

(Թարգմանութիւն ուստերենից)

(Գիրք 2, ք. 98)

33

22—28 Յունիսի 1918 ք.

Կարելի է նկարագրել ինչ որ տեսել եմ, բայց բառեր չկան, շատ թույլ, անզույն դուրս կգան այն զգացմունքները, ինչ որ վերապրեցի դիտելով Հայաստանի նախկին մայրաքաղաքը և Անիի թանգարանը: Ցավում եմ, որ ծնվել ենք 20-րդ դարում: Գնականում եմ, որ Մառը և իր աշխատակիցները պեղեն ավելի հետաքրքիր իրեր ու մասունքներ, որոնք է՛լ ավելի ցայտուն կերպով կարտացոլեն Հայաստանի բարգավաճման դարաշրջանը: Ի վերջո հայտնում եմ ծերունի վարդապետին անկեղծ շնորհակալութիւն սրտաբաց ընդունելութիւն համար:

Վլ. Սավիլև
Գեոսիմոն Տրիանտաֆիլով

1913 ք. 27—29 կազմակերպվող դուրստեսուական ցուցահանդեսի ղեկավար և աշխատակից:

Ալեքսանդրուպոլ
(Թարգմանութիւն ուստերենից)

(Գիրք 2, ք. 31)



ՊՐՈՖ. ԳՈԿՏ. ՎԼԱԴ ԲԸՆԸՑԵԱՆՈՒՆ
ԵՎ ՆՐԱ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1963 թվականի նոյեմբերի 8-ին, Բուխարեստում, վախճանվեց ռումինացի անվանի գիտնական, արևելագետ, նվիրված հայագետ և հայ ժողովրդի շերտ բարեկամ պրոֆ. գուկտ. Վլադ Բընըցեանուն:

ԲազմաՀմուտ գիտնականը ծնվել էր Ռումինիայի Տիմիշոարա քաղաքում, 1900 թվականի օգոստոսի 22-ին:

Ավարտելով Զերնովեցի համալսարանը, Բընըցեանուն մասնագիտական խոր գիտելիքներ է ձեռք բերել Փարիզում, Լոնդոնում և Դուբլինում (1924—1932): Նա ավարտել է նաև Փարիզի Արևելյան լեզուների ազգային վարժարանը (1928), Փարիզի Երազմուտի դպրոցը (1932) և Արևելյան դպրոցը (1932): 1923 թվականին նա ստացել է իրավաբանական գիտությունների դոկտորի, իսկ 1931 թվականին՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանները:

Իրեն լեզվաբան, Բընըցեանուն հմուտ էր բազմաթիվ հին ու նոր լեզուների, ինչպես սանսկրիտ, հայերեն, հունարեն, լատիներեն, հին պարսկերեն, կելտական լեզուներից դալերեն ու իռլանդերեն, հոլանդերեն, այբաներեն, սլավոնական լեզուներ, այդ թվում նաև ռուսերեն, եվրոպական նորագույն լեզուներ և այլն: Պրոֆ. Բընըցեանուն իր ստեղծագործական կյանքը նվիրելով հանգրձ հնդեվրոպական լեզվաբանությանը, ինչպես նաև հնագույն լեզուների և արևելքի ժողովուրդների մշակույթի պատմության ուսումնասիրությանը, անսահման սիրով ու մեծ նվիրվածությամբ զբաղվել է նաև հայագիտությանը:

Պրոֆ. Բընըցեանուի գիտական և մանկավարժական գործունեությունը ծաղկում ապրեց ատակապես Ռումինիայի տեղաբնակների հետո: Անսպառ եռանդի տեր գիտնականը երկար տարիներ շարունակ դասախոսել է Բուխարեստի պետական համալսարանում,

մանկավարժական ինստիտուտում: Նա եղել է ռումինական ակադեմիայի հնդեվրոպական լեզվաբանության սեկտորի վարիչ, ստեղծել է Ռումինիայի պատմա-բանասիրական գիտությունների արևելագիտական բաժանմունքը, հիմնադրել ու խմբագրել է լեզվաբանական և արևելագիտական բնույթի կարևոր հանդեսներ:

Պրոֆ. Վլադ Բընըցեանուի բազմաբովանդակ գիտական կյանքում կարևոր տեղ է զբաղեցրել հայագիտությունը: Փարիզում աշակերտելով և ապա գործակցելով Ֆրանսիացի մեծանուն հայագետներ Անտուան Մեյեի, Ֆրեդերիկ Մակլերի և Լուի Մարիեի, իսկ Ռումինիայում՝ ռումինացի նշանավոր գիտնական, հայագետ և հայասեր նիկոլա Յորգայի, Վլադ Բընըցեանուի մեջ զուգորդվեց բաշ հայագետի կողքին նաև հազվագյուտ հայասերը:

Ռումինիայի անցյալում եղել են նաև մի քանի հուշակավոր գիտնականներ, որոնք խոչ համակրությամբ պրպսել են մեր ժողովրդի պատմությունը, սակայն նրանցից ոչ մեկը քաջածանոթ չի եղել մեր հին ու նոր լեզուներին և բնականաբար չի կարողացել օգտվել հայ դասական մատենագրությունից, ինչպես այդ արել է պրոֆ. Բընըցեանուն: Բացի այդ, նրանցից ոչ ոք հայագիտության չի նվիրել իր ստեղծագործական կյանքի մի կարևոր մասը և մինչև իր վերջին շունչը չի ապրել հայեցի ջերմ սրտով, ինչպես պրոֆ. Բընըցեանուն:

Ռումինիայի պատմության մեջ Բընըցեանուն առաջին ռումինացի գիտնականն էր, որ դեռևս 1931 թվականին, իր իսկ նախաձեռնությամբ, համալսարանում սկսեց դասավանդել հայագիտական առարկաներ: Ավելի ուշ, դարձյալ պրոֆ. Բընըցեանուն էր, որ, ինչպես ռումինական ակադեմիայի պատմության ինստիտուտում, այնպես էլ մինչև

վերջերս Բուխարեստի պետական համալսարանի քանասիրական ֆակուլտետում, հետևանք իր հետզհետե վատթարացող առողջական վիճակին, մեծ նվիրվածությամբ շարունակում էր հայագիտական իր դասախոսությունները և ճիգ էր խնայում Թուրքիական ժողովրդական Հանրապետության մեջ նոր հայագետներ պատրաստելու համար։ Նա իր ուսանողներին հաղորդակից էր դարձնում սովետահայ հայագետների նորագույն նվաճումներին և նրանց դաստիարակում խորին հարգանքով դեպի հայ լեզվաբանության հակա Հրաշյա Աճառյանը և անհուն սիրով դեպի մեր ժողովուրդը։

Պրոֆ. Բընըցեանուն շուրջ 200 գիտական աշխատությունների հեղինակ է։ Նրա բազմաթիվ մենագրությունները, ուսումնասիրություններն ու հոդվածները լույս են տեսել Թուրքիայում և նրա սահմաններից դուրս՝ ուսմիներեն, ֆրանսերեն, հայերեն, անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, պարսկերեն և այլ լեզուներով։ Պրոֆ. Բընըցեանուի պատկանելի գիտական վաստակների շարքում գտնվում են բազմատեսակ գործեր նվիրված ուսմիական մատենագիտության և ձեռագրագիտության հարցերին, հետազոտություններ լատիներեն լեզվի քերականության վերաբերյալ, իուլանդական լեզվի և գալլիական քանասիրություն վերաբերյալ ուսումնասիրություն և քննադրերի հրատարակում։ Մի քանի ուսումնասիրություններ նվիրված են ին հունական անուններին։ Նա հրատարակել է Սուլշվա քաղաքի պատմական վայրերի ուղեցույց հատորը, սերույթներ Ալբանիայից ստվար հատորը, այժմ մամուլի տակ է հեղին նշանավոր քանաստեղծ Ռաբինգրանաթ Տագորին նվիրված ծավալուն աշխատությունը և այլն։

Պրոֆ. Վլադ Բընըցեանուի անձնավորությունն ու նրա գիտական բազմաբեղուն գործունեությունը մեծ դնահատանքի էին արժանացած ինչպես ուսմիական, այնպես էլ համաշխարհային գիտական հասարակայնությունների կողմից։ Նա բազմաթիվ գիտական ընկերությունների պատվավոր անդամ էր ընտրված։ Բընըցեանուն 1926 թվականին անդամ էր ընտրված Փարիզի լեզվաբանական ընկերության, իսկ 1930 թվականին՝ Լոնդոնի քնագրագիտական ընկերության և իուլանդական ընկերության։ 1948 թվականին նա ընտրվել էր Բուխարեստի լեզվաբանական ընկերության անդամ ու երկու անգամ էլ դարձել նույն ընկերության նախագահ տեղակալ։ 1956 թվականին Թուրքիայի արևելագետների ընկերության առաջին նախագահն էր, նրա հիմնադրումից սկսյալ, 1960 թվականին նա անգամ էր Բուխարեստի դասական ուսում-

նասիրությունների ընկերության և աֆրիկասիական լիզայի ղեկավար խորհրդի։ Նա անդամ էր ընտրված նաև Հարավ-արևելյան Եվրոպայի ուսումնասիրությունների ընկերությունը։

Պրոֆ. Բընըցեանուի գրչին պատկանող սովորաթիվ աշխատություններից շուրջ 100-ը հայագիտական գործեր են, նվիրված հայ դասական լեզվի, հայ ժողովրդի մշակույթի պատմության և ուսմիահայ գաղութի անցյալին։ Նրա արժեքավոր հայագիտական ուսումնասիրություններից հիշատակենք մի քանիսը. «Ընդարեն գերբայներով կաղված դարձվածքների հայերեն թարգմանությունը մենագրությունը (1937 թ., ֆրանսերեն), որն արժանացավ իր ուսուցչի և Եղնիկի բազմահմուտ թարգմանիչ Լուի Մարիեսի բարձր գնահատանքին, «Շայերը ուսմիական պատմության և կյանքի մեջ» (1938 թ., ուսմիերեն մենագրություն), «Ռարատական անանցները դասական հայերենում» (1960 թ., անգլերեն), «Շայ ժողովրդի ծագման մի քանի խնդիրներ» (1960 թ., ռուսերեն), «Ռարատական տեղանունները հայերենում» (1961 թ., գերմաներեն), «Շայական ծագում ունեցող բարձրաստիճան պաշտոնյաները Հին Մուղղվայում» (1962 թ., հայերեն), «Շայագիտության զարգացումը Հայաստանում, դեմոկրատական երկրներում և արտասահմանում» (1962—1963 թ. թ., հայերեն), «Արձեշույս ուսմանական տեղանվան չլուծված խնդիրը» (1959 թ., հայերեն), «Շայերը Բհհիստունի արձանագրության մեջ» (1958 թ., հայերեն և ֆրանսերեն), «Շայերը ուսմիական տեղանունների մեջ և հայկական ծագումով ուսմիական տեղանուններ» (ուսմիերեն) և շատ ուրիշներ։

Պրոֆ. Բընըցեանուն զբաղվել է նաև հայ գրականության և ընդհանրապես հայ մշակույթի պատմության վերաբերյալ հարցերով։ Նա հոդվածներով անդրադարձել է նաև հայ մեծ լուսավորիչ նաշատուր Արովյանի և հայ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի գործունեությանը։ Նա հայ մշակույթի խոշորագույն պրոպագանդիստ էր։ Պրոֆ. Բընըցեանուն, ամբողջ քառորդ դար, հայագիտական բովանդակալից ղեկուցումներով, մեր ժողովրդի հոգևոր գանձերին հաղորդակից դարձրեց ուսմիացի և հայ լայն հասարակայնությանը, այդպիսով խոշոր ավանդ մուծելով երկու ժողովուրդների բարեկամության էլ ապելի սերտացման գործում։ Նրա կարգացած ղեկուցումներից հիշատակենք միայն մի քանիսը. «Շայերը Թուրքիայում», «Շին Հայաստանի մշակույթը», «Մեծ դեմքեր հայ մշակույթի պատմության մեջ», «Շայ միջնադարյան քնարերգություն-

նրա, «Մենարոպ Մաշտոց», «Հովսեփ Օրբելի» և այլն:

Պրոֆ. Բընըցեանուն 1938—1947 թ. թ. Դիմնագրելու ու խմբագրել է «Revue des études indo-européennes» ֆրանսերեն լեզվաբանական կարևոր պարբերականը, ուր իրենց աշխատակցությունն են բերել եվրոպացի նշանավոր գիտնականներ, այդ թվում անվանի հայագետներ Ն. Ագոնցը, Պիգանին և ուրիշներ: Մեծ է նրա նրախտիքը Ռուսիայի պատմա-բանասիրական գիտությունների ընկերության արևելագիտական ուսումնասիրությունների բաժանմունքի և նրա 15 աշխատանքային խմբակների հիմնադրման և ղեկավարման գործում: Այդ խմբակներից առաջինը զբաղվում էր նաև դասական հայերենով, իսկ վեցերորդ խմբակը՝ հայ նոր դրականության և լեզվի հարցերով: Խմբակների շուրջ համախմբված անդամները լծված էին հրատարակության պատրաստելու մի շարք հայագիտական կարևոր նշանակություն ունեցող մենագրություններ: Իբրև Ռուսիայի արևելագետների բաժանմունքի դիրեկտոր, դարձյալ պրոֆ. Բընըցեանունին է ընկնում նույն բաժանմունքի պաշտոնաթերթը հանդիսացող «Studia et acta orientalia» հանդեսի հիմնադիրն ու առաջին ղեկավոր խմբագիրը հանդիսանալու պատիվը: Էդիտալ հանդեսի մինչև այժմ լույս տեսած 4 սուվար հատորները կարևոր ավանդ են հանդիսանում համաշխարհային արևելագիտության համար: Նվիրված հայագետը այս հանդեսում մեծ տեղ էր հատկացնում հայագիտությանը և սկսել էր նրա շուրջը համախմբել ոչ միայն Ռուսիայի, այլև Հայաստանի հայագետներից ոմանց: Այդ հանդեսում է, որ առաջին անգամ ի հայտ եկավ հայ արվեստին նվիրված ուշագրավ ուսումնասիրություններով պրոֆ. Բընըցեանունի կինը՝ տիկին Գլիա Բընըցեանուն:

Պրոֆ. Բընըցեանուն մեր ժողովրդի ու նրա վերածնվող հայրենիքի հազվագյուտ բարեկամն էր ու մնաց այդպիսին մինչև իր վերջին շունչը: Նա, լինելով ռումինացի, ապրում և ստեղծագործում էր ջերմ հայրենասիրության տեր հայի նման: Նրա հայագիտական ուսումնասիրությունները ոչ միայն հագեցված են շատ հարուստ փաստարկումներով, այլև նրանց մեջ կարմիր թելի նման անցնում է հայասիրության զգացմունքը: 1937 թվականին, երբ առաջին անգամ Բուխարեստի կարևոր սրահներից մեկում, հոծ բազմության ներկայության, պրոֆ. Բընըցեանուն ելույթ էր ունենում ռումինահայերի պատմության մասին, իր քաղաքի խոսքում հայերեն լեզվով ասում էր հետևյալը. «Վստահ եղեք, որ տասներկու տարի հայերն ու հայ լեզուն ու-

սումնասիրելի հետո, հաղորդակից դարձա հայոց պատմության վեհությունը, ուստի, լինելով հանդերձ ազգով ռումինացի, պիտի կարենամ յուսօր ձեզ խոսիլ այն միևնույն սիրով, որ հայ մը կկարողանա տածել իր հայրենիքի ու հայ ժողովուրդի անցյալի հանդեսը: Իր այս ասածը մի հավատամք էր նրա համար ու միշտ հավատարիմ մնաց դրան:

Պրոֆ. Բընըցեանուն ռումինահայ գաղութի անփոխարինելի բարեկամն էր և հայ-ռումինական կապերի մեծագույն ջատագովը: Վերջին տասնամյակներին, Ռուսիայի հայերի պատմության մեջ չի եղել որեւէ մշակութային կարևոր միջոցառում, որտեղ իր մասնակցությունը բերած չլիներ ռումինացի անվանի գիտնականը: Նա տարիներ շարունակ եղել է Բուխարեստի Ստեփան Շահումյանի անվան հայ մշակույթի տան կարևոր խորհրդատուներից մեկը: Նույն ժամանակ, իբրև սնորհյալն էր ռումինահայ շարքաթիվի խմբագրության անդամ, նրա հայագիտական բովանդակալից հոդվածաշարերը մեծ ժողովրդականություն էին վայելում և հաճախ արտատպվում էին նաև աշխարհում լույս տեսնող հայկական ռազմաթիվ թերթերում: Անզնահատելի են նրա ծառայությունները հայ ժողովրդի հոգևոր գանձերը ռումինացիների ծանոթացնելու գործում: Պրոֆ. Բընըցեանուն էր, որ ռումինական ակադեմիայից մինչև Բուխարեստի համալսարանը, ռումինացի երիտասարդներին հաղորդակից դարձրեց հայագիտությանը: Գարձյալ ինքն էր, որ մի քանի ռումինացի գիտնականների մեջ հետաքրքրություն ստեղծեց զբաղվելու մեր ժողովրդի մշակույթի և արվեստի պատմության հարցերով:

1960 թվականին, պրոֆ. Բընըցեանուն, Մոսկվայում զուգարված արևելագիտական համաշխարհային համաժողովին Ռուսիայի կողմից մասնակցելով և հայագիտական ուշագրավ ղեկուցումով հանդես գալուց հետո, հրավիրվեց այցելելու իր այնքան սիրելի Հայաստանը ու մոտիկից հաղորդակից եղավ մեռ հանրապետության մշակութային հիմնարկներին, գիտնականներին ու աշխատավոր արդկանց հայրենանվեր աշխատանքներին:

Պրոֆ. Բընըցեանուն վեց ղեկուցումներով հանդես եկավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի լեզվի և պատմության ինստիտուտներում, Մատենադարանում, Երևանի համալսարանում և էջմիածնի Հոգևոր ճեմարանում: Նրա կարդացած հայագիտական ուշագրավ ղեկուցումները գիտական հասարակայնության կողմից ընդունվեցին մեծ հետաքրքրությամբ: Հայաստանից ստացած իր տպավորությունները անջնջելի մնացին անվանի հայագետի ու մեծ հայասերի

սրտում: Ահա այդ տպավորութիւնների տակ էր, որ նա հետագայում պիտի գրեր. «Ծանայակ տարիներ զբաղեցա հայագիտութեամբ ու հայոց պատմութեամբ, բայց հիմա միայն ազնիւ լավ կրթութեամբ դանտնք, այսօրվան մարդիկը ճանչնալիս հետո: Եվ ահա այդ բոլորը ազիս վերջնականապէս կապեցին այս երկրին, անոր ժողովուրդին ու Երևանի հետ»: Մեր հայրենիքի ժողովումն ու Հայաստանը ողջ աշխարհի հայագիտութեան կենտրոն դառնալը խորապէս տպավորեցին իրեն. «Այս կտպավորեն Հայաստանի այնքան սքանչելի իրողութիւնները, որ նույնիսկ այսօր դարձած չեն զիս հուզելու», — գրում էր նա Հայաստանից վերադառնալուց ամիսներ հետո: Սիւնչ վերջ անքակտելի մնացին պրոֆ. Բընըցեանուի և Հայաստանի հայագիտական հիմնարկները և մեր հայտնի հայագետների միջև ստեղծված սերտ կապերը: Նա մի շարք արժեքավոր ուսումնասիրութիւններով իր աշխատակցութիւնը բերեց Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի «Պատմաբանասիրական հանդես»-ին, որի խմբագրական մարմնի անդամ էր ընտրված, և Մաշտոցի անվան Մատենադարանի «Բանբեր Մատենադարանի» ժողովածուին: Եւ այն ժամանակ պրոֆ. Բընըցեանուն հողվածներով աշխատակցում էր ինչպես Ռումինական ժողովրդական Հանրապետութեան, այնպես էլ դեմոկրատական երկրների և արտասահմանյան գիտական պարբերականներին և համաշխարհային գիտական հասարակայնութեան ուշագրութիւնը բեռնում էր դեպի Հայաստանում տարվող հայագիտական աշխատանքները:

Պրոֆ. Բընըցեանուն իր գործին նվիրված անձնազոհ գիտնական էր: Բավական է միայն հիշատակել այն փաստը, որ երբ անցյալ տարի Սինայայում գումարվեց Բալկանյան պատմաբանների միջազգային համաժողովը, նա տառապում էր հիվանդութեամբ, սակայն Յունեսկոյի կողմից իրեն վստահած լինելով ներկայացնելու հայագիտութիւնը, նա հիվանդանոցից անժամանակ դուրս գալով ներկայացավ համաժողովին և անվիճելի փաստերի հիման վրա ցույց տվեց հայերի խաղացած դերը ինչպես պալիկիյան ու թոնդրակիյան շարժումների դեպի Բալկանները և Արևմտյան Եվրոպա տարածվելու գործում, այնպես էլ Բալկաններում միջնադարյան քաղաքների կառուցման մեջ:

Անցյալ տարվա վերջին և այս տարվա սկզբին պրոֆ. Բընըցեանուն տպագրութեան էր հանձնելու իր հայագիտական ամենածա-

վալուե գործերը, որոնց վրա նա աշխատում էր տարիներ շարունակ: Այդ գործերն էին. «Հայերեն դասական լեզվի քերականութեան» (Ա և Բ հատորներ), «Հայկական դիցաբանութիւնն ու առասպելներ», «Հին Հայաստանի մշակութիւնն ու քաղաքակրթութիւնը» (400 էջ): Պատրաստել էր նաև հայ հնագրութեան վերաբերյալ արժանատի ասիրութիւն, ինչպես նաև պատմա-բանասիրական և լեզվաբանական մի շարք աշխատութիւններ:

Անցյալ տարվա նոյեմբերի 14-ին պրոֆ. Բընըցեանուն պատրաստվել էր ելույթ ունենալու Ռումինացի արևելագետների շրջանում իր իսկ նախաձեռնութեամբ կազմակերպված մեծանուն հայ բանաստեղծ Սայաթ-Նոպայի հորելայնական նիստին ու միջանի օր հետո անհուն ուրախութեամբ ուղևորվելու էր կրկին Հայաստան, ուր հրավիրված էր Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի կողմից, և պայ, այս տարվա սկզբին, գնալու էր Հնդկաստան, Ռումինիայի կողմից մասնակցելու այնտեղ գումարվելիք արևելագիտական համաշխարհային նոր համաժողովին: Սակայն անժամանակ մահը խանգարեց ամեն ինչ...:

Ինչքան հայագիտական ծրագրեր ուներ իր մտքում մեծանուն գիտնականը: Նրա մտասեբումներից մեկն էր նաև հայագիտական հանդեսի հիմնադրումն ու նրա շուրջը ինչպես արտասահմանի, այնպես էլ Հայաստանի գիտնականների համախմբումը:

Պրոֆ. Բընըցեանուի հուղարկավորութիւնը տեղի է ունեցել նոյեմբերի 10-ին, Ռումինացի և հայ խուռն բազմութեան ներկայութեան: Հանգուցյալի ընկերներից բազմաթիվ գիտնականներ են խոսել, զրվատելով մեծ գիտնականի պայծառ կերպարը և ողբալով նրա անփոխարինելի կորուստը: Պրոֆ. Բընըցեանուի վերջին ցանկութեամբ, նրա մարմինը հողին հանձնվեց Բուխարեստի հայկական գերեզմանոցում: Ռումինացի նշանավոր հայագետն ու հազվագյուտ հայագիրը մահից հետո իսկ ցանկացավ մնալ շրջապատված մեր պապերի աճյուններով:

Պրոֆ. Վլադ Բընըցեանուի հիշատակի հավերժացման լավագույն արտահայտութիւնը կլինի նրա բոլոր հայագիտական ուսումնասիրութիւնների մի ստվար հատորում հավաքվելն ու հրատարակվելը:

Պրոֆ. Վլադ Բընըցեանուի մահը մեծ կորուստ է հայագիտութեան և հայ Ռումինական եղբայրութեան դարավոր կապերի պատմութեան համար:

ԼԻԱԿԱՏԱՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈՖ. ՎԼԱԴ ԲԸՆԸՅԵԱՆՈՒԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱԵՆԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. „La traduction arménienne des tours particulières grecs“, Bucaresti, 1937, 153 p. («Հունարեն դերբայական դարձվածքների հայերեն թարգմանությունը»):

2. „Armenii în istoria și în viața românească“, Bucaresti, 1938, 57 p. («Հայերը օտարերկրյան պատմության և կյանքի մեջ»): (Այս գործի հայերեն և օտարերեն նախնական ամփոփումը տե՛ս «Պահակ», հաստատական շաբաթաթերթ, Բուխարեստ, 1937, № 88):

3. Posibilitatile de exprimare a participiului în armeană clasică, «Պահակ», Հայաստանյան շաբաթաթերթ, Բուխարեստ, 1937, հունվար, երկու համարում («Դերբայի արտահայտչական հնարավորությունները հայերեն դասական լեզվում»):

4. „Un jubileu cultural“, Revista „Ani“, 1938, № 3 Bucaresti, p. 61—65 («Մշակութային մի հոբելյան» «Հանդես ամսօրյա» հայագիտական պարբերականի հրատարակման հիսունամյակի առթիվ», զեկուցում, 1937 նոյեմբեր):

5. „Caleaua însoțitorilor Suceava (O descriere a mânăstirilor și bisericilor Bucovinei)“, 1938, 274 p. E. Knittel-ի հետ («Ուղեցույց Սուչավա գավառի (Բուկովինայի վանքերի և եկեղեցիների նկարագրություն)»):

6. „Necrolog: Nicolas Adontz“, „Revue des études indo-européennes“, IV, 1947, Bucaresti, p. 252—253 («Մանախոսական. Նիկողայոս Ադոնց»):

7. «Հայ գրական լեզվի միանականությունը», «Նոր կյանք», Բուխարեստ, 26 սեպտեմբերի 1954, № 38 (225), 3 հոկտեմբերի, № 39 (226), 10 հոկտեմբերի, № 40 (227):

8. «Կերպե Ասաքի, օտմեն մշակույթի օանվիրա մը (մահվան 85-ամյակին առթիվ)», «Նոր կյանք», 21 նոյեմբերի 1954, № 46 (233):

9. «Մ. Նալբանդյանի քաղաքական գործունեությունն», «Նոր կյանք», 12 դեկտեմբերի 1954, № 49 (236):

10. «Հայ մը հարեյունի ժողովրդական ապստամբության մը պարագույն», «Նոր կյանք», 6 փետրվարի 1955, № 26 (244):

11. «Առաջին տեղեկությունները Հայաստանի մասին և Պարթիի դեմ հայ ժողովուրդի ապստամբության ընկերային տնտեսական ներքին ծալքը», զեկուցման ամփոփում, «Նոր կյանք», 11 մարտի 1955, № 11 (249) և 18 մարտի 1955, № 12 (250):

12. «Հայ գրականության պարծանքը» (Խ. Արզվանի ձեռնարկի 150-ամյակի առթիվ), «Նոր կյանք», 11 նոյեմբերի 1955, № 46 (284):

13. «Հայկական ամենամին ձեռագիրը», «Նոր կյանք», 18 նոյեմբերի 1955, № 47 (285):

14. «Ողջույն Սովետական Հայաստանի 35-րդ տարեդարձին», «Նոր կյանք», 25 նոյեմբերի 1955, № 48 (286):

15. «Հայ Արշակունիներու ծագման հարցը», «Նոր կյանք», 20 հունվարի 1956, № 3 (294):

16. «Հին հայկական վկայություններ Մոլոտովի քաղաքներու մասին», «Նոր կյանք», 10 փետրվարի 1956, № 6 (297):

17. «Հին Հայաստանի մեջ Պուկարներու գաղթի կապակցությամբ», «Նոր կյանք», 1 հունիսի 1956, № 22 (313):

18. «Ջուրթա տե Արճեշի եպիսկոպոսական եկեղեցին հայ ճարտարագիտները», «Նոր կյանք», 26 հոկտեմբերի 1956, № 43 (334), 9 նոյեմբերի 1956, № 45 (336):

19. „Elementul ir mediotiv în armeană clasică“, „Materialele sesiunii științifice a Institutului Pedagogic“, Bucaresti, 1957, 17 p. («Իր կապակցությամբ չեզոք մասնիկը դասական հայերենում»):

20. „Activitatea scrierilor de studii orientale“, „Studii Revista de istorie, Academia RPR, Bucaresti, 1957, № 4, p. 216—218 («Արևելագիտական բաժանմունքի գործունեությունը»):

21. „Din activitatea în domeniul studiilor orientale“, „Studii Revista de istorie, Academia RPR, Bucaresti, 1957, № 6, p. 213—215 («Արևելագիտական ուսումնասիրությունների քննադատի գործունեությունը»):

22. Les Arméniens des inscriptions de Behistun“, „Studia et acta orientalia“, I, 1957, p. 65—81, Bucaresti, 1958 («Հայերը Բեհիստունի արձանագրության մեջ»):

23. La plus ancienne mention arménienne: à propos des Bulgars colonisés dans l'Arménie, „Studia et acta orientalia“, I, 1957, p. 354—356, Bucaresti, 1958 («Հայերեն հնագույն Ռիչատակությունը Հայաստանում հաստատված բուլղար գաղթականության մասին»):

24. «ՌԺՈ-ի արևելագետներու գործունեության սկզբնավորությունը», «Նոր կյանք», 20 դեկտեմբերի 1957, № 50 (303): Նույնը՝ «Լրաբեր», Նյու-Յորք, 18 մարտի 1958, № 104:

25. «ՌԺՈ-ի արևելագետներու գործունեությունը», «Նոր կյանք», 1 հունվարի 1958, № 1 (394): Նույնը՝ «Լրաբեր», Նյու-Յորք, 20 մարտի 1958, № 105:

26. «Հին հայերու տոմարը», «Նոր կյանք», 13 հունիսի 1958, № 24 (416):

27. «Սիրեք հայկական վարժարանը», «Նոր կյանք», 8 օգոստոսի 1958, № 32 (424):

28. «Ընկերային բախումներու հարցը Մխիթար Գոշի մոտ», հեղինակ Չ. Ղևորիկյան (գրախոսություն), «Նոր կյանք», 15 օգոստոսի 1958, № 33 (425):

29. «Հայկական անվանակոչումները օտարական տեղանուններու մեջ (հայերու ներկայությունը փաստող տվյալներ)», «Նոր կյանք», 12 դեկտեմբերի 1958, № 441, 26 դեկտեմբերի 1958, № 443 և 2 հունվարի 1959, № 1 (444):

30. «Հայկական տեղանուններու վերաբերյալ նոր խնդիրներ Մոլոտովի տեղանուններուն մեջ», «Նոր կյանք», 24 հուլիսի 1959, № 30 (473):

31. «Հայկական տեղանուններ Մուսրենիո մեջ». «Նոր կյանք», 28 օգոստոսի 1959, № 35 (478), 4 սեպտեմբերի 1959, № 36 (479), 11 սեպտեմբերի 1959, № 37 (480):

32. «Արճեշուք» ուսմանական տեղանվան չլուծված խնդիրը», «Նոր կյանք», 9 հոկտեմբերի 1959, № 41 (484), 18 հոկտեմբերի 1959, № 42 (485), 23 հոկտեմբերի 1959, № 43 (486):

33. «Հին ծեփագիրներու նոր հայտնաբերումներ Սոփեանական Հայաստանի մեջ», «Նոր կյանք», 27 նոյեմբերի 1959, № 48 (491):

34. «R. Tagore in Armenian translation, The Visva-Charat, Quarterly, Santiniketan West-Badia, 1959 («Հ. Տագորը հայերեն թարգմանված):

35. Sufixe urartice in armenia clasica, „Studii s cercetări lingvistice“, 1960, № 1, Bucuresti, p. 73—101 («Ուրարտական ածանցները-դասական հայերենում»), օուսերեն և ֆրանսերեն ամփոփումներով:

36. „Armenii in toponomia romineasca si toponomice romineesti de origine armenoa“, „Studii si cercetări lingvistice“, 1960, № 2, Bucuresti, p. 201—217 («Հայերը օւսմանական տեղագրության մեջ և հայկական ծագումով օւսմանական տեղանուններ»), օուսերեն և ֆրանսերեն ամփոփումներով:

37. „Terminologia arborilor in limba armeneană“, „Studii si cercetări lingvistice, omagiu lui Al. Graur cu prilejul implinirii a 89 de ani“, 1960, № 3, p. 359—375 («Ծառերի տերմինները հայերեն լեզվում»), օուսերեն և ֆրանսերեն ամփոփումներով:

38. «Արևելագետներու 25-րդ միջազգային համագումարը», «Նոր կյանք», 2 սեպտեմբերի 1960, № 36 (531), էջ 2, 9 սեպտեմբերի 1960, № 37 (532), էջ 2, 16 սեպտեմբերի 1960, № 38 (533), էջ 4:

39. «Արևելագիտության Մոսկվայի համագումարին կարևորությունը», «Նոր կյանք», 7 հոկտեմբերի 1960, № 41 (536), էջ 2:

40. «Cel de al XIV-lea congres al orientalistilor», „Steana“, Cluj, 1960, № 11, p. 97—100 («Արևելագետների 25-րդ համագումարը»):

41. „Callabouga, leponyme armeno-tatar“, „Studia et acta orientalia“, III, Bucarest, 1960—1961, p. 191—196 («Կալաբուղա» հայ-թաթարական տեղանուն):

42. L. S. Chaciklan, „XV dari hayeren jeragter yisatakaranner“, II, Erevan, 1958, „Studia et acta orientalia“, III, 1960—1961, p. 227—228. (Լ. Ս. Խաչիկյան, «ԾԵ դարի հայերեն ծեփագրերի Ռիշատակարաններ», Բ, Երևան, 1958 (գրախոսություն):

43. A. S. Anasian, a) „История Хотинской войны Воинвеса Кавказского“ (Histoire de la guerre de Hotin, d'après Joannes de Kamenetz), publié dans Patma-banastirakan (Haykakan SSR Gilu'plunneri Akademia), Bulletin historique et philologique de l'Académie des Sciences de la RSS Arménienne, 1958, № 2, pp. 258—286.

b) „Haykakan ahhurner Byzandlayl mastn“ (Sources

arméniennes concernant la chute de Constantinople), Erevan, 1957, éditions de l'Académie des Sciences, 149 p.

c) „Haykakan matenagit'oun V—XVIII D.“ (Bibliologie arménienne du V-e au XVIII-e siècles), vol. 1, Erevan, 1959, contenant les noms depuis A jusqu'à Arak'el Salazoreci, XCV p. et 1228 colonnes. Edité par l'Académie des sciences de la RSS Arménienne, „Studia et acta orientalia“, III, Bucarest, 1960—1961, pp. 229—230. (Լ. Ս. Անասյան, «Հովհաննես Կամենիցյանի ևստինի պատերազմը...» «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի մասին...» «Հայկական մատենագիտություն Ե—ԺԸ դ. դ.» (գրախոսություն):

44. «Հրաչյա Աճառյան (ծննդյան 85-ամյակն առթիվ)», «Նոր կյանք», 24 մարտի 1961, № 12 (560), էջ 2, 31 մարտի 1961, № 13 (561), էջ 2: Նույնը նաև «Հասոաց», Փարիզ, 29 ապրիլի, 3 մայիսի, 4 հունիսի 1961:

45. «Տգավորություններ Սոփեանական Հայաստանն, «Երևան», «Նոր կյանք», 7 ապրիլի 1961, № 14 (562), էջ 2:

46. «Մանենդարանը, Հայաստանի գիտական բարձր հաստատություն մը», «Նոր կյանք», 21 ապրիլի 1961, № 16 (564), էջ 2: Նաև «Հասոաց» հունիս 1961:

47. «Սոփեանական Հայաստանի գիտություններու ակադեմիայի գիտական ինստիտուտները գործունեությունը. Լեզվաբանական ինստիտուտը», «Նոր կյանք», 5 մայիսի 1961, № 18 (566), էջ 5: Նաև «Հասոաց», հունիս 1961:

48. «Հայաստանի գիտություններու ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտական գործունեությունը», «Նոր կյանք», 12 մայիսի 1961, № 19 (567), էջ 3: Նաև «Լրագրեր», 7 հոկտեմբերի 1961:

49. «Կերստին հանդիպում Ռուբեն Զարյանի հետ», «Նոր կյանք», 29 դեկտեմբերի 1961, № 52 (600), էջ 5:

50. „Probleme ale etnogenezei armenae“, „Studii si cercetări lingvistice“, № 3, 1961, p. 375—397 («Հայերի ցեղագրության հարցեր»), օուսերեն և ֆրանսերեն ամփոփումներով:

51. „Некоторые вопросы этногенеза армян“, «Գաղմա-բանասիրական հանդես», 1961, № 2, էջ 91—123 («Հայ ժողովրդի ծագման մի քանի խնդիրներ»), հայերեն ամփոփումով:

52. „Observatii in legatura cu termenii pentru arborii in limba armenae“, „Studii si cercetări lingvistice“, 1961, № 4, p. 515—540 («Գիտությունների հայերեն լեզվում բառերի տերմինների վերաբերյալ»), օուսերեն և ֆրանսերեն ամփոփումներով:

53. „Urartean suffixes in classic armenian“, „Revue de linguistique“, Bucarest, VI, 1961, № 1, p. 95—117 («Ուրարտական ածանցները դասական հայերենում»):

54. „Beitrag zum Studium der Urartischen Ortsnamen in der Armenischen Toponymie“, «Հանդես Ամստրյա», քաղաքիկ համար, 1961, № 10—12, էջ 1051—1078

«Փորձ ուրարտական տեղանունների ուսումնասիրության» հայկական տեղագրության մեջ»:

55. «Հայկական Ռերոսական առաջները և Աստու-
ցի Դավիթ դուցզաներությունը», *Ռեդինակ՝ Սունիթր*
Ջուսար Զաթրըճի, «Նոր կյանք», 5 Ռունվարի 1962, № 1
(601), էջ 3 (գրախոսություն):

56. «Ռուրեն Զարյան Ռայ մեծ դերասան Պետրոս
Ադամյանի մասին», «Նոր կյանք», 9 փետրվարի 1962,
№ 6 (606), էջ 3, 16 փետրվարի 1962, № 7 (607),
էջ 3 (գրախոսություն):

57. «Հայագիտության ներկա դրությունը. Հայագիտու-
թյան ուսումնասիրությունը եվրոպական երկիրներու
մեջ», «Նոր կյանք», 13 ապրիլի 1962, № 15 (615),
էջ 2:

58. «Հայագիտության ներկա դրությունը. Հայագիտու-
թյունը ժողովրդական դեմոկրացիայի երկիրներուն
մեջ», «Նոր կյանք», 20 ապրիլի 1962, № 16 (616),
էջ 2, 11 մայիսի 1962, № 19 (619), էջ 2 (ԼեՌաստան,
Ռուլդարիա, Զեխուլովակիա, Հունգարիա և Գերմանական
Դեմոկրատական Հանրապետություն):

59. «Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը»,
«Նոր կյանք», 1 Ռունիսի 1962, № 22 (622), էջ 2:

60. «Mesrob Masrot», «Flacăra», Bucuresti, 1962,
№ 32 («Մեսրոպ Մաշտոց»):

61. «Bedros Adamian, un eminent interpret al lui
Shakespeare», «Lucafăru», 15 aprilie 1962 («Պետ-
րոս Ադամյան, Շեքսպիրի Ռոյական մեկնաբանողը»):

62. Ruben Zarian, «Petros Adamian», vol. I—II, Ere-
van, «Studi si cercetări de istoria artei», 1962, № 1, p.
413—417 (Ռուրեն Զարյան, «Պետրոս Ադամյան»,
Ռատոր 1—2, Երևան (գրախոսություն):

63. «25-ամյա ուսուցչական գործունեություն Ռե-
դարյան փիլիսոփայության քննադատին մեջ», «Նոր
կյանք», 6 Ռայիսի 1962, № 27 (627), էջ 2 (Ռովյարեն-
սի Ռամայարանի Ռունարեն լեզվի ու գրականության
և Ռունական փիլիսոփայության պրոֆեսոր Արամ Ֆրեն-
կյանի մասին):

64. «Սովետական կատարվածական լեզվաբանությու-
նը և անոր փայլուն մեկ ներկայացուցիչ՝ Ս. Կ. Ես-
Ռոյան», «Նոր կյանք», 20 Ռուլիսի 1962, № 29 (629),
էջ 2:

65. «Հայերը Պայքանյան միջնադարյան քաղաքներու
պագագրական կազմության մեջ», (Պայքանյան քաղա-
քակրության մասին Ունեսցոյի Ռովանավորությամբ
Սինայայի մեջ միջպագային խորհրդակցության ընթաց-
քին պրոֆ. Վլադ Բընըցանուի միջամտությունը պրոֆ.
Ն. Թոտորֆիի (Սոֆիա) «Պայքանյան միջնադարյան
քաղաքներու այդպագրական կազմությունը» գեկուցման
առթիվ), «Նոր կյանք», 3 օգոստոսի 1962, № 31 (631),
էջ 3:

66. «Պուլկարական բուզովությունը և անոր պզդեցու-
թյունը Արեմտյան Եվրոպայի մեջ» (Պրոֆ. Վ. Բընը-
ցանուի երկրորդ միջամտությունը պրոֆ. Դիմիտր Ան-
կելոֆի (Սոֆիա) ներկայացրած գեկուցումին Սինայայի
Պայքանյան քաղաքակրության միջպագային խորհրդակ-
ցությանը), «Նոր կյանք», 10 օգոստոսի 1962, № 32
(632), էջ 3:

67. «Հայագիտությունը արեմտյան երկիրներուն մեջ.
Ռուսիա», «Նոր կյանք», 22 օգոստոսի 1962, № 33
(633), էջ 4:

68. «Հայագիտությունը արեմտյան երկիրներուն մեջ.
Ֆրանսա», «Նոր կյանք», 31 օգոստոսի 1962, № 34
(634), էջ 2:

69. «Հայագիտությունը արեմտյան երկիրներուն մեջ.
Ավստրիա և Ֆեդերալ Գերմանիա», «Նոր կյանք», 7
սեպտեմբերի 1962, № 35 (635), էջ 2:

70. «Հայագիտությունը արեմտյան երկիրներու մեջ.
Պեճիցա, Անգլիա, Նորվեգիա», «Նոր կյանք», 14 սեպ-
տեմբերի 1962, № 36 (636), էջ 2:

71. «Հայագիտությունը արեմտյան երկիրներու մեջ.
Ամերիկայի Միացյալ ՆաՌանցներ», «Նոր կյանք», 21
սեպտեմբերի 1962, № 37 (637), էջ 2:

72. «Հայագիտությունը Արաքական Արևելքի և Հնդկա-
տանի մեջ», «Նոր կյանք», 12 Ռոկտեմբերի 1962, № 40
(640), էջ 2 (Ալմիր, Եգիպտոս, Լիբանան, Սիրիա, Կ. Պո-
լիս), 19 Ռեկտեմբերի 1962, № 41 (641), էջ 2 (Եգիպ-
տոս, Երուսաղեմ, Հնդկաստան):

73. «Հայագիտական աշխատանքները Հունգարիո մեջ
(Ռայագեա դոկտ. Է. Եյուցի աշխատություններու կա-
զակցությամբ)», «Նոր կյանք», 23 նոյեմբերի 1962,
№ 46 (646), էջ 2:

74. «Լիտերատուրնյա Արմենիա» (1962, Ռամար
7—10), «Նոր կյանք», 30 նոյեմբերի 1962, № 47 (647),
էջ 3 (գրախոսություն):

75. «Армянские колонии на террит. рии Руми-
нии по данным Румынской топонимии», «Պատկա-
րանասիրական Ռադես», 1962, № 1 (16), էջ 171—191
(«Ռումինիայի Ռայ գաղութները ըստ օւմինական
տեղանունների տվյալների»):

76. «Հայկական ծագում ունեցող բարձրաստիճան պաշ-
տուկաները Ռին Մոլդովայում», «Բանքեր Մատենադարա-
նի», № 6, Երևան, 1962, էջ 269—291, օտսերեն և ֆրան-
սերեն ամփոփումներով:

77. «Problema lexicului arătic din limba armeană»
«Studi si cercetări lingvistice», 1962, № 2, p. 257—
279 («Ռարարտական բառապաշարի Ռարքը Ռայերեն
լեզվում»), ռուսերեն և ֆրանսերեն ամփոփումներով:

78. «Polisinteza sau încorporarea în unele limbi
inde-europene», «Studi si cercetări lingvistice», 1962,
№ 4, p. 497—518 («ԲազմաՌամագրությունը և մի-
ձուլումը Ռեդեվրոպական մի քանի լեզուներում»),
ռուսերեն և ֆրանսերեն ամփոփումներով:

79. «Դիլինի պեղումները», «Նոր կյանք», 22 մարտի
1963, № 12 (663), էջ 2:

80. «Հրաշյա Աճատյան (մահվան 10-րդ տարելիցին
առթիվ)», «Նոր կյանք», 12 ապրիլի 1963, № 15 (666),
էջ 2:

81. «Ռումեն և Ռայ մշակութային կապեր», «Նոր
կյանք», 19 ապրիլի 1963, № 16 (667), էջ 2:

82. «Հայագիտությունը Սովետական Հայաստանի մեջ»,
«Նոր կյանք», 3 մայիսի 1963, № 18 (669), էջ 2,
10 մայիսի 1963, № 19 (670), էջ 2, 17 մայիսի 1963,
№ 20 (671), էջ 2:

83. «Հայագիտությունը Սովետական Հայաստանի մեջ. բարձրագիտությունը», «Նոր կյանք», 24 մայիսի 1963, № 21 (672), էջ 2:
84. «Հայագիտությունը Սովետական Հայաստանի մեջ. վիճաբանություններ Ռայերենի թաղամայնականության մասին», «Նոր կյանք», 31 մայիսի 1963, № 22 (673), էջ 2:
85. «Հայագիտությունը Սովետական Հայաստանի մեջ. գրարարի ուսումնասիրությունը», «Նոր կյանք», 7 հունիսի 1963, № 23 (674), էջ 2: Նույնը՝ «Արև», Կահիրե, 16 օգոստոսի 1963, № 13 563, էջ 3:
86. «Հայագիտությունը Սովետական Հայաստանի մեջ. ժամանակակից Ռայերենի ուսումնասիրությունը», «Նոր կյանք», 14 հունիսի 1963, № 24 (675), էջ 2:
87. «Մատենադարանը, Ռին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը», «Նոր կյանք», 28 հունիսի 1963, № 26 (677), էջ 2 և 5 հուլիսի 1963, № 27 (678), էջ 2:
88. «Արաբ գրողներ միջնադարյան Հայաստանի մասին», «Նոր կյանք», 19 հուլիսի 1963, № 29 (680), էջ 2:
89. Gevork Beğl. Djaboklan, „Lezvašanoŭ'ean paimetion (istoria lingvistic)“, vol. I—II, Erevan, 1960—1962, „Studii si cercetări lingvistice“, 1963, № 1, p. 143—145 (Գևորգ Զառուկյան, «Լեզվաբանության պատմություն», հատ. I—2, Երևան, 1960—1962 (գրախոսություն)):
90. Հոդվածներ դասական Ռայերենի և արդի գրականության, սանսկրիտերենի, հնդկերենի և պարսկերենի վերաբերյալ, „Dicționarul enciclopedic“ հատ. I, 1963 (Հանրագիտարանի Ա հատորում):
91. „Urme ale morfologiei si sintaxei urartice in armena clasica“, „Studii si cercetări lingvistice“ 1963, № 2, p. 219—231 («Ուրարտերենի ձևաբանության և շարահյուսության հետքերը դասական Ռայերենում»), օտսերեն և ֆրանսերեն ամփոփումներով:
92. „Contribuții noi privitoare la problema unei limbi „protolindice in Asia Anterioara“, „Studii si cercetări lingvistice“, 1963, № 3, p. 391—408 («Նորը Առաջավոր Ասիայի «նախահնդկական» լեզվի հարցում»):
93. «Բաները Մատենադարանի»-ի 5-րդ հատորը», «Նոր կյանք», 26 հուլիսի 1963, № 30 (681), էջ 2 (գրախոսություն):
94. «Բաները Մատենադարանի»-ի հատոր 6», «Նոր կյանք», 16 օգոստոսի 1963, № 33 (690), էջ 2 (գրախոսություն):

Անտիպ գործեր

95. „Cultura si civilizatia Armeniei antice“ («Հին Հայաստանի մշակույթն ու թաղաքակրթությունը», օտսերեն):

96. „Albania de paleografe armena“ («Հայ հնագրության ալբում», օտսերեն):

97. „Gramatica limbii armenie clasice, partea I-a: Fonetica si morfologia, partea II-a: Sintaxa.“ («Հայերեն դասական լեզվի քերականություն, Ա մաս՝ Հղնչյունաբանություն և ձևաբանություն, Բ մաս՝ Երբարհյուսություն», օտսերեն):

98. „Miturile si legende armenie“, («Հայկական դիցաբանությունն ու առասպելները», օտսերեն):

99. «Հայագիտությունը արևմտյան երկրներում» (օտսերեն):

100. «Հայերի ծագման մի քանի հարցեր» (տառերն զեկուցում կարդացված Մոսկվայում գումարված արեվելագետների միջազգային 25-րդ համագումարում: Պետք է հրատարակվի մի շարք լեզուներով նույն համագումարի նյութերի ժողովածուում):

101. Դ. Ա. Մելիքիշվիլի, „Урартские клинообразные надписи“, Москва, 1960 г. (գրախոսություն, ֆրանսերեն):

102. «Հայագիտությունը Հունգարիայում դոկտ. Էդ. Եյուգ», (ֆրանսերեն):

103. «Հայերը օտսերենի երկրների սոցիալական և մշակութային կյանքում» (ֆրանսերեն):


104. «Հնդկաստանի մեծ լեզվաբանը՝ Սուեիտի Կուսար Զատրջի» (ֆրանսերեն):

105. «Ուրարտերենի սուբստրատի (ենթաշերտ) ազդեցությունը Ռայերեն լեզվի կառուցվածքում» (օտսերեն):

106. «Էրզրումի կառուցվածքը Ռայերենում» (օտսերեն):

107. „Neues zu den „Vorindischen“ Sprachresten Vorderasiens“ («Նորը Առաջավոր Ասիայի «նախահնդկական» լեզվի հարցում»), ուղարկված „Die Sprache“ հանդեսին, Կիննա:

108. „Urartu und Armenien, Sprachbeziehungen in Vorderasien“ («Ուրարտուն և Հայաստանը. լեզվական հարաբերությունները Առաջավոր Ասիայում»), ուղարկված „Das Altertum“ հանդեսին, Բեռլին:





ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՅՐԱԳՈՒԹՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՒՇՅԱՆ

Ս Փ Յ ՈՒ Ռ Բ ՈՒ Մ

Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ի Կ Ո Չ Ը

«Մե՛ն՛ վստահ ե՛մ, որ համայն հայ
հավատացյալ ժողովուրդը պիտի լսե
Մեր խոսքը»:

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

Մեր երիտասարդ, գործույնյա ու մանա-
վանդ շինարար Հայրապետի սրտառուչ կո-
չեն մեքերված այս հատվածն է, որ այս
անգամ մեր խորհրդածության նյութը կդարձ-
նենք, զայն քարձր նկատողությունը հանձնե-
լով ո՛չ միայն զաղոգթիս ընթերցասեր դա-
սուն, այլև բոլոր անոնց, որոնց կհասնի մեր
ձայնը այս ամսագրիս միջոցով:

Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետը,
եր Երուսաղեմեն մեր զաղութին ուղղած կո-
չովը, վստահություն կհայտնե, թե եր սրտին
ամենաշատ խոսող այդ կանյիքն պիտի
չգտնվի հարազատ զավակ մը, որ լանսա:

Ի՞նչ է այդ կոչը, և ի՞նչ՝ հավատացյալ-
հերուս անսալիքը:

Կոչը, կոթողակերտ ու պատմական փա-
ռավոր անցյալովը մեծ նշանակություն ու-
նեցող և սակայն անզգուշության պարագա-
յին փլուզումի դատապարտված Ս. Հարու-
թյան Տաճարի վերանորոգումի հարցին ըն-
դատաբերն է: Հարց մը, որ ամբողջ քաղա-
քակիրթ ազգերու ուշադրությունը գրաված է:

Ուրիշ խոսքով, վեհափառի կոչը, Քրիստո-
սի Ս. Գերեզմանը և անոր կյանքի վերջին
հանգրվանին հետ կապ ունեցող սրբատեղի-
ները իր մեջը պարագրկող հսկա Տաճարը
(որ 1927-ին, իր նմանը շունեցող երկրաշար-
ժին հետևանքով վնասներու ենթարկված և
երեսունվեց տարիներու ընթացքին ընդալ-
նած ճեղքերովը փլելու վտանգին դատա-
պարտված է), աղատելու համար օգնության
ձեռք մը երկարելու առաջարկն է:

Երուսաղեմով, ու մանավանդ Հայ Երու-
սաղեմով հպարտանալու շա՛տ մը պատճառ-
ներ ունինք: Անոնք, որոնք գտնված են հոն,
արդեն գիտեն, թե ի՞նչ կնշանակե Հայ Երու-
սաղեմ, իսկ անոնք, որոնք չեն եղած, կուզան
բսելու, թե եթե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը
մեր ազգին բարախոզ սիրան է, Երուսաղեմը՝
առողջ քոֆն է: Ս. Էջմիածենն վերջ եթե կա
տեղ մը, որով կրնա հպարտանալ հայորդի
մը, այդ Հայ Երուսաղեմն է, ո՛չ միայն իր
պատմական, ու՛նչանակալից հանգամանքին,
այլև Ս. Էջմիածնի շափ ունեցած հնություն

և մանավանդ ազգին մատուցած ծառայու-
թյան համար:

Առիթը չէ, և ոչ ալ տեղը, այդ ծառայու-
թյան ծախքերը բանալու: Միայն այսքանը
բանեք, որ Հայ Երուսաղեմը, իր ափ մը «զին-
վորայւ միարանութիւն»-ովք, —ինչպես կսի-
րեր որակել լուսահողի թորգոմ պատրիար-
քը. — գարնրու փոթորիկներուն ու նախճիր-
ներուն դեմ կուրծք ցցած և նահատակներու
շարան մըն ալ տված է, պահել ու պաշտ-
պանելու համար այն սրբատեղիները, ուրկե
օր մը Հիսուս անցավ, ապրեցավ, հրաշա-
գործեց, քարոզեց, խաչվեցավ, հարլավ և
հաղթական երկինք համարածավ:

Հինգ հարյուր միլիոն կաթոլիկութեան և
գրեթէ նույնքան մըն ալ օրթոդոքսութեան
համահավասար և տեղ-տեղ քիչ մըն ալ
ազնի իրավունքներ ունեցող հինգ միլիոնը
շանցող հայութեան համար, մե՞ծ պատիվ
մըն է, որ ինքնին կուգա փաստելու, թե Ս.
էջմիածնէն անմիջապէս վերջ մեր հպարտու-
թեան առարկան Հայ Երուսաղեմն է եղած և
պիտի շարունակե ըլլալ:

Ասոր համար է, որ մեր վեհափառ Հայ-
րապետը հանձն առավ անգամ մը ևս ձգել իր
Գահը և գալ անձամբ նախագահել այն ժո-
ղովին, որուն նպատակն է վերականգնել հա-
մայն քրիստոնեութեան և մասնավորաբար
մեր պարծանքը եղող Քրիստոսի Ս. Հարու-
թեան Տաճարը, որուն մեջ գտնվող հիսունի
մոտ հուշավայրերու մեջ համահավասար ի-
րավունք ունինք մենք, հույնին և լատինին
հետ:

Զէ՛ եղած տարի մը, որ Ս. Հարութեան
Տաճարի մեջ մեր ունեցած իրավունքները
պաշտպանելու համար, մեր նախահայրերը
արյուն թափած և կամ ծեծ կերած ըլլան,
ըլլան անոնք բարձրաստիճան վեղարավոր-
ներ, ըլլան համե՛ստ միաբաններ կամ աշ-
խատավորներ: Ու այս, տակավին մինչև այ-
սօր, հակառակ անոր, որ քաղաքակրթված
գարու մեջ կապրինք և անոր պեսպես շնորհք-
ները կվայելենք:

Մեր պապերը, գերագնահատելով Հայ Երու-
սաղեմին արժեքը, շատ անգամ քայելով
ուխտի գացած են և անսակարկ պարպած
իրենց քսակները, որպեսզի միշտ պլպլան
Քրիստոսի Ս. Գերեզմանին և Գլխազրի Ավագ
Խորանին կանթեղները և իր սփոփարար
թաթը երկարե համայն հայութեան վրա:

Մենք անոնց հարազատ զավակներն ենք ու
անոնց ունեցած քարոյական հարստութիւն-
ներուն ժառանգորդները: Եկած է պահը, որ
գործնականապէս ցույց տանք այդ ժառան-
գութեան տերն ու տիրականը ըլլալնիս:

Վեհափառ Հայրապետը գիտակից և խղճա-
միտ հայորդիներուս սիրտը կրախե, ար-
թընցնելու համար մեր խղճին մեջ ներհող
պապենական այդ ոգին և վստահութիւն
կհայտնե, թե աշխարհի վրա պիտի լզտնվի
հայորդի մը, որ պիտի շուգե բանալ իր քա-
կը, ըստ կարելիույն, հասնելու համար ստի-
պողական այն պահանջքին, որ Ս. Հարու-
թեան Տաճարի նորոգութիւնն է, ինչպէս
ըսինք, աղատելու համար զայն կանխահաս
փուլում:

Նորին Սրբազնութիւն պատվիրակ սրբա-
զան հայրը երբ ժամանե, վստահ ենք, որ
ազնի ընդարձակ կերպով վերահասու պիտի
ղարձնե զմեզ այս հարցին առնչութեամբ:
Մինչ այդ, մենք նախակարապետի դերը
ստանձնած, այժմէն կուգանք բնիւ ընդհան-
րապէս մեր ընթերցողներուն և մասնավորա-
պէս արժանտինահայ մերազնեից, որ ան-
սան վեհափառ Հայրապետի սրտառուչ կո-
չին և այժմէն սկսի պատրաստովի լայնորեն
աշակցելու այն հանգանակութեան, որ մեր
արժանտինահայերուս բաժինը պիտի ըլլա
սրբազան այս մեծ գործին մեջ:

Հայ Երուսաղեմը փոթորիկներու և արհա-
վիրքներու մեջն անցնելով հասած է մեզի:
Այսօր լկան ո՛չ այդ փոթորիկները և ոչ
սպառնալիքները, որոնք միլիոններ արժեցին
ազգին: Հայ Երուսաղեմը պետք է կանգուն
մնա. ու կանգուն կմնա այն ատեն միայն,
երբ ուզենք. —ինչպէս միշտ ուղած են մեր
նախնիք. — անկեղծութեամբ ձեռք երկարել:

Պատրաստենք այդ երկարելիք ձեռքը ու
մոտենանք այս հարցին գիտակցաբար այն-
պէս, ինչպէս մոտեցավ Կրուպենկյան հաս-
տատութիւնը, իր վրա առնելով ըլլալիք
ժախքին մեկ երրորդ բաժինը:

Երկու երրորդ բաժինը կմնա, որուն թերեւս
մեկ տասներորդը մեզի պիտի վիճակվի հո-
գալ: Հողա՛նք, քանի որ կարժե՛ Հայ Երուսա-
ղեմը և արժանի՛ է այդ հոգածութեան:

(Խմբագրակոմ «Հայ կեդրոն»-ի,
1963 դեկտեմբեր, № 12):





Մ Ա Յ Ր Կ Ա Յ Ր Ե Ն Ւ Բ ՈՒ Մ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆՆԻՔԻՑ

Վիլյա Շեքսպիրի ծննդյան 400-ամյակը.— Երևանի արվեստասեր հասարակայնությունը լայնորեն նշեց Վիլյամ Շեքսպիրի ծննդյան 400-ամյակը: Նշանակալից տարեթվի առթիվ տեղի ունեցան երեկույթներ, հանդեսներ, շեքսպիրագիտության նվիրված գիտական ժողովներ:

Երևանի օպերային թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո, որին ներկա էին մեծ թվով արվեստագետներ, գրականագետներ, գիտության գործիչներ: Հանձարեղ թատերագրի ու տեղծագործության մասին հանդես եկան գրականագետ Հովհաննես Մամիկոնյանը, քանաստեղծ Նաիրի Ջարյանը, արվեստի տեսաբան Ռուբեն Ջորյանը, ժողովրդական դերասան Գուրգեն Ջանիբեկյանը: Ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյանը արտասանեց հատվածներ Օթելլոյի մենախոսություններից:

Հետաքրքիր անցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի և Հայաստանի թատերական ընկերության համատեղ հրավիրած գիտական նստաշրջանը: Կարդացվեցին պեկուցումներ «Շեքսպիրը և նուստանյանը», «Հայ բեմանկարիչները Շեքսպիրի մեկնաբան», «Շեքսպիրը հայ բեմի վրա» թեմաներով:

Շեքսպիրի գործերը առաջին անգամ հայ բեմի վրա խաղացվել են ավելի քան 100 տարի առաջ: Այդ ժամանակամիջոցում շուրջ 40 հայ դերասաններ Օթելլոյի դերն են կատարել, 23 հոգի՝ Համլետի և այլն: «Համլետ»-ը ունեցել է 8 տարբեր թարգմանություն, «Օթելլո»-ն՝ 7, «Մակբեթ»-ը՝ 6 և այլն: Շեքսպիրի գործերի բեմադրության և բազմաբանակ տպագրության տեսակետից Հայաստանը երկրորդ տեղն է գրավում Առվեստական Միության մեջ, Ռուսաստանյան ֆեդերացիայից հետո:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը.— Վերջերս տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, նվիրված 1963 թվականի արդյունքներին և 1964 թվականի անելիքներին: Ընդհանուր ժողովը երբեմանակ

խոսքով բացեց գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը:

Ակադեմիան ներկայիս ունի 25 տարբեր գիտահետազոտական հաստատություններ՝ ինստիտուտներ, սեկտորներ, լաբորատորիաներ, կոնալ կայաններ և այլն: Անցյալ ապրիլի գիտահետազոտական ինստիտուտները կազմված են եղել ավելի քան 80 տարբեր ընտյալի գիտական թեմաների ուսումնասիրությամբ և մշակմամբ: Նոր հաջողություններ են ձեռք բերվել մեխանիկայի և մաթեմատիկայի ընագավառներում: Ուրախալի արդյունքների են հասել աստրոֆիզիկոսները, առավել բարձրացնելով Բյուրականի աստղադիտարանի հռչակը:

Լրիվ բեռնվածությամբ են աշխատում ակադեմիայի քիմիաբանական հաստատությունները: Նրանք ուսումնասիրում են քիմիայի կարգաքան հետ կապված բազմաթիվ խնդիրներ, որպեսզի ձեռք բերված արդյունքները գործի դրվեն ժողովրդական տնտեսության մեջ:

Ժողովում խոսվեց նաև հասարակական գիտությունների կայացման մասին: Ցանկություն հայտնվեց, որ արևելագիտության և փիլիսոփայության սեկտորների հիման վրա ստեղծվեն երկու տարբեր ինստիտուտներ:

Հայ արվեստի վարպետները Մոսկվայում.— Մոսկվայում տեղի ունեցավ հայ արվեստի յուրատեսակ մի ստուգաբան: Եուրջ 300 արվեստագետներ՝ երգիչներ, նվագողներ, պարողներ, ամբողջ երկու շաբաթ հանդես եկան մոսկվացիների առաջ ստեղծագործական հաջվածությամբ: Համերգները տեղի էին ունենում գլխավորապես կրեմլում, համագումարների սրահում: Հայ արվեստագետները հանդես եկան նաև Առևտրային խոշոր գործարաններում և Չարկոսկու անվան համերգային մեծ դիլիժանում:

Համերգներին մասնակցում էին Երևանի օպերային թատրոնի մենբեդիչները, բալետի դերասաններն ու դերասանուհիները, սիմֆոնիկ նվագախումբը, Հարկական ֆիլմարտիկայի երգի-պարի վաստակավոր անսամբլը, պարի

պետական անեամբը, Հայաստանի էստրադային նվագախումբը, Երևանի Չայկովսկու անվան երաժշտական ուսումնարանի պատանի ջութակահարների անեամբը, առանձին երաժիշտներ, կոմպոզիտորներ:

Բոլոր համերգներն անցան բացառիկ հաջողությամբ: Մոտեճացիները մեծ խանրավառությամբ ընդունեցին հայ արվեստագետներին: Կրեմլում երանց տվեցին 6 համերգ, որոնց ներկա եղան ավելի քան 38 000 մոսկվացիները: Եզրափակիչ համերգին ներկա են եղել սովետական կառավարության անդամները Ն. Ա. Խրուշչովի գլխավորությամբ:

Արժեքավոր աշխատություն.— Հայաստանի գիտությունների ակադեմիան վերջերս լույս է ընծայել «Ենտզենոլոգիայի և օնկոլոգիայի ինստիտուտի գիտական աշխատությունների 7-րդ հատորը, ակադեմիկոս Վ. Յանառջյանի խմբագրությամբ:

Այս արժեքավոր գիրքը նվիրված է արդի բժշկության երեք կարևոր ճյուղերին՝ «Ենտզենոլոգիային, օադիոքիթոլոգիային և օնկոլոգիային»: Գրքում լրատաբանված են բուժման հարցերը: Զարդակ ուսուցչների գոյացման և բուժման հարցերը: Մեծ տեղ է հատկացված ուսուցչների այնտեղամայան և ճառագայթային, ջիմխատերապետիկ ու վիրահատման միջոցով բուժում կատարելու եղանակներին:

Հատորը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ճշմիայն նեղ մասնագետների, այլև բժշկական քննազավառի աշխատողների լայն խավերի համար:

Առողջապահության հարցերին նվիրված սեմինար.— Երևանում տեղի ունեցավ ՄԱԿ-ին առընթեր գործող առողջապահության միջազգային կազմակերպության սեմինար, որին մասնակցում էին Անգլիայի, Արգենտինայի, Զվիցերիայի, ԳՅՌ-ի, Հարավսլավիայի, Հունաստանի, Եպպոլիայի, Իսրայելի, Ցեյլոնի, Ուզբեկստանի և այլ երկրների բժշկական աշխատողներ: Նրանք ծանոթացան առողջապահության գործի դրվածքին Հայաստանում և հատկապես հետաքրքրվեցին Երևանի բժշկական ինստիտուտի ուսանողական գիտական ընկերության գործունեությամբ:

Ընկերություն ունի 500 ուսանող անդամներ, որոնց թվում կան Իրանցի, Իրանից, Սիրիայից, Լիբանանից և յատիմական Ամերիկայից եկած ուսանողներ, որոնք սովորում են նույն ինստիտուտում: Ընկերության անդամներն սցառվում են գիտական աշխատանքով Հայաստանի տարբեր հիվանդանոցներում: Դա օգնում է նրանց ավելի լավ լուրացնելու ժամանակակից բժշկության նվաճումները:

Առողջապահության միջազգային կազմակերպության պատասխանատու աշխատողներից մեկի՝ Ջեյմս Վայնի (Ջվիցերիա) Ցայտարարությամբ Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի և Երևանի ուսանողական գիտական ընկերությունների աշխատանքի փորձը կարելի է օգտագործել աշխարհի շատ երկրներում:

Հայ մասնագետները արտասահմանյան երկրներում, — Հայաստանի արդյունաբերությունը ամեն տարի զգալի քանակությամբ բարդ ու կատարելագործված վաճառյալ տեսակի մեքենաներ ու սարքեր է արտահանում դեպի արտասահմանյան պահպան երկրներ: Այս փաստը պերճախոս վկայություն է ոչ միայն մեր երկրի վերելքի,

այլև հայ մարդկանց գիտական ու տեխնիկական առաջադիմության:

Ահա և մեկ ուրիշ փաստ այդ երևույթը հաստատող: Ներկայիս զգալի թվով հայ ինժեներներ և մասնագետներ, սովետական մյուս ժողովուրդների մասնագետների հետ, հաջողությամբ գործում են Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրներում, անմիջակաճորեն մասնակցելով այդ երկրներում սովետական Միության օգնությամբ կառուցվող խոշոր գործարանների և էլեկտրակայանների շինարարության:

Մի խումբ հայ ինժեներներ աշխատում են Աստուսի ջրամբարի, ջրաէլեկտրակայանի և ամբարտակի կառուցման վրա: Գանայի (Աֆրիկա) Հանրապետության մեջ կառուցվում է խոշոր ջրաէլեկտրակայան՝ տարեկան մեկ միլիարդ կիլովատ-ժամ կարողությամբ: Այդ էլեկտրակայանի գլխավոր նախագիծը կապել է Երևանի Գուրգեն Ղազարյանը, որը միաժամանակ ՄԱԿ-ի խորհրդակցան է: Այժմ «Հայհիդրոնախագիծ» ինստիտուտը մշակում է այդ կայանի նախագծի մանրամասնությունները:

հաղադրում կառուցվում է էլեկտրատեխնիկական մի գործարան, որը լինելու է խոշորագույն արդյունաբերական ձեռնարկությունը Մերձավոր Արևելքում: Այն կարտադրի ջարժական էլեկտրակայաններ, ջարժիչներ և այլ մեքենաներ: Այդ գործարանի շինարարության գլխավոր ինժեներն է Երևանի հիդրոպոմպների գործարանի նախկին դիրեկտոր Սուրեն Սամադյանը, իրեն հետ ունենալով հայաստանցի մի խումբ մասնագետներ: Հայաստանի ձեռնարկությունները այս գործարանի կառուցման համար մատակարարում են անհրաժեշտ սարքավորանք:

Աֆղանստանի խոշորագույն ջրաէլեկտրակայանի ջինարարությանը գործուն մասնակցություն են ցույց տալիս մի խումբ հայ ինժեներներ, որոնք իրենց վարպետությունը ձեռք են բերել Անան-Հրաչյանի ջրաէլեկտրակայանների կառուցման ժամանակ:

Սոմալիում հայ մասնագետներն օգնում են տեղացիներին կառուցելու օադիոկայաններ, հիվանդանոցներ, դպրոցներ, պանրագործարաններ:

Երևանի բարեկարգումը.— Ընթացիկ տարում զգալի աշխատանքներ են կատարվելու Երևանի հետագա բարեկարգման համար: Բնակարանային հսկայական շինարարության հետ կուզենթաց, մեծ ուշադրություն է նվիրվելու հասարակական-կենցաղային սպասարկման և բարեկարգման գործին:

հացվելու են մի շարք նոր փողոցներ: Վերակառուցվելու և լայնացվելու են Արովյան ու Տերյան փողոցների որոշ հատվածները: Արովյան փողոցը կդառնա պուրակ-պրտավայր: Կշարունակվի Հրապրանի ձորի հետագա բարեկարգումը, կկառուցվեն նոր ջրավազաններ ու սահմաններ, կկանաչապատվեն ձորալճակները, կառվապատվեն նոր ուղիներ, կշարունակվի Երևանի լճի կառուցումը:

Երթևեկությունը բարելավվելու համար ջազաքը կստանա լրացուցիչ էլեկտրաքաղցի 20 նոր վագոն, 20 տրոլեյբուս, 93 ավտոբուս և 265 տաքսի ավտոմեքենա:

Այժմ Երևանի ջրմուղը մեկ վայրկյանում քաղաքին տալիս է 2 600 լիտր խմելու մաքուր ջուր: Դա չի բավարարում: Այս տարի կսկսվի մի նոր ջրմուղի կառու-

ցումը: Այն սկիզբ է առնելու Կապույտ լճից և մեկ վայրկյանում տալու է 3 000 յիսր ջուր, որն ամբողջովին օգտագործվելու է գործարանային կարիքների համար, իսկ դրա փոխարեն գործարաններին տրվող մաշուր ջուրը ամբողջովին հատկացվելու է բնակչության կարիքներին: Նոր ջրմուղի կառուցման վրա կծախսվի շուրջ 6 000 000 օուբլի:

Պատեխոնատ Անանի ափին.— Մայիսի սկզբներին սկսեց գործել գեղատեսիլ Անանի ափին կառուցված պատեխոնատը՝ օճատորան-հյուրանոցը: Այն գտնվում է թերակղզու և Ծովագլուղի միջև ընկած հատվածում, դեպի Թբիլիսի տանող խճուղու ելքին, բարձրաբերձ ժայռի կատարին: Չորս հարկանի այս գեղեցիկ շենքը, որը կոչվում է «Ալթամար», ունի հարմարավետ ննջա-սենյակներ, ջջեղ օճատորան, հանգստի և զանազան խաղերի սենյակներ:

Ենթը պատկանում է տուրիստական ընկերության: Այստեղ կհանգուտանան Սովետական Միության տարբեր հանրապետություններից և արտասահմանից ժամանած տուրիստներ:

Առաջիկա տարիներին նախատեսվում է Անանի ափերին կառուցել մի շարք այսպիսի հյուրանոց-օճատորաններ:

Նոր կառուցումներ.— 1964 թվականի ընթացքում Երևանում կառուցվելիք բազմաթիվ բնակարանային, գործարանային, կենցաղային և հասարակական շենքերից բացի, կառուցվելու են դպրոցական չորս նոր շենքեր 4 000 աշակերտների համար, դպրոցական 6 շենքեր վերակառուցվելու և ընդարձակվելու են, կառուցվելու են մանկապարտեզի 7 նոր շենքեր: Կառուցվելու են 2 նոր երիտանդաոցներ և ընդարձակվելու են նոսր 2 այլ հիվանդանոցների շենքերը:

Աջնանը ավարտվելու է Սուեդուկյանի անվան դրամատիկական թատրոնի նոր շենքի կառուցումը: Այն կունենա 1 000 տեղանոց սրահ, հարակից բոլոր հարմարություններով:

Հետաքրքրական թվեր.— Սովետական իշխանության տարիներին՝ 1921-ից մինչև 1963 թվականը ներառյալ, Հայաստանում հրատարակվել է 27 150 անուն գիրք՝ գեղարվեստական, գիտական, գյուղատնտեսական, ցաղա-

քական և այլ բնույթի, շուրջ 156 000 000 ընդհանուր տպաքանակով: Միայն գեղարվեստական գրքերը (ինքնուրույն և թարգմանական) կազմում են 4 872 անուն՝ ավելի քան 31 000 000 տպաքանակով:

Մինչև սովետական կարգերի հաստատումը, Հայաստանի ներկա տարածքներում կար 13 գրադարան 9 000 կտոր գրքերով: Այժմ մեր հանրապետության մեջ գործում են գիտատեխնիկական, ուսումնական, հանրային և արհմիութենական 2 000 գրադարաններ, որոնք ունեն շուրջ 19 000 000 գիրք:

Ֆրանսահայ նկարիչների ցուցահանդես.— Վերջերս Հայաստանի պետական պատկերասրահում բացվեց ֆրանսահայ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես: Ներկայացված էին տարբեր ժանրի շուրջ 70 կտավներ, որոնք բոլորն էլ Հայաստան էին ուղարկված իբրև նվեր պետական պատկերասրահին:

Յուզադրված գործերի մեջ կային Գառզուի (Գառնիկ Զուլումյան), Գ. Ժերմյանի, Բերժոյի, Մ. Զիրուկյանի, Ե. Եաքանյանի, Բ. Բողոսյանի, Ա. Մանդիլյանի, Լ. Թորոսյանի և ուրիշների կտավները:

Ցուցահանդեսն արժանացավ ջերմ ընդունելության և մեծ հետաքրքրությամբ էր դիտվում այցելուների կողմից:

Ամերիկահայ դիրիժորը Երևանում.— Մայիսի 9-ին, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, հանդես եկավ ամերիկահայ հայտնի դիրիժոր Հայկ Յաղջյանը: Նա ղեկավարում էր ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը: Ծրագրի մեջ մտնում էին Հալոյի, Բրամսի և ամերիկահայ ժամանակակից կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի ստեղծագործություններից: Համերգն անցավ մեծ հաջողությամբ: Երևանի երաժշտաժողովուրդը ջերմ ընդունելություն ցույց տվեց դիրիժորին:

Հայկ Յաղջյանը ԱՄՆ-ում ճանաչված և սիրված երաժիշտ է: 14 տարեկանից նա նվիրվել է երաժշտության: Հետագային արժանացել է մի շարք մրցանակների, որոնցից նշանավորը դիրիժորների միջազգային մրցանակն է՝ ստացված Անգլիայում: Նա հիմնել և 5 տարի ղեկավարել է Ֆրեզնոյի սիմֆոնիկ նվագախումբը: Հ. Յաղջյանը համերգներով հանդես է եկել ԱՄՆ-ի և Կանադայի մի շարք քաղաքներում և ներկայումս ղեկավարն է Պիտսպուրդի սիմֆոնիկ նվագախմբի:

